AZG NEW SHABAT 1.QXD 19/07/2017 22:12 Page 1


# Ազգ

Azg

21 ՀՈՒԼԻՍ 2017 ՈՒՐԲԱԹ 28(5476)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## Շնորհավորագիր՝ Բակո Սահակյանին

Հարգելի՛ պարոն Բակո Սահակյան

Ռամկավար Ազատական կուսակցության Կենտրոնական վարչությունը եւ Գերագույն խորհուրդը սրտանց շնորհավորում են Ձեզ՝ Արցախի Հանրապետության Նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ:

Համոզված ենք, որ Ձեր ղեկավարությամբ Արցախի Հանրապետությունում շարունակվելու է տնտեսական, քաղաքական եւ գիտամշակութային առաջընթացը: Վստահ ենք նաեւ, որ Ձեր պաշտոնավարման նոր ժամանակահատվածում եւս հայկական երկու պետությունների եւ սփյուռքի տնտեսական ու հոգեւոր սերտ փոխգործակցությունը շարունակվելու է եւ էլ ավելի է ամրապնդվելու:

Շնորհավորելով եւ մաղթելով Ձեզ քաջառողջություն, ուժ ու կորով, վստահ ենք, որ մեկնարկած ծրագրերը եւ նախանշված աշխատանքները բարեհաջող ավարտի կհասցնեք՝ ի շահ Արցախի եւ համայն հայության բարօրության, որի համար պատրաստակամ ենք շարունակելու մեր օժանդակությունը:

**ՌԱԿ Կենտրոնական վարչություն**
**ՌԱԿ Գերագույն խորհուրդ**

*ՕՐԵՐԻ ՀԵՏ*

## Ծաղկեպսակի փոխարեն...

**Հայտնի իրականություն է, որ հայերս մեռելասեր ազգ ենք եղել եւ կանք: Դրա գրավոր առաջին վկայությունը բերում է Պատմահայր Խորենացին իր «Պատմութիւն հայոց» գրքում: Հղում կատարելով Արիստոն պատմիչին՝ Պատմահայրը նկարագրում է Արտաշես աշխարհակալ թագավորի թաղումն իր ամբողջական շքեղությամբ, նրա սիրելի կանանց, հարճերի ու մտերիմ ծառաների ինքնասպանությամբ (Պատմահայրը գործածում է «կամաւոր մահունք» արտահայտությունը), ոսկյա դագաղը, բեհեզյա կահույքն ու անկողինը, ադամանդակուռ թագն ու թանկարժեք զգեստները, ոսկե զենքն ու զրահը, կարծես պատերազմի գնացող զինավառ զորքն ու պալատականների ու նախարարների կառքերը, սեւազգեստ եղերամայրերն ու սգացող բազմությունները, որոնցից շատերն իրենց գցում էին գերեզմանափոսի մեջ: Պատմահայրն այստեղ օգտագործում է հատկանշական մի նախադասություն, որը բնորոշում է նաեւ այսօրվա մեր իրականությունը՝ «որպիսի՜ շուք բազմադիմիս արարին առ ի պատիւ դիոյն», որի մոտավոր թարգմանությունը կլինի՝ «ինչպիսի՜ բազմատեսակ պատիվներ տվեցին դիակին»:**

**Մեր Պատմահայրը չի քննադատում, չի ընդվզում ավելորդ ու կործանիչ այդ բոլոր ճոխությունների դեմ. նրա նպատակն այստեղ այլ է՝ ցույց տալ Ք.ա. 189-160 թթ.ին գահակալած թագավորի նկատմամբ ժողովրդի սերն ու հարգանքը:**

**Միակ ընդվզողը լինում է, ինչպես ծանոթ է պատմության դասագրքերից, Արտաշեսի գահաժառանգ որդին՝ Արտավազդը, որին մեր պատմիչները, ներառյալ Պատմահայրը, բնավ չեն համակրում, քանի որ, թեեւ իրատես եւ ողջախոհ՝ բայց անիծյալ մարդ էր նա, անիծված՝ մեռնող կամ արդեն մեռած հոր կողմից: Խոսքը ուղղելով դագաղում պառկած հորը՝ Արտավազդն ասում է. «Մինչ դու գնացեր, եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞րպէս թագաւորեմ»: Այսինքն՝ «Մինչ դու գնացիր եւ ողջ երկիրը տարար քո հետ, ավերակների վրա ես ի՞նչպէս թագավորեմ»: Եվ հայրը անիծում է որդուն, եւ անեծքը կատարվում է. Արտավազդը Մասիսի լանջերին որս անելիս՝ իր ձիով գլորվում է վիհը եւ անհետ կորչում, անշուշտ «չարքերի» օգնությամբ:**

**Ըստ երեւույթին, հայրակա՞ն այդ անեծքն է պատճառը, որ հայերիս մեջ մեռելի ու դիակի պաշտամունքը, եւ դրա հետ կապված ամեն ինչ՝ տարատեսակ ճոխ հուղարկավորություններ, թաղումներ, հոգեհանգիստներ, քելեխ-հոգեճաշ-ճաշկերույթներ, ինքնահոր (ըստ ոմանց՝ պետք է լինի էգնահոր), յոթնօրյակ, քառասունք, տարելից եւ, ավելի մոտ ժամանակներում, մահարձան, մահաքանդակ, բազալտե ցանկապատ, փողերախումբ եւ, դեպի մեր օրերը, «յաշիկ» Մերսեդեսների սեւ շարասյուն՝ թարթող լույսերով, ծաղկեպսակ, օղի, քաղցրավենիք եւ մնացած՝ իբր ծեսեր, ադաթներ եւ այլ ավելորդություններ քննադատելը տաբու է դարձել: Դարերի ընթացքում նույնիսկ մեր Ազգային եկեղեցուն չի հաջողվել, բացի զսպվածության մի քանի նորմերից, վերացնել այդ տաբուն, քրիստոնեական մոտեցումներն ու ըմբռնումները արմատավորել այս հարցում, մասնավորապես Հայաստանում: Անգամ Սովետի համահարթեցնող գլանին չի հաջողվել շատ բան փոխել, եւ տաբուն ընդհանրապես հանդուրժվել է:**

**Մեռելապաշտությունը շարունակվում է այսօր էլ, հետզհետե ձեռք բերելով նորանոր դրսեւորումներ՝ հետզհետե ավելի զեխ եւ այլանդակ, որոնց դեմ պայքարելը մեծ ուժեր է պահանջում ու երկար ժամանակ:**

**Սակայն կարելի է գեթ մեկ հարցում անմիջական բեկում մտցնել, որի գեղեցիկ ու տպավորիչ օրինակը վերջերս տվեց Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության այժմ հանգուցյալ նախագահ, ռեժիսոր Ռուբեն Գեւորգյանցի ընտանիքը՝ իրենց հարազատի կտակի համաձայն «ծաղկեպսակի փոխարեն» նվիրատվությունները կենտրոնացնելով հայոց բանակի զոհված եւ վիրավոր զինվորների ընտանիքների օգնության հիմնադրամում: Պետք է արմատավորվի այդ բարի սովորությունը, որը հանգուցյալ հարազատի հիշատակը հարգելու լավագույն ձեւերից մեկն է: Այո, ծաղկեպսակի փոխարեն, որը արժի 15 հազար դրամից մինչեւ 100 հազար դրամ, որը պարզապես ցուցամոլական ժեստ է՝ մի քանի օրից աղբավայր թափվելու սահմանված, կարելի է զոհված զինվորների ընտանիքներին ու վիրավոր մարտիկներին իսկական օգնություն ցուցաբերել: Եվ ոչ միայն նրանց: Սփյուռքահայ մեր բազմաթիվ համայնքներում նաեւ նման նվիրատվություններով են կազմակերպված պահվում մեր դպրոցները, մանկատները, ծերանոցները, բուժհիմնարկներն ու մամուլը:**

**Օրինակները պետք է վարակիչ լինեն:**

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Ամառային սրացումներ




Մենք նույնպես, ինչպես շատ ուրիշներ, քաղաքական չէինք համարում **Արա Բաբլոյանի** նշանակումը Ազգային ժողովի նախագահի՝ խիստ քաղաքական պաշտոնում, նկատի ունենալով, որ առողջապահության ոլորտի ներկայացուցիչը կդժվարանա քաղաքական կամ դիվանագիտական նրբին իրավիճակներում կողմնորոշվել: Որոշ այդպիսի դրսեւորումներ Ազգային ժողովի առաջին նիստերը վարելիս, իրոք, եղան: Անգամ տեղեկություններ կային, թե ինքը՝ Բաբլոյանը իր տեղում չի զգում իրեն ու կուզենար հրաժարվել պաշտոնից: Բայց տեսեք՝ շատերիս կարծիքով ԱԺ ապաքաղաքական նախագահը վերջին ժամանակների ամենաքաղաքական եւ որպես պետության ներկայացուցիչ՝ պետականության տեսակետից ամենաարժանավոր պատասխանն է տվել Ռուսաստանի Պետական Դումայի նախագահ **Վյաչեսլավ Վոլոդինին**: Վերջինս, իր իսկ խոսքով՝ «ռազմավարական ու հուսալի գործընկեր» Հայաստանին, անկախ պետություններ Ռուսաստանի եւ Հայաստանի հարաբերությունների քսանհինգամյակի առիթով հավանաբար, օտար երկրների վարորդական իրավունքներով աշխատելն արգելող օրենքի վերաբերյալ պատասխանի մեջ առաջարկել էր ռուսերենն օրենքով պետական լեզու ամրագրել Հայաստանում, որ խնդիրը լուծվի: Հայ վարորդները ռուսերեն կիմանան, եւ վարորդական իրավունքի հարցն էլ ինքնաբերաբար կլուծվի: Մեր Բաբլոյանն էլ, առանց ավելորդ դիվանագիտության ու անկեղծ պատասխանել էր, թե մեր երկրի օրակարգում ռուսերենը որպես պետական լեզու ամրագրելու հարց չկա, առանց դրա էլ բոլոր դպրոցներում ռուսերեն անցնում են:

Վստահ կարելի է պնդել, որ դիվանագիտությանը խորթ տիրապետողին ու ԱԺ նախագահի պաշտոնում երկար թրծվածին նրա փորձը կխանգարեր այդպես ուղիղ եւ ըստ էության պատասխանել: Այս դեպքում նա պատասխանել է այնպես, ինչպես մտածել է, եւ ինչպես մեր պետությանն է հարիր: Երբեմն, այո, մեր պաշտոնյաները պետք է համարձակություն ունենան իրերն իրենց անուններով կոչել, այլապես դիվանագիտությունը դիմացինը երբեմն սխալ է ընկալում: Եթե Բաբլոյանն ուրիշ ոչինչ չանի՝ այսուհետ նրան կհիշեն որպես Հայաստանի պետականության ամենակարեւոր ատրիբուտներից մեկը՝ հայոց լեզուն պաշտպանող Ազգային ժողովի նախագահի, քանի որ այս միջադեպը, համոզված ենք, ե՛ւ ռուսական կողմում, ե՛ւ հայկական կողմում տարբեր առիթներով մեջբերվելու է: Ասենք, որ հարցն ամեն դեպքում կլուծվի՝ ԵՏՄ տնտեսական հանձնաժողովը դիմել է Ռուսաստանին, որպեսզի վարորդական իրավունքների հարցում բացառություն արվի ԵՏՄ անդամ երկրների համար:

Սակայն Հայաստանում այս միջադեպը հանրային մակարդակով բավական քննարկվեց, անգամ որոշ զայրացածներ առաջարկում էին ԵԱՏՄ-ից դուրս գալու գործընթաց սկսել, քանի որ մեր երկրի արժանապատվությանը կպչող այսպիսի առաջարկը բարձր պաշտոնյայի կողմից՝ կարող է երկրորդվել նաեւ այլ նվաստացուցիչ առաջարկներով, իսկ ԵԱՏՄ-ի տնտեսական օգուտներն առանձնապես մեր մաշկի վրա չենք զգացել:

⇨7

## Խոսում են նորից, վարվում են հին կերպ

**Փոխվում են կառավարությունները, նախարարները, հնչում են զարմանազան խոստումներ, բայց մեր կյանքի բովանդակությունը, իշխանության հետ հարաբերվելու որակը, մարդկանց առնչվող պաշտոնեական գործելակերպը չի փոխվում բոլորովին:**

**Մեր կյանքում ոչինչ չփոխվելու հիանալի օրինակ է «Ֆիրդուսի- 33» թաղամասի իրացման հետ կապված երկարամյա պատմությունը: Այն, ինչ պատահել էր մյուս իրացվող գոտիների բնակիչների հետ՝ բողոքի ցույցեր, ոստիկանության աջակցությամբ հարկադրական ապամոնտաժում եւ այլն, հիմա էլ կատարվում է«Ֆիրդուսի-33» հասցեում մինչեւ այժմ գործող հայտնի շուկայի հետ՝ հինգշաբթի օրվանից այն հարկադրաբար սկսվեց ապամոնտաժվել՝ առաջացնելով շուկայի վաճառողների եւ մոտակա տների բնակիչների դժգոհությունը: Նրանք պնդում են՝ կարելի էր նախապես փոխհամաձայնության գալ, հետո ապամոնտաժել շուկան: Հատկապես բնակիչները վստահություն չունեն իրացման պատասխանատու իշխանությունների եւ նրանց կողմից այդպես էլ չբացահայտվող՝ տարածքն իբր գնած անհայտ սեփականատիրոջ հանդեպ: Բնակիչները մտահոգվում են, որ իրենք կդառնան հերթական իրացման զոհը, նրանց տրվելիք փոխհատուցումները կլինեն զգալիորեն նվազ՝ իրացման գոտու քառակուսի մետրի շուկայական արժեքից, եւ կամ այլ իրացվող գոտիների բնակիչների նման տարիներով կմնան առանց բնակարանի: Իսկ թե ինչու ներկայիս գործադիրը, որտեղ սիրում են խոսել կառավարման նոր մշակույթից, մարդկանց խնդիրների լուծման քաղաքակիրթ մեթոդներից, իրացման գոտիների հարցում մեկին մեկ վարվում է բոլոր նախկին կառավարությունների պես, այդպես էլ մնում է մութ: Կամ աշխատել, իրոք, դժվար է սովորելը, կամ ինչ -որ մեկին շատ է անհրաժեշտ դժգոհության, լարվածության ու բողոքի նոր օջախ ստեղծելը կառավարության քթի տակ: Թե չէ սա իսկական առիթ պիտի լիներ գործադիրի համար՝ նախորդ կառավարություններից տարբերվելու ու «Ֆիրդուսնոցի» հարցը քաղաքակիրթ, փոխհամաձայնեցված լուծելու համար՝ անկախ նրանից, թե ով, որքան է կերել ու դեռ որքան է ուտելու: Ընդամենը նոր կառավարման մշակույթը գործնականում կիրառելու կամք էր պետք ունենալ: Տեսնես մերոնք ե՞րբ կսովորեն քաղաքակիրթ աշխատել:**



**Դեսպան Արշակ Փոլադեան....**

էջ 3



**Մարիա Զախարովա. «Սրտով հայ ժողովրդի հետ ենք, որտեղ էլ գտնվենք»**

էջ 4



**Նավթը եւ ահաբեկչությունը**

էջ 6

AZG NEW SHABAT 1.QXD 19/07/2017 22:12 Page 2



ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

## Ամենակարող օրէնքը

**Իսրայէլի երբեմնի վարչապետ Եէհուտ Օլմարդը իր բանտային 27 ամսուան պատիժը չամբողջացուցած, առողջական պատճառներով, 16 ամիս ետք ազատ արձակուեցաւ: Պրազիլի նախկին նախագահ Լուլա դա Սիլվան 9.5 տարուան ազատազրկման դատավճիռի ենթարկուեցաւ: Երկուքն ալ ամբաստանուած էին փտածութեամբ (կոռուպցիա):**

**Երբ կը տեսնեմ, թէ ինչպէս կարգ մը երկիրներու նախագահներ, վարչապետներ ու այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ կը դատուին եւ կը պատժուին իրենց պաշտօնները շահագործելով ապօրէն գործարքներ կատարած ըլլալու ամբաստանութեամբ եւ երկիրը փտածութեան առաջնորդելու յանցանքով, նախ կը սոսկամ ու կը ցաւիմ, որ երէկուան ամենակարող եւ անհպելի կարծուած իշխանաւորը մէկ օրէն-միւսը հսկայ անկում մը կը կրէ, շէքսփիրեան ողբերգութիւններու հերոսներուն նման, սակայն, նաեւ կ՚ուրախանամ, որ մարդ չկայ որ օրէնքէն վեր ըլլայ եւ ամէն մարդ հաւասար է օրէնքին առջեւ, կ՚ուզէ շարքային քաղաքացի ըլլայ, կ՚ուզէ՝ նախագահ:**

**Իշխանական աթոռը վտանգաւոր որոգայթ մըն է, ուր խայծը չափազանց գրաւիչ ու հմայիչ է եւ շատեր կ՚իյնան անոր մէջ, վստահելով իրենց հեղինակութեան եւ պաշտօնին զօրութեան, առանց նկատի առնելու, որ իրենցմէ բարձր կայ օրէնքը եւ օրէնքը կիրարկող վերին ատեանը:**

**Ահա՛ այստեղ է որ երեւան կու գայ երկրի մը զարգացման մակարդակը: Ես կը կարծեմ, որ ժողովրդավարութենէ, տնտեսական բարօք կացութենէ, նոյնիսկ բանակի հզօրութենէն աւելի կարեւոր է կիրարկուող արդարութիւնը, այսինքն՝ օրէնքի իշխանութիւնը բոլոր մարզերուն մէջ, որուն հետեւանքով երկիր մը զարգացման բարձրագոյն մակարդակը նուաճած կ՚ըլլայ:**

**Սակայն, դժբախտաբար, եթէ 10 պետական մարդ դատուի եւ պատժուի, անդին 100 նմաններ կը մնան անհպելի, երբ իրենք են երկրին ալֆան եւ օմէկան: Անոնք կրնան ոտնակոխել օրէնքները, կամ դրուած օրէնքներէն խուսանաւելու ճամբաներ կը մշակեն, որպէսզի երբ խախտումներ կատարեն եւ բռնուին, կարենան խուսափիլ պատժամիջոցներէն:**

**Այս դարու բոլոր տեսակի բարձրամակարդակ պաշտօնեաները դժուար թէ անկախ ըլլան, անոնք տարատեսակ կապերով ակամայ միջազգային մեծ «խաղերու» մասնակից պէտք է ըլլան, եթէ չեն փափաքիր որ իրենց աթոռը կորսնցնեն: «Կա՛մ խաղի մէջ, կա՛մ խաղէն դուրս»... այս է պայմանը: «Խաղէն դուրս» կը նշանակէ պաշտօնը կորսնցնել, իսկ ընդդիմութեան պարագային՝ ենթարկուիլ ամենաստորնացուցիչ ու վտանգաւոր «ճակատագրի»:**

**Աշխարհի եւ պետութեանց ճակատագրով «զբաղող» քուլիսային ուժեր կան, որոնց դէմ պայքարիլը անիմաստ է ու շատ վտանգաւոր, որովհետեւ Սեւակի բնորոշմամբ՝ «Բաց ճակատով զուր չխփուել հաստ պատերին, ինչի՞ համար, էլի պատը կը մնայ պատ, կը պակասի մի լաւ ճակատ»...**

**Օրինակներ շատ են, հետեւեցէք աշխարհի անցուդարձերուն եւ կը տեսնէք: Այնպէս որ, այս դարուն յատկապէս, ղեկավար պաշտօնները ականապատուած աթոռներ են, սակայն ատով հանդերձ, մարդկային անկշտութեան եւ իշխանատենչութեան վարակով բռնուած մարդիկ կամովին կ՚իյնան այդ սարդոստայնին մէջ: Շատեր նուազագոյն վնասով կը փրկուին, ուրիշներ իրենց կեանքով կը վճարեն: Ձրի փառաւորում չկայ:**

**Իսկ օրէնքն ճառելն ու անոր չենթարկուիլը երկիրը քաոսի կը վերածէ:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## Տարվա առաջին կեսին 6,1 տոկոս տնտեսական ակտիվության աճ, ի՞նչ կլինի երկրորդ կեսին

**Այսպիսով 2017-ի առաջին կեսին Հայաստանի տնտեսական ակտիվությունն աճել է 6,1 տոկոսով: Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած այս ցուցանիշը փաստում է, որ առայժմ հաջողվում է պահպանել տարեսկզբից արձանագրվող տնտեսական աճի՝ վերջին տարիների համեմատ բարձր տեմպը: Հիշեցնենք, որ 2010-2016 թվականներին միջին տարեկան տնտեսական աճը կազմել է 3,5 տոկոս, իսկ այս տարվա հունվարից մինչեւ ապրիլ տնտեսական աճի ցուցանիշը գտնվում էր 6,5 տոկոսի միջակայքում: Ապրիլին որոշակի պասիվություն արձանագրվեց, ինչը պայմանավորված էր ընտրական գործընթացներով, երբ սովորաբար սպասողական տրամադրություններ են առաջանում եւ գործարար ակտիվությունը իջնում է: Տնտեսական ակտիվության աճի տեմպը այս պահի դրությամբ կրկին գտնվում է 6 տոկոսից բարձր մակարդակի վրա: Կառավարության պատասխանատուները խոստանում են, որ տարեկան տնտեսական աճը առնվազն 5 տոկոս կլինի: Այսինքն, տարվա առաջին կեսին հաջողվել է ապահովել ավելին, քան նախատեսվել է: Ո՞ր ճյուղերի շնորհիվ է տեղի ունենում տնտեսական ակտիվության աճը եւ ո՞ր ճյուղերն են անկում արձանագրում:**

Տարեսկզբից տնտեսական ակտիվության աճը տնտեսության հինգ ճյուղերից երեքի շնորհիվ է արձանագրվում: Արդյունաբերություն, որի ծավալներն առաջին կիսամյակում ավելացել են 12,6 տոկոսով, առեւտրի շրջանառություն՝ 12,8 տոկոսով եւ ծառայություններ՝ 10,9 տոկոսով: Մյուս երկու ճյուղերից գյուղատնտեսության համախառն արտադրանքը նվազել է 1,4 տոկոսով, շինարարության ծավալը՝ 10 տոկոսով:

Ամենադրական հանգամանքն, անշուշտ, արդյունաբերությունում արձանագրվող աճն է, թեեւ հունիսին մայիսի համեմատ այս ճյուղի ծավալները որոշակիորեն նվազել են: Այդուհանդերձ, տնտեսական աճի որակական փոփոխությունն առանց արդյունաբերության անհնար է պատկերացնել:

Աճ արձանագրած մյուսը ճյուղն առեւտուրն է, որը, մեծ հաշվով, ոչ մի որակական փոփոխություն չի առաջացնում, այլ միայն վկայում է պահանջարկի ավելացման մասին: Բացի արդյունաբերությունից, գյուղատնտեսությունից եւ մասամբ էլ շինարարությունից, որոնց աճով է պայմանավորվում առեւտրի շրջանառության ծավալների աճը, վերջինիս վրա մեծ ազդեցություն են գործում նաեւ արտերկրից եկող մասնավոր փոխանցումները: Դրանք հիմնականում ուղղվում են մանրածախ առեւտրի, ապա նաեւ՝ ծառայությունների ոլորտ:

Ծառայությունների ոլորտում, այդուհանդերձ, կան ճյուղեր, որոնց աճը գումարային հոսք է ապահովում: Խոսքը մասնավորապես զբոսաշրջության մասին է, որի զարգացումը նույն կարեւորությունն ունի, ինչ արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը:



Գյուղատնտեսության համախառն ծավալները դեռ ավելի փոքր են, քան անցյալ տարվա նույն ժամանակահատվածինը, թեեւ միայն հունիս ամսին նախորդ տարվա հունիս ամսվա համեմատ արդեն ծավալների որոշակի աճ է արձանագրվել: Հավանական է, որ հուլիսի ցուցանիշները ավելի բարձր կլինեն նախորդ տարվա հուլիսի հետ եւ յոթ ամիսների արդյունքում գյուղատնտեսությունը նույնպես աճ արձանագրի: Բանն այն է, որ այս տարի գյուղմթերքների սեզոնը եղանակային պայմանների պատճառով մեկ-երկու ամիս հետ ընկավ եւ ամառվա երկրորդ կեսին դա արդեն կերեւա ցուցանիշների վրա: Թեեւ Արմավիրի մարզի 9 գյուղեր լրջորեն տուժեցին ուժեղ կարկուտի հետեւանքով, բայց բերքի ընդհանուր ծավալը Հայաստանում այս տարի նախորդ տարվա համեմատ ավելին կլինի:

Շինարարության ծավալները թեեւ ամսե-ամիս ավելանում են, բայց նախորդ տարվա նույն ժամանակահատվածին դրանք դեռ զիջում են: Այստեղ աշխուժության ակնկալիքները պայմանավորված են մի քանի ոչ մեծ եւ Երեւանում նախատեսված երկու խոշոր ներդրումային ծրագրերով՝ Հին Երեւանի եւ Ֆիրդուսու փողոցին հարող տարածք: Առաջինի իրացումը թեեւ շատ դանդաղ, բայց ընթացքի մեջ է, իսկ երկրորդինը սկսվեց բառացիորեն այս օրերին:

Ինչ կարելի է սպասել տարվա երկրորդ կեսից, փորձենք ներկայացնել ըստ ճյուղերի: Ծառայությունների ոլորտում եւ առեւտրի շրջանառությունում արձանագրվող ցուցանիշները արտացոլելու են տնտեսության իրական հատվածում դրական զարգացումները, զբոսաշրջության հոսքը, ինչպես նաեւ արտերկրից եկող մասնավոր դրամական փոխանցումները: Շատ բան կախված է Ռուսաստանի Դաշնությունից, որտեղից էլ հիմնականում իրենց հարազատների գումարային փոխանցումներ են անում այդ երկրում ապրող մեր հայրենակիցները: Ռուսաստանի տնտեսության վրա դեռեւս մեծ է նավթի միջազգային գների ազդեցությունը, որոնք վերջին ամսվա ընթացքում կրկին նվազել են: Հետեւաբար, դրամական հոսքերի առումով կարող են ռիսկեր առաջանալ եւ այդ դեպքում դա բացասական կազդի նաեւ վերոնշյալ ճյուղերի վրա:

Նկատի ունենալով, որ մեր արդյունաբերության, մասնավորապես պատրաստի արտադրանքի, ինչպես նաեւ գյուղատնտեսական մթերքների արտահանման հիմնական երկիրը դարձյալ Ռուսաստանն է, այդ երկրի վիճակի փոփոխությունը կարող է բացասաբար անդրադառնալ մեր տնտեսության նաեւ իրական հատվածի վրա: Միանշանակ է, որ անհրաժեշտ է ընդլայնել արտահանման շուկաները, ինչը որոշ առումով տեղի է ունենում: Մասնավորապես նկատելիորեն ավելանում են արտահանման ծավալները դեպի Վրաստան, Իրաք, Արաբական Միացյալ Էմիրություններ, Շվեյցարիա եւ մի քանի այլ երկրներ: Ամեն դեպքում, գոնե ներկա պահին ռուսական տնտեսությունը կարծես թե հաղթահարում է տնտեսական անկումը եւ անգամ փոքր աճի հավանականություն կա: Մյուս կողմից էլ, արդյունաբերությունում եւ գյուղատնտեսությունում ներդրումների խրախուսման պետական քաղաքականությունը պետք է որ արդյունք տա:

Այսինքն, հավանական է, որ այս պահին աճ արձանագրած երեք ճյուղերում տեմպը պահպանվի, անկում արձանագրածներից էլ գյուղատնտեսությունը, ինչպես արդեն նշեցինք վերում, սկսի աճ արձանագրել, իսկ ահա շինարարության մասին դժվար է նման կանխատեսում անել: Կարելի է հուսալ, որ գոնե անկումն այստեղ դադարի: Ամեն դեպքում, մեր երկրի ներսում եւ արտաքին աշխարհում իրերի ներկա կացության պահպանման պարագայում, 5-6 տոկոսի միջակայքում տնտեսական աճի տարեկան ցուցանիշը հնարավոր է թվում:

Բնական է, որ շարքային քաղաքացու մոտ առաջացող հարցն այն է լինելու, թե դա ինչպե՞ս կարտացոլվի իր կենսամակարդակի վրա: Պատասխանն այն է, որ նման տոկոսային աճը մեկ տարվա ընթացքում բնակչության ընդհանուր վիճակի վրա նկատելի ազդեցություն չի ունենա: Դա տեղի կունենա առնվազն 3-4 տարի նման աճ ունենալու պարագայում: Նման երեւույթի մենք ականատես ենք եղել 2000-ականներին, երբ մի քանի տարի շարունակվող երկնիշ տնտեսական աճից հետո միայն մեր կենսամակարդակը նկատելիորեն փոխվեց:

## Հարց ՀՀ արդարադատության նախարարին

Ժամանակ չէի վատնի հանրայնացնելու ստորեւ նկարագրված «մանր» իրադարձությունը, եթե այն առնչված չլիներ առանցքային մի հարցի, որի առիթով ակնկալում եմ նախարարի առարկայական արձագանքը: Մինչեւ ե՞րբ իրավապահները՝ ոստիկանները, զանազան հսկիչները, պետք է հսկեն ոչ թե գրված օրենքը, այլ օրենքի իրենց մեկնաբանությունները՝ մանավանդ, երբ դրանք հակասում են միջազգայնորեն ընդունված նորմերին կամ ուղղակի տրամաբանությանը:

Վերջերս օդանավակայանում զննում անցնելիս (Երեւան-Աթենք թռիչք, հուլիսի 9, հերթափոխի պետ՝ Արթուր Խաչատրյան) ինձ ստիպեցին միացնել փոքրիկ նոթբուք համակարգիչը, ինչը առ այսօր չի կատարվում արտերկրում (հատուկ հետաքրքրվել եմ): Խնդրեցի ցույց տալ գրված օրենքը, ինչը գտնելու համար ծախսվեց մոտ կես ժամ եւ բառացիորեն իմ օդանավ մտնելիս բերվեց փաստաթուղթ, որտեղ գրված էր «անհրաժեշտության դեպքում ... մանրամասն զննում»: Խնդրեցի հիմնավորել «անհրաժեշտությունը» եւ «մանրամասն զննման» չափը, ինչին հերթափոխի պետը վստահորեն պատասխանեց, որ «անհրաժեշտությունը» որոշում է ինքը եւ կարիքը չունի ինձ դա հիմնավորելու: Օդանավում՝ այդ վիճաբանությանը ակամայից ներկա մի քանի ուղեւորներ հայտնեցին իրենց աջակցությունը, այդ թվում մեկը՝ իրավաբան՝ ասելով «վերջապես տեսա մեկը, որ հիմնավորված բացատրում էր իրենց կողմից օրենքի կիրառության խախտումը, իսկ դա կատարվում է առօրյա, ամեն քայլի՝ սկսած ճանապարհային երթեւեկության հսկիչներից»:

Հարցը միայն այն չէ, որ անիմաստ վատնվեց ժամանակ (չկարողացանք անել որոշ գնումներ), այլ այն, որ իր իրավունքները օրենքով պաշտպանված զգացող օտարերկրացու հետ կատարվելու դեպքում վատնված նյարդային ժամանակը համապատասխան նստվածքով կամփոփի նրա՝ մեր երկիր այցելությունը:

ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
պրոֆեսոր

***Խմբ. կողմից.-*** *Սովորաբար օտարերկրյա օդանավակայաններում խիստ հազվադեպ են անվտանգության հսկիչները ստուգում ձեռքի համակարգիչները, սակայն առանց բացառության պահանջում են ձեռքի պայուսակից կամ ճամպրուկից դուրս հանել այն եւ անցկացնել ստուգող սարքի միջից՝ ինչպես մյուս իրերը:*

AZG NEW SHABAT 1.QXD 19/07/2017 22:12 Page 3



# Փաշաեւների ժամանակը

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

**Ստեփանակերտ**

Ադրբեջանում, երեւում է, ավարտին է մոտենում նախիջեւանյան կլանի իշխանավարության ժամանակը: Սահմանադրական փոփոխությունների պահանջով դեռեւս ապրիլին պետք է նշանակվեին երկու փոխնախագահներ, բայց Ալիեւը հապաղում է: Տեղեկություններ կան, որ պատճառը մեկն է՝ վերնախավի նախիջեւանյան թեւը պահանջում է, որ փոխնախագահներից մեկը լինի Նախիջեւանի ղեկավար Թալիբովը, որի թեկնածությանը, սակայն, վճռականապես դեմ է առաջին փոխնախագահ Մեհրիբան Ալիեւան: Թալիբովը Նախիջեւանը ղեկավարում է 1993թ.-ից ի վեր, հայտնի է բռնապետական հակումներով: Նա Հեյդար Ալիեւի քրոջ փեսան է, ժամանակին նրա տանն է ապաստան գտել Մոսկվայից Նախիջեւան տեղափոխված ապագա «համազգային առաջնորդը»:

Օրերս տեղեկություն է տարածվել, որ զբաղեցրած պաշտոնից հեռացվել եւ տնային կալանքի է ենթարկվել Նախիջեւանի ՆԳ նախարար Ահմեդովը, իսկ իշխանավարության ոստիկանական համակարգում սկսվել են լայնածավալ ստուգումներ: Նախիջեւանը փակ տարածք է, միանձնյա կառավարման ենթակա, եւ ՆԳ նախարարն այդ համակարգում իրենից ոչինչ չէր կարող ներկայացնել, եթե չունենար Թալիբովի հովանավորչությունը: Եւ եթե այդ տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, ապա պետք է ասել, որ Ահմեդովի պաշտոնանկությունը կարող է ակնարկ լինել Նախիջեւանի երկարամյա ղեկավարին, որ նրա ժամանակը նույնպես սպառվում է: Ուշագրավ է, որ Ահմեդովի պաշտոնանկության մասին տեղեկատվությունը տարածվեց, երբ Իլհամ Ալիեւը պաշտոնական այց էր կատարել Լատվիա, բացակայում էր երկրից:

Ֆորմալ առումով Նախիջեւանի կառավարության անդամներին նշանակում եւ ազատում է իշխանավարության ղեկավարը, բայց մյուս կողմից էլ ուժային կառույցների ղեկավարների հարցը լուծում է Ադրբեջանի նախագահը: Ահմեդովի պաշտոնանկությունը չէր կարող տեղի ունենալ առանց Ալիեւի իմացության, իսկ եթե նա բացակայել է, եւ առաջացել է խիստ անհրաժեշտություն, ապա որոշումը պետք է որ ընդունած լինի առաջին փոխնախագահ Մեհրիբան Ալիեւան: Կարելի է, այսպիսով, ենթադրել, որ Նախիջեւանի ղեկավարի շուրջ հյուսվում է թակարդ, եւ ՆԳ նախարարի պաշտոնանկությունը դրա անուղղակի, բայց բավական խոսուն վկայությունն է:

Ահմեդովի պաշտոնանկության եւ տնային կալանքի թեման ադրբեջանական մամուլում չի արծարծվում: Խնդիրն, ուրեմն, խիստ նուրբ է, լրատվամիջոցներին պարզապես արգելված է այդ մասին խոսել: Բայց եթե «ջինը շշից բաց է թողնվում», նույնիսկ Ադրբեջանի նման փակ երկրում են զանազան վարկածներ ծագում: Մասնավորապես, սոցիալական ցանցերի ադրբեջանական հատվածում տեղեկատվություն է շրջանառվել, որ մոտ ժամանակներս պաշտոնին հրաժեշտ է տալու արտակարգ իրավիճակների գծով նախարար Հեյդարովը: Վերջինս նույնպես նախիջեւանցի է, ըստ տեղեկությունների՝ խորհրդային տարիներին աշխատել է Նախիջեւան քաղաքի հակահրդեհային պաշտպանության ռազմականացված համակարգում: Հեյդարովը նույնպես Ալիեւների ընտանիքի փեսա է եւ Բաքու է տեղափոխվել 1993թ. իշխանափոխությունից հետո: Նախապես ծառայել է Հեյդար Ալիեւի թիկնազորում, որտեղից տեղափոխվել ՆԳՆ համակարգ, ապա 1996թ.-ին նշանակվել ԱԻ նախարար:

Հեյդարովը համարվում է Ադրբեջանի ամենակոռումպացված պաշտոնյաներից մեկը: Տարբեր աղբյուրներ նրա կարողությունը գնահատում են մինչեւ 20 մլրդ. դոլար: 2013թ.-ին Հեյդարովը կասկածվում էր Մոսկվայում ադրբեջանցի «Միլիարդատերերի ակումբի» հետ համագործակցության մեջ՝ ի վնաս Իլհամ Ալիեւի: Այն ժամանակ էլ տեղեկատվություն կար, որ նա նոր կառավարությունում տեղ չի ունենա, բայց միջադեպը հարթվեց: Ըստ որոշ աղբյուրների, դրանում մեծ է եղել ՌԴ պաշտպանության նախարար Շոյգուի դերակատարությունը, որի հետ Հեյդարովը ջերմ հարաբերություններ ունի նրա ԱԻ նախարար աշխատած ժամանակներից:

Ըստ երեւույթին, Հեյդարովի պաշտոնանկության մասին լուրերն այնքան էլ անհիմն չեն, քանի որ ԱԻ նախարարության մամուլի ծառայությունը հարկ է համարել պաշտոնական հաղորդագրությամբ հերքել սոցցանցերում տեղ գտած գրառումները: Ուշագրավ է, որ հերքումը տարածել է ոչ թե նախագահի, այլ այն գերատեսչության մամուլի ծառայությունը, որի ղեկավարը նույն Հեյդարովն է: Երեւի պետք է սպասել ինչ-որ զարգացումների: Կա՛մ Նախիջեւանի ՆԳ նախկին նախարարի գործը որոշակիորեն կապվում է ԱԻ նախարար Հեյդարովի հետ, կա՛մ էլ նախիջեւանյան կլանին ուղղակի պատերազմ է հայտարարված, եւ նա պետք է հեռանա Ադրբեջանի իշխող վերնախավից:

Կա, թերեւս, պայմանավորվածություն, որ 2018թ.-ին Ադրբեջանը պետք է միջազգային հանրությանը ներկայանա իշխող վերնախավի բոլորովին նոր դեմքով: Տպավորություն կա, որ այն ձեւավորելու իրավունքը տրվել է առաջին փոխնախագահ Մեհրիբան Ալիեւային, որն էլ, բնականաբար, ընտրություն է կատարում իր ընտանեկան կլանի հետ առնչություն ունեցող շրջանակներից: Ադրբեջանում, կարելի է ասել, գալիս է Փաշաեւների իշխանության ժամանակը:

Բացառված չէ, որ գործընթացն ուղեկցվի լարվածություններով: Նախիջեւանը ոչ միայն փակ, այլեւ ծայրահեղական տեղաշրջան է, որտեղ սոցիալական վիճակն այնպիսին է, որ որեւէ պահի կարող է խռովություն սկսվել: Եթե բանը հասնի իշխանավարության ղեկավարի պաշտոնից Թալիբովի հեռացմանը, նրան պատասխանատվության ենթարկելուն, ապա շատ հնարավոր է, որ նա կդիմի հակաքայլերի: Նախիջեւանում բանակի ամրապնդումը, թերեւս, նաեւ տեղաշրջանի քաղաքական հավակնությունները զսպելու նպատակ է հետապնդում: Վերջին մի քանի զորակոչի ժամանակ նախիջեւանցիները ծառայության են անցել իշխանավարությունից դուրս, նրանց փոխարեն Ադրբեջանի տարբեր շրջաններից նորակոչիկներ են համալրել առանձին համազորային բանակի շարքերը: Մինչ այդ նախիջեւանցի զորակոչիկները ծառայում էին միայն իշխանավարության տարածքում:

# Դեսպան Արշակ Փոլատեան. «Միջին Արեւելքի մէջ տեղի ունեցող ռազմաքաղաքական զարգացումները այնքան ալ յուսադրող չեն»



*Արշակ Փոլատեանի անուան առաջին անգամ հանդիպած եմ սուրիական տագնապի թէժացումէն ետք: Պատերազմական գործողութիւններու սաստկացումէն ասդին տասնեակ դեսպանատուներ իրենց դռները փակելով հեռացան այդ երկրէն: Դամասկոսը իր ներկայացուցած կարեւորութեան եւ ռազմավարական նշանակութեան համար դարձաւ ահաբեկիչներու թիրախ: Քաղաքի կեդրոնական հատուածներուն մերձ մարտեր, պաշտարման օղակ, սնունդի եւ ջրամատակարարումի սահմանափակում եւ այլ հանգրուաններու ականատես եղած մայրաքաղաքը դիմացաւ այդ արհաւիրքին: Ու այս ամբողջ հոլովոյթներուն ականատես՝ Սուրիոյ մօտ ՀՀ դեսպանը շարունակեց կատարել իր պարտականութիւնները: Դամասկոսի Մազզէ շրջանի հարաւային հատուածին մէջ գտնուող դեսպանատունը չփակեց իր դռները ու ցայսօր ալ դեսպանատունը կը շարունակէ իր առաքելութիւնը: Արշակ Փօլատեանի համար Սուրիոյ մէջ դիւանագիտական աշխատանք կատարելը սովորական աշխատանքէ մը աւելին է: Պարոն դեսպանը խորքային մօտեցում ունի Միջին Արեւելքի մէջ տեղի ունեցող զարգացումներուն վերաբերեալ ու այդ առումով բաւական դիպուկ ձեւակերպումներով կը ներկայացնէ այդ երկրին ընդհանուր դերը շրջանին մէջ ու այդ դերին առընթեր՝ հայութեան ու Հայաստանի ունեցած փոխառնչութիւնը: «Մենք երախտապարտ ենք Սուրիոյ ժողովուրդին եւ երբեք չենք մոռնար անոր ըրած բարիքները մեր գաղթական տարագիրներուն: 1915-էն ետք, Սուրիա հաստատուած հայութիւնը կարելիութիւն ունեցաւ վերապրելու, մէջքը շտկելու, նոր կեանք սկսելու», կ՛ըսէ Արշակ Փոլատեան՝ կարեւորելով նաեւ սուրիահայութեան ունենալիք դերը ծանր վիճակի մէջ յայտնուած ու վիրաւոր այդ երկրի վերականգնման գործին մէջ:*

*Օրեր առաջ Երեւանի մէջ առիթը ունեցայ հարցազրոյց մը կատարել Դոկտ. Արշակ Փոլատեանի հետ: Մարդ, որ Սուրիոյ պատերազմի ամբողջ տեւողութեան չլքեց հայութեան եւ Հայաստանի համար տարբեր առումներով կարեւոր նշանակութիւն ունեցող Սուրիան:*

**- Ինչպէ՞ս է Դամասկոսի վիճակը այսօր, պարոն դեսպան: Շաբաթներ առաջ հրթիռի մը պատճառով հայ ընտանիքի մը տունը հրկիզուեցաւ, սակայն այսօր, կարծես ուրիշ փուլի մը մէջ կը գտնուի քաղաքին կացութիւնը: Այժմ ի՞նչ կը կատարուի Դամասկոսի մէջ:**

- Վիճակը մայրաքաղաք Դամասկոսի մէջ հիմա համեմատաբար հանգիստ է: Ի սկզբանէ, 2011թ. մարտից, նպատակը Սուրիոյ սիրտը, մայրաքաղաք Դամասկոսը գրաւելն էր: Շնորհիւ կառավարութեան մշակած ծրագիրներուն՝ ընդդիմադիր հատուածներու ծրագիրը խափանուեցաւ, եւ Դամասկոսը կանգուն մնաց, սակայն զուրկ չմնաց յարձակումներէ, նոյնիսկ արուարձանային շրջանները զինեալ խմբաւորումները կրցան գրաւել: Անցյալ տարուանից կառավարութիւնը, փոքր համաձայնութիւններով, յաջողեցաւ ազատագրել քանի մը շրջաններ: Այսօրուան դրութեամբ Ճոպարը, Արեւելեան Ղութան, Հարասթան, Դուման եւ այլ շրջաններ կը գտնուին զինեալ խմբաւորներու վերահսկողութեան տակ: Անշուշտ կառավարութիւնը կը փորձէ ազատագրել այս շրջանները եւս:

Դժբախտաբար, այս տարիներուն ընթացքին թշնամին՝ իսլամական արմատական խմբաւորումները կրցան ահռելի քանակութեամբ զէնք եւ զինամթերք, ինչպէս նաեւ ֆինանսական միջոցներ ներմուծել Սուրիա: Այսօր, կառավարութիւնը իր կարելին կ ընէ Դամասկոսն ու արուարձանները անվտանգ գօտի դարձնելու, սակայն մերթ ընդ մերթ կը պատահին հրթիռակոծութիւններ: Այնուամենայնիւ, վիճակը յարաբերաբար կայուն եւ վերահսկելի է:

**- Պարոն դեսպան, դուք շատ խորքային եւ համոզիչ ձեւով շեշտը դրիք «Սուրիան որպէս առաջին դարպաս» գաղափարին վրայ: Այսօր մենք արդեօք կը կորսնցնե՞նք այդ դարպասը:**

- Այսօր շատ դժուար է որեւէ բան կանխագուշակելը, քանի որ տեղի ունեցող ռազմաքաղաքական զարգացումները լաւատեսական շեշտեր չեն պարունակեր: Այնուամենայնիւ, ժամանակը ցոյց կու տայ: Իրականութեան մէջ, վերջին շրջանին Միջին Արեւելքի մէջ տեղի ունեցող ռազմաքաղաքական զարգացումները այնքան ալ յուսադրող չեն: Բայց պիտի յուսալ, որ իրավիճակը կը փոխուի դէպի լաւը, որովհետեւ մենք իբրեւ ազգ, իբրեւ ժողովուրդ այս տարածաշրջանի զաւակներն ենք: Ամբողջ պատմութեան ընթացքին, յարաբերութիւն ունեցած ենք այս երկիրներու ժողովուրդներուն հետ՝ թէ՛ քաղաքական, թէ՛ տնտեսական եւ թէ մշակութային բաւական աշխոյժ գործունէութիւն ունեցած ենք: Ափսոս, որ տեղի ունեցող զարգացումները ոչ միայն կ ոչնչացնեն կերտուած արժէքները, այլ նաեւ իրենց հետքը կը ձգեն պատմամշակութային արժէքներու եւ շրջանի քաղաքակրթութեան վրայ: Կարծես մեր համայնքները դուրս կը մղուին տարածաշրջանէն: Սակայն, այնուհանդերձ, մեզի համար հոգեհարազատ է այս տարածաշրջանը, մանաւանդ Սուրիան, ուր Ցեղասպանութեան ենթարկուած մէկ ու կէս միլիոն հայերու աւելի քան կէս միլիոնը զոհուեցաւ արեւելեան շրջանին՝ Տէր Զորի անապատի եւ այլ վայրերու մէջ: Տէր Զորը հայ ժողովրդի համար դարձաւ սրբավայր: Պատահական չէ, որ 2010 թուականին Հայաստանը այնտեղ բացաւ իր պատուոյ հիւպատոսութիւնը:

Միջին Արեւելքը շատ վտանգաւոր ժամանակաշրջան մը կ ապրի, մանաւանդ արաբական աշխարհը: Փաստօրէն եթէ Սուրիոյ տագնապը չլուծուի, հաւանական է որ տագնապը սուր ընթացք ունենայ այլ երկիրներու համար եւս: Ես երկար տարիներ աշխատած եմ Ծոցի տարածաշրջանը, եղած եմ Արաբական Էմիրութիւններու մէջ Հայաստանի առաջին դեսպանը եւ դեսպանութեան հիմնադիրը: Շատ խաղաղ ժամանակներ էին, սակայն այսօր վտանգաւոր զարգացումներ տեղի կ ունենան նաեւ այդ տարածաշրջանին մէջ:

**Հարցազրոյցը՝ ՍԱԳՕ ԱՐԵԱՆԻ**

***3.Գ.-*** *Դեսպան Արշակ Փոլատեանի հետ հարցազրոյցին ամբողջութիւնը կարող էք կարդալ «Հայ Ձայն» կայքին մէջ (www.hay-dzayn.am):*

# Մարիա Զախարովա. «Սրտով հայ ժողովրդի հետ ենք, որտեղ էլ գտնվենք»

ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ

**Մոսկվայում «Ազգ»-ի հատուկ թղթակից**

Մայիսի կեսերից Ադրբեջանի զինված ուժերը հերթական անգամ խախտեցին հրադադարը եւ շփման գծում հրթիռ կիրառեցին` խոցելով ռազմական տեխնիկա: Փաստը չվրիպեց Ռուսաստանի ուշադրությունից եւ հաջորդ օրն իսկ հրավիրած մամուլի ասուլիսում ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան դատապարտեց Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի խախտման դեպքերը եւ որպես ԼՂ հակամարտության կարգավորման միջնորդ երկրի ներկայացուցիչ` կոչ արեց հանդես բերել խոհեմություն ու բանականություն եւ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել` հակամարտության գոտում լարվածությունն անհապաղ կանխելու համար:



Գեղեցկատես, հմայիչ ժպիտով եւ խելացի աչքերով 42-ամյա այս կինը շաբաթական մի քանի ճեպազրույց է անցկացնում լրագրողների հետ: Հաճախակի մասնակցելով նրա կազմակերպած հանդիպումներին եւ տեւական ժամանակ մոտիկից հետեւելով նրա ծանրաբեռնված գրաֆիկին ու բուռն իրադարձություններով հագեցած գործունեությանը` կարող եմ փաստել, որ մշտապես զգացել եմ Մարիայի` երբեմն թաքուն, իսկ երբեմն էլ բացահայտ համակրանքն ու ջերմ վերաբերմունքը մեր երկրի ու ժողովրդի նկատմամբ:

Դեռեւս մեկ տարի առաջ` ապրիլի 2-5-ը, ԼՂ հակամարտության գոտում Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների հետեւանքով ստեղծված իրավիճակի հարցերով Հայաստան կատարած այցի ժամանակ, երբ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը զմայլվել էր Արարատ լեռան գեղեցկությամբ եւ լուսանկարել այն` Զախարովան իր ֆեյսբուքյան էջում հրապարակել էր Արարատը պատկերող Լավրովի լուսանկարը եւ մակագրել. «Արարատն այսօր ուղղակի գերում էր իր գեղեցկությամբ. Լավրովը չդիմացավ ու լուսանկարեց»...

Ուղիղ մեկ տարի անց` 2017 թ. ապրիլի 24-ին, Մարիա Զախարովան պաշտոնական պատվիրակության կազմում գտնվելով Նյու Յորքում` տեղի հայկական եկեղեցում հարգանքի տուրք է մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, ֆեյսբուքյան էջում լուսանկարներ տեղադրել եւ գրառել. «Այսօր սրտով հայ ժողովրդի հետ ենք, որտեղ էլ գտնվենք: Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրն է: Ինչ որ մեկը չի ցանկանում ճանաչել «ցեղասպանություն» բնորոշումը, ինչ որ մեկը կասկածի տակ է դնում զոհերի թիվը, քննարկում` «եղել է, չի եղել: Իսկ Ռուսաստանի Պետդուման դեռեւս 1995 թվականին ընդունել է 1915-1922 թվականներին իր պատմական հայրենիքում` Արեւմտյան Հայաստանում հայ ժողովրդի ցեղասպանությունը դատապարտելու մասին բանաձեւ»...

Մոսկվա վերադառնալուց հետո, հերթական հանդիպման ժամանակ, Մարիա Զախարովան լրագրողներին կրկին հիշեցրեց, որ ապրիլի 28-ին Մոսկվայում կկայանա Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարներ Սերգեյ Լավրովի, Էդվարդ Նալբանդյանի եւ Էլմար Մամեդյարովի հանդիպումը: «Ռուսաստանի դերակատարումը ԼՂ կարգավորման հարցում բավականին մեծ է,-նշել է Զախարովան եւ հավելել,- ՌԴ-ն վերջին տարիներին արել է մի շարք առաջարկներ, որոնք կողմերին մոտեցրել են վերջնական կարգավորման որոնմանը»:

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Զախարովան նաեւ դժգոհություն է հայտնել ադրբեջանական լրատվամիջոցների` ՌԴ ԱԳՆ-ի տարածած հաղորդագրությունների վերաբերյալ` անվանելով դրանք լպիրշություն. «Ես անձամբ եմ կարդացել: Դրանք անտաշ հոդվածներ են` առանց վերլուծության կամ կառուցողական քննադատության: Ու այդքանից հետո դուք խնդրում եք ձեզ ավելի շատ տեղեկատվություն տրամադրենք: Խոստովանում եմ, այդպիսի հոդվածներից հետո, անգամ շփվելու ցանկություն չկա»...

Իր բոլոր ճեպազրույցներին, հանդիպումներին եւ ելույթներին մեծագույն պատասխանատվությամբ վերաբերվող եւ, ընդհանրապես, աշխատանքում վերին աստիճանի կազմակերպվածություն դրսեւորող Մարիա Զախարովան ունի արտակարգ եւ լիազոր դեսպանորդի դիվանագիտական աստիճան:

Ծնողները եղել են դիվանագետներ: Մանկությունն անցել է Պեկինում, որտեղ աշխատել են հայրը եւ մայրը: Հայրը` Վլադիմիր Զախարովը, մասնագիտությամբ արեւելագետ է: Այժմ աշխատում է Տնտեսագիտության բարձրագույն դպրոցում:

1998-ին Մարիան ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների եւ Ժուռնալիստիկայի ֆակուլտետը` արեւելագետի եւ լրագրողի մասնագիտությամբ: Պրակտիկան անցել է Չինաստանում` Ռուսաստանի դեսպանատանը: Աշխատակցել է ՌԴ ԱԳՆ «Դիվանագիտական տեղեկագիր» ամսագրի խմբագրմանը, ապա նաեւ պաշտոնավորել ՌԴ ԱԳՆ-ի Տեղեկատվության եւ լրատվության վարչությունում: Եղել է ՄԱԿ-ում ՌԴ մամուլի քարտուղարի մշտական ներկայացուցիչը, 2008-2011 թթ. դարձյալ ղեկավարել է Տեղեկատվության եւ լրատվության վարչությունը:

2015-ի օգոստոսի 10-ին նշանակվել է Ռուսաստանի ԱԳՆ-ի Տեղեկատվության եւ լրատվության վարչության տնօրեն: Ամուսնացած է, ունի անչափահաս աղջիկ` Մարիաննան:

Բարեխիղճ եւ անբասիր գործունեության համար բազմիցս պարգեւատրվել է, այդ թվում` ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի, ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի, Մոսկվայի ժուռնալիստների միության եւ այլ գերատեսչությունների ու կազմակերպությունների կողմից:

Անցյալ տարի Մարիա Զախարովայի կերպարին մի նոր հմայք եւ ճանաչում բերեց հայտնի միջադեպը, երբ մայիսի 19-ին Ռուսաստան-Հարավարեւելյան Ասիայի երկրների գագաթաժողովից հետո տեղի ունեցած ընդունելության ժամանակ կատարել է լրագրողներին տված խոստումը եւ պարել «Կալինկա» պարը: Հատկանշական է, որ Զախարովան պարել է 15 սանտիմետրանոց բարձրակրունկներով, իսկ լրագրողներն էլ դեռ երկար ժամանակ սրամտում էին. «Երբ պարում է Մարիա Զախարովան, դիվանագիտությունը լռում է»...

Բայց պետք է ասել, որ դիվանագիտությունն ամենեւին էլ չի լռել եւ Ռուսաստանի ԱԳՆ ղեկավար Սերգեյ Լավրովը մեկնաբանելով Մարիա Զախարովայի պարը` նշել է, որ անչափ հավանել է այն...

Կյանքը շարունակվում է: Աշխարհում եւ մեր տարածաշրջանում առջեւում նոր իրադարձություններ են սպասվում, եւ տա Աստված, որ մեր ժողովրդի համար անչափ կարեւոր հակամարտությունը խաղաղ եւ բանական լուծում ստանա:

Այո, մեր հոգու խորքում հավատի եւ հույսի ակնկալիքներ ենք փայփայում, եւ անկեղծ ասած, ապագայի լուսավոր շողեր են արթնանում, երբ մեզ համար տարվա մեջ անչափ կարեւոր մի օր Ռուսաստանի արտգործնախարարության պաշտոնական եւ գեղեցկատես ներկայացուցչուհին ի լուր աշխարհի հայտարարում է. «Այսօր սրտով հայ ժողովրդի հետ ենք, որտեղ էլ գտնվենք»...

Ես հավատում եմ բարեկիրթ եւ խոստումնալից այդ կնոջը, աղոթում մեր սահմանների անառիկության ու խաղաղության համար եւ ակնկալում նույնքան խաղաղ ապագա մեր Հայրենիքին...

## Տաքսու ազնիվ եւ «թրաշով» վարորդը

Երեւանում Գերմանիայի դեսպան Բերնհարդ Մաթիաս Քիսլերը չորեքշաբթի մի լուսանկար հրապարակեց Սուրեն Սողոյանի հետ: Վերջինս... տաքսու վարորդ է եւ դեսպանատուն էր գնացել ոչ թե Գերմանիա գնալու համար վիզա ստանալու, այլ պարզապես իր մեքենայի մեջ գտել էր դեսպան Քիսլերի հեռախոսը եւ տարել դեսպանատուն, որպեսզի հանձնի տիրոջը: Պարոն դեսպանն էլ շնորհակալություն է հայտնել Սուրենին, ապա լուսանկարվել է հետը, տեղադրել սոցցանցում եւ գրել` ազնիվ մարդու հետ:

Ի դեպ, տաքսիստ Սուրենը «թրաշով» է. հիշեցնենք, վարչապետ Կարապետյանը պատերազմ է հայտարարել տաքսու «թրաշով» վարորդներին:

## Բենջամին Ուիթսը Պուտինին հրավիրում է մենամարտի

Ամերիկյան Lawfare բլոգի խմբագիր Բենջամին Ուիթսը հայտարարել է, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հաջողությունները մարտարվեստում խարդախություն են: Ուիթսը նշել է, որ Պուտինի բոլոր մենամարտերը կեղծ են եղել. `Նա մենամարտում է միայն այն մարդկանց հետ, որոնք իր իշխանության տակ են եւ վերջիններս էլ վայր են ընկնում «վախից», ասել է անվախ ամերիկացին: Ուիթսն ապա մենամարտի է հրավիրել Պուտինին եւ կարծում է, որ Պուտինն անպայման պետք է ընդունի մարտահրավերը:

Իմիջիայլոց Ուիթսը թաեքվանդոյի եւ հայկիդոյի սեւ գոտիներ ունի: Պուտինը եւս սեւ գոտի ունի թաեքվանդոյից, ինչպես նաեւ ձյուդոյի եւ սամբոյի վարպետ է:

## Լապշինը 3 տարի կնստի



Բաքվի ծանր հանցագործությունների դատարանը Ռուսաստանի եւ Իսրայելի քաղաքացի բլոգեր Լապշինին դատապարտել է 3 տարվա ազատազրկման: Առանց Ադրբեջանին տեղյակ պահելու Արցախ այցելած Լապշինը մեղավոր է ճանաչվել համաձայն Ադրբեջանի Քրօրենսգրքի 318.2 հոդվածի, որն է` «հանցավոր խմբի կազմում Ադրբեջանի պետական սահմանի հատում»:

Ավելի վաղ Լապշինը դատարանում հայտարարել էր, որ չի ընդունում իր մեղքը, ապա շեշտել, որ «Լեռնային Ղարաբաղը պետք է լինի Ադրբեջանի կազմում»: Լապշինի փաստաբանն իր հերթին դատարանին հայտնել էր, որ իր պաշտպանյալը որեւէ հոդվածում չի նշել, թե Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը պետք է խախտվի: Դատախազը Լապշինի համար պահանջում էր 6,5 տարվա ազատազրկում: Բայց Բաքվի ծանր հանցագործությունների դատարանը, մանավանդ Լապշինի հիշյալ հայտարարություններից հետո, որոշել է, որ բլոգերը այդքան էլ ծանր հանցագործություն չի արել:

## 15-ամյա Հաֆեզ Ասադը

Սիրիայի նախագահ Բաշար Ասադի որդին` 15-ամյա Հաֆեզը, պատասխանել է հորը բռնակալ անվանողներին: Ես գիտեմ, թե ինչպիսին է իմ հայրը: Նրա մասին տարբեր բաներ են ասում եւ հաճախ դրանք իրատեսական չեն: «Այն ինչ նրանք ասում են, իրականության հետ կապ չունի». շատ մանկական ձայնով ասել է Ասադը, ապա արդեն շատ մեծավարի շարունակել` «Ժողովուրդը ու իշխանությունը միասնական են ահաբեկիչների դեմ»: Կրտսեր Ասադը Սիրիայի նախագահ դառնալու ծրագրեր չունի...դեռ:

## Որդիներ վերացնող Ալիեւը

Ադրբեջանցի հայտնի ընդդիմադիր, նախկին դատախազ Վիդադի Իսքենդերլիի մայրը` Հաբիբա Իսքենդերովան եւ եղբայրը` Իսֆենդիյար Իսքենդերովը նամակ են գրել Իլհամ Ալիեւին: Նրանց բողոքել են իրենց ընտանիքի անդամից, քանի որ Թբիլիսիում պատսպարված Վիդադին, ըստ մոր եւ եղբոր, «ստահոդ տեղեկություններ է տարածում Ադրբեջանի մասին»: Վիդադիի մայրն ու եղբայրը` Ալիեւին ուղղված իրենց նամակում հրաժարվում են Վիդադիից, որն, ըստ նամակի հեղինակների` «պախարակում է Իսքենդերլիների ցեղը»: Նամակն ավարտվում է մոր խնդրանքով. «Պարոն նախագահ, խնդրում եմ օգնել վերացնել մեզ խայտառակող այդ խարանը...»:

Թե ինչ կանի Ալիեւը` կարեւոր չէ, կարեւորն այն է, որ Ադրբեջանում ծնողները գիտեն, թե ում պետք է դիմեն, երբ ուզում են վերացնել իրենց որդիներին:

**Պատրաստեց` ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

AZG NEW SHABAT 1.QXD 19/07/2017 22:12 Page 5



# Մնա տանը

Սփյուռքի նախարարությունն իրականացրել է «Արի տուն» ծրագրի 5-րդ փուլը: Հաշվի առնելով հայերի՝ «Արի տուն» շարժման, ինչպես նաեւ Սփյուռքի նախարարության հավերժությունը, կարելի է ենթադրել, որ հաջորդելու է 6-րդ փուլը, 7-րդը, 8-րդը, ...Մի խոսքով: Տիկին նախարարը հպարտությամբ նշել է, որ «Արի տուն» ծրագրի 5-րդ փուլը անցած «Արի տուն»-երից տարբերվում է նախ աշխարհագրությամբ, քանի որ աշխարհի 17 երկրից են տուն եկել, ապա եւ մասնակիցների թվով, որովհետեւ աշխարհի 17 երկրից 400 երեխա է տուն եկել: Ինչպես գիտենք, նրանց հյուրընկալում են հայաստանյան ընտանիքները, սակայն անձամբ Հրանուշ Հակոբյանը արիտունցիներից որեւէ մեկին չի հյուրընկալել, բայց սա՝ իմիջիայլոց:

Կարեւորն այն է, որ սփյուռքի մեր երեխաները հայրենիքում երկու բան են անում. ծանոթանում են Հայաստանի տեսարժան վայրերին, եւ երկրորդը՝ սովորում են հայերեն: Կա, նաեւ երրորդը, այն՝ որ նրանց մի մասը հենց հայրենիքում որոշում է կայացնում՝ մեծանալ ու վերջնականապես վերադառնալ հայրենիք, բայց ցավոք սրտի, որքան շատ են մեծանում սփյուռքի մեր երեխաները, այնքան մեծանում է Սփյուռքն ինքը, այնպես որ...Անկեղծորեն նշեմ, որ երեխաները Հայաստանում իրենց բավականին լավ են զգում, դրա համար նրանք ունեն բոլոր հիմքերը: Անվճար շրջում են Հայաստանով մեկ, ծանոթանում են նոր մարդկանց հետ, ձեռք են բերում ընկերներ, ինչպես նաեւ նրանց հեռախոսահամարներն ու համացանցային տվյալները, որ վերադառնան իրենց տուն, որն ի դեպ Հայաստանում չէ, եւ համացանցով շփվեն միմյանց հետ, չմոռանալով առնել հայրենիքի կարոտը, ինչը «Արի տուն» ծրագրի հիմքն է:

Բայց կարծում եմ, որ այս ծրագրի մեջ մի շատ կարեւոր բան մոռացված է, նույնիսկ՝ անտեսված: Խոսքը Հայաստանի երեխաների մասին է: Այո, նրանց հնարավորություն է ընձեռվում շփվել սփյուռքի իրենց տարեկիցների հետ, վերջիններիս հետ կապեր հաստատել, իրենց բակերում հպարտորեն նշել, թե Ամերիկայում ընկեր ունեն, որը երեկ չէ առաջին օրը Դիսնեյ լենդ էր գնացել, իսկ մեկ շաբաթ առաջ՝ Լաս Վեգաս, ծնողների հետ, անշուշտ: Բայց ընդհանուր առմամբ հայաստանցի երեխաներն այս պատմության մեջ անտեսված են: Բանն այն է, որ ի տարբերություն սփյուռքի երեխաների, որոնք, օրինակ Գեղարդի վանքի մոտ որոշում են, որ մեծանալու են ու անպայման վերադառնալու են Հայաստան, Հայաստանի երեխաները նույն վայրում չեն փոխում իրենց որոշումը՝ մեծանալ ու գնալ Ամերիկա, օրինակ: Հետեւաբար եթե «Արի տունը» մեր սփյուռքի երեխաներին ծանոթացնում է հայրենիքի հետ, ապա չի փոխում հայրենիքում ապրող երեխաների՝ տունը լքելու ցանկությունը, մանավանդ երբ տեսնում են, թե որքան ուրախ են ու լավ կյանքով են ապրում սփյուռքի իրենց հասակակիցները:

Եւ ուրեմն առաջարկում եմ Սփյուռքի նախարարությանը իրականացնել մեկ այլ ծրագիր՝ «Մնա տանը»: Այդ ծրագրով Հայաստանում ապրող երեխաները անվճար կծանոթանան Հայաստանի տեսարժան վայրերին՝ ողջ ամառային արձակուրդների ընթացքում: Նրանց ցույց կտրվի Հայաստանի ամբողջ գրավչությունը, հասկանալի է՝ այնպես, որ հետաքրքրական լինի երեխայի համար: Ու կկատարվի մի զարմանահրաշ բան. Հայաստանում ապրող բոլոր երեխաները անհամբեր կսպասեն ամռանը, որպեսզի վայելեն հայրենիքը, որը հիասքանչ է, իսկ դասերի ժամանակ ավելի լավ կսովորեն հայոց լեզուն, գրականությունն ու պատմությունը, քանի որ Հայաստանում ապրելը նրանց համար կլինի հետաքրքրական եւ հեռանկարային:

Այնպես որ, 5 փուլում «Արի տուն» անելու փոխարեն կարելի է մեկ փուլով անել «Մնա տանը»: Որպեսզի երբ Սփյուռքի մեր երեխաները մեծանան ու վերադառնան, տանը մարդ լինի:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Հայաստանը քննություն տվեց եւ կտրվեց

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Մինչ Հայաստանում շատ ակտիվորեն քննարկվում է, թե ինչո՞ւ դպրոցական ավարտական վկայականների մեջ նաեւ ռուսերեն պետք է գրված լինի, երկրի բուհերում տեղի ունեցան ընդունելության քննություններ: Եւ մինչ կասեմ, թե ինչո՞ւ է այդ վկայականների մեջ տեղ գտել ռուսերենը, խոսենք քննություններից:

Այսպես, **աշխարհագրություն** առարկայից լրացուցիչ փուլում քննություն է հանձնել 14 դիմորդ՝ հայտագրված 22-ից: Միջին միավորը կազմել է 9.8, անբավարար ստացել է քննություն հանձնածների 28.6 տոկոսը: Ամենաբարձր գնահատականը եղել է 19.5-ը: Այդքան միավոր ստացել է 1 դիմորդ:

**Հայոց պատմություն** առարկայից միասնական քննություն հանձնելու համար հայտագրվել է 91 դիմորդ, ներկայացել՝ 73-ը: Միջին միավորը 11.6 է, անբավարար գնահատական ստացել է դիմորդների 30 տոկոսը: Առավելագույնը՝ 19.75 միավոր ստացել է 1 դիմորդ:




**Քիմիա** առարկայից լրացուցիչ փուլում քննություն հանձնելու համար դիմել է 149 հոգի, քննությանը մասնակցել է 137-ը: Այս առարկայի միջին միավորը 10.04 է, անբավարար գնահատականները կազմում են 41 տոկոս: Հնարավոր առավելագույնը՝ 20 միավոր ստացել է 2 դիմորդ:

**Ֆիզիկայի** միասնական քննություն հանձնելու համար հայտագրվել է 134 դիմորդ, ներկայացել 129-ը: Միջին միավորը 9-ն է: Անբավարար գնահատականները կազմում են 48 տոկոս, 20 միավոր ստացել է 3 դիմորդ:

Իսկ ամենաուշագրավ պատկերը արձանագրվել է **Համաշխարհային պատմություն** առարկայի քննությանը: Մասնակցել է ընդամենը երկու դիմորդ: Նրանցից մեկը ստացել է անբավարար գնահատական, մյուսը՝ 13 միավոր:

Այս արդյունքների հիման վրա դիմորդներն ընդունվել են: Օրինակ ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետում այս տարի պատկերը հետեւյալն է. անցողիկ միավորը 29.50 բալ է, անվճարը՝ 56.25: Սա նշանակում է, որ եթե բոլոր քննություններից դիմորդը հավաքել է 29,50 բալ, այսինքն ամեն քննությունից միջինը տասը բալ, ապա նա կարող է դառնալ լրագրող: Նույն տրամաբանությամբ, կրկին ԵՊՀ-ի Տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության տեսություն բաժնում՝ անվճար 55.50 բալ, անցողիկ՝ 25.50: Ինֆորմատիկայի եւ կիրառական մաթեմատիկա բաժնում այս տարի անցողիկ միավորը 24-ն է՝ 2 քննության արդյունքներով, անվճարը՝ 38.50-ը: Հայ բանասիրության ֆակուլտետ. անցողիկը՝ 16 բալ՝ 2 քննությամբ, անվճար՝ 35.25 բալ: Այստեղ մանրամասնեմ, ստացվում է, որ եթե դիմորդը, ով ցանկանում է բանասեր դառնալ, երկու քննություններից ստանում է 8-ական բալ, ինչը նվազագույն բալն է, որպեսզի չկտրվես, ապա նա համալրում է բանասիրական ֆակուլտետի ուսանողների խումբը եւ շուտով դառնալու է հայոց լեզվի եւ գրականության մասնագետ, դատելով ամենից՝ մեծ մասնագետ: Ինչպես, օրինակ, ԵՊՀ Քիմիայի ֆակուլտետի շրջանավարտներն են դառնալու մեծ քիմիկոսներ: Ի դեպ Քիմիայի ֆակուլտետում տեղերը թափուր են մնացել: Այստեղ անվճարը 37 բալն է:

Պատմության ֆակուլտետում անցողիկ բալն այս տարի 16-ն է՝ 2 քննությամբ, անվճարը՝ 32.50: Արեւելագիտության ֆակուլտետի արաբագիտություն բաժնում անցողիկ միավորը 30-ն է, անվճարը՝ 52.50, Իրանագիտության բաժնում անցողիկը կրկին 30-ն է, անվճարը՝ 54.75-ը:

Հիմա, հաշվի առնելով քննությունների ժամանակ մեր դիմորդների ցուցաբերած բարձրագույն առաջադիմությունը, ունենք հետեւյալ պատկերը **Երեւանի պետական համալսարանում**.

Ֆիզիկայի 50 տեղից համալրվել է 47-ը:

Կենսաֆիզիկա եւ կենսաինֆորմատիկա բաժնի 33 տեղից համալրվել է 30-ը: Սերվիս ֆակուլտետը, որը բացելիս խոսվում էր մեծ պահանջարկի մասին, մանավանդ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը տարածաշրջանի եւ ամբողջ աշխարհի զբոսաշրջության կենտրոններից մեկն է, 125 տեղերից համալրվել է 55-ը:

Տնտեսագիտության ֆակուլտետի 130 տեղերից էլ՝ 80-ը:

Դե իսկ հայոց լեզու եւ գրականությունը ավելի ու ավելի քչերին են հետաքրքրում, քանի որ `120-ից 31 տեղն է համալրվել:

Ի դեպ, ռուսաց լեզու ֆակուլտետի 40 տեղից 40-ն էլ համալրված են: Իսկ այ անգլերեն լեզու եւ գրականություն բաժնի 135 տեղից համալրվել է՝ 52-ը:

Փոխարենը հրաշալի արդյունք է ցույց տվել եկեղեցաբանություն բաժինը, որի 25 տեղերից բոլորն էլ համալրված են: Ամեն:

Համալրված են նաեւ միջազգային հարաբերությունների եւ իրավագիտության ֆակուլտետները:

Այլ բուհերում, օրինակ՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի** հաշվապահական հաշվառում եւ հարկում (ըստ ոլորտի) բաժնի՝ 25 տեղ է համալրվել՝ 190-ից:

**Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի** պատմություն ֆակուլտետում՝ 51 տեղ՝ 85-ից:

**Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի** անգլերեն լեզու եւ գրականություն՝ 99 տեղ՝153-ից: Ի դեպ, հետաքրքրական է, որ գերմաներեն լեզու եւ գրականություն բաժնի 49 տեղից 49-ն էլ համալրվել է: Այս բուհը նաեւ ապագա լրագրողների խնդիրն է լուծել, քանի որ լրագրություն բաժնի 34 տեղից 34-ն էլ համալրված են: Իմիջիայլոց ամեն տարի 34 լրագրողը բավարա՞ր է, թե ավելի շատ է պետք...

Այս ամենի կապակցությամբ Գնահատման եւ թեստավորման կենտրոնի տնօրեն **Արա Իսպիրյանը** հայտնել է, որ թափուր տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները կարող են տվյալ բուհում հայտագրվել մինչեւ հուլիսի 20-ը: Հուլիսի 20-25-ը կանցկացվի թափուր տեղերի մրցույթ, եւ արդեն հուլիսի 25-ին բուհերում կհրապարակվեն նոր մրցույթի արդյունքները:

Թափուր տեղերն իհարկե կհամալրվեն, կամ՝ ոչ: Մեկ այլ կարեւոր բան կա. 2003-ին Հայաստանում ծնվել են ամենաքիչ թվով երեխաները, իսկ սա նշանակում է, որ մոտակա երեք տարիներին, առնվազն, հայաստանյան բուհերում թափուր տեղեր են լինելու, քանի որ դիմորդներն են քիչ լինելու: Սա՝ հարցի մի կողմը: Մյուսը՝ դպրոցն է, որտեղ 12 տարի սովորելուց հետո դիմորդը գնում է քննության եւ, օրինակ, Հայոց պատմությունից ստանում է անբավարար, այն պարագայում, երբ ինքը որոշել է պատմաբան դառնալ եւ իր հարազատ քեռու կինը նրա Հայոց պատմության ուսուցչուհին է եղել:

Չմոռանամ ավարտական վկայականներում հայտնված եւ Հայաստանում, ինչպես վերեւում համոզվեցինք, շատ մեծ պահանջարկ ունեցող ռուսերենի մասին: Ինչպես գիտենք, մենք ԵԱՏՄ անդամ երկիր ենք, որի մեծ մասը խոսում է ռուսերեն, ավելի մեծ մասը՝ նաեւ հասկանում է, ճնշող մեծամասնությունն էլ՝ միայն ռուսերեն է հասկանում: Եւ ուրեմն, բա ի՞նչ լեզու պետք է մտնի մեր վկայականների մեջ, մեր կյանք, եթե ոչ ռուսերենը: Գուցե դուք ղազախերենի՞ կողմնակիցն եք...

Ամեն դեպքում մտածել է պետք, ցանկալի է դպրոցից:

# Առողջ բանտեր

Արդարադատության փոխնախարար Սուրեն Քրմոյանը օրերս հայտարարեց, որ Հայաստանի բոլոր քրեակատարողական հիմնարկները (ՔԿՀ), այլ կերպ՝ բանտերը, մինչեւ տարեվերջ կունենան ատամնաբույժ եւ հոգեբույժ: Պարոն Քրմոյանը շեշտել էր, որ մինչեւ հուլիսի վերջ մի շարք ՔԿՀ-ներին կմատակարարվի դեղորայքի անհրաժեշտ չափաբաժին: Պետք է նկատել, որ արդարադատության փոխնախարարը արձագանքում էր ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցին, ըստ որի հայաստանյան ՔԿՀ-ներում անհրաժեշտ քանակի դեղորայք չկա, բուժմասնագետներ չկան, իսկ անազատության հետ անհամատեղելի հիվանդությունների ցանկը թերի է: Վերջինիս հետ կապված, ՄԻՊ-ի զեկույցին հաջորդած կառավարության հերթական նիստում արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը պարզաբանեց, որ ճշտվում է անազատության հետ անհամատեղելի հիվանդությունների ցանկը, ինչից ենթադրում ենք, որ այն շուտով կճշտվի, որից հետո շատ շուտով կառավարությունը կճշտի, որից հետո էլ շատ շուտով վերջնապես ճշտված կլինեն այն հիվանդությունները, որոնցով տառապողները անազատության մեջ չեն հայտնվի:

⇨6

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

դ.գ.թ. Էներգետիկ աշխարհաքաղաքականության եւ միջազգային անվտանգության մասնագետ

# Նավթը եւ ահաբեկչությունը

## *Դիտարկումներ Սաուդյան Արաբիայի եւ Ադրբեջանի շուրջ*



Եթե դեռ անցած դարի 70-ական թվականներին համարվում էր, որ ահաբեկչությունը մարդկության հիմնական սպառնալիքներից մեկն է, ապա հետագայում այն, կարելի է ասել, աճեց մինչեւ համաշխարհային անվտանգությանը սպառնացող հիմնական մարտահրավերի մակարդակին, օրակարգային խնդիր դառնալով բոլոր պետությունների համար: Ահաբեկիչներն էլ, որոնք սկզբում հանդես էին գալիս ազգային պայքարի կարգախոսի տակ, ժամանակի ընթացքում վերածվեցին մոլեռանդ քարոզիչների, սկսելով հանդես գալ արդեն իսլամի անունից: Փոքր եւ վատ կազմակերպված ու անօրինական գործող մանր խմբերից այդ կառույցները աճեցին մինչեւ լավ զինված ու իրենց ճամբարներն ունեցող խմբավորումների, որոնք հետագայում ցանցային սկզբունքով սկսեցին տարածվել աշխարհով մեկ՝ սպառնալով անգամ մինչեւ վերջերս ապահով թվացող պետություններին ու երկրներին:

Այս գործընթացը, սակայն, հատկապես իրենց մեծ տերություններ անվանող պետությունների «ջանքերով» շարունակվեց, ու մենք նույնիսկ ականատեսը եղանք ահաբեկչական «պետական» միավորի ստեղծմանը, որն իրեն անվանեց «Իսլամական պետություն» եւ դրա անվան տակ փորձեց դեպի իրեն գրավել աշխարհի մուսուլմաններին, ահաբեկչական իր գործունեությունը շարունակելու ու այն այլ երկրների վրա տարածելու համար: Սակայն, ինչ ձեւաչափով ու ձեւով էլ տարածվի ահաբեկչությունը, դրա հիմնական կենտրոնը Մերձավոր Արեւելքն է, որը դարձել է այդ սպառնալիքի տարածման հիմնական կենտրոնը: Իսկ այդ տարածաշրջանը կապված է ոչ միայն ահաբեկչության, այլեւ նավթի հետ՝ լինելով աշխարհի թիվ մեկ էներգակիրի հիմնական կենտրոնը:

Մերձավոր Արեւելքում է կենտրոնացած նավթի մինչեւ 45, իսկ գազի մոտ 30 տոկոսը եւ, հետեւաբար, զարմանալի չէ, որ էներգակիրներով հարուստ այդ տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացները, լինի դա ահաբեկչություն կամ մեկ այլ բան, այսպես թե այնպես, կապված է նավթային գործոնի հետ ու նաեւ աճում ու փոփոխվում է այդ գործոնի ազդեցության մեծացման կամ նվազման հետ զուգահեռ:

Ամերիկացի հայտնի հետազոտող եւ լրագրող, Պուլիցերյան մրցանակակիր **Թոմաս Ֆրիդմանը** իր հայտնի «Շոգ, հարթ, բազմամարդ. Ում է պետք «կանաչ հեղափոխությունը» եւ ինչպես վերակառուցել Ամերիկան» գրքում, անդրադառնալով ժամանակակից ահաբեկչության թեմային նշում է, որ այն ուղղակի կապված է նավթի հետ եւ դրա վաճառքի ու գնի աճին զուգահեռ աճում եւ ուժեղանում են ահաբեկչական կառույցները: Ֆրիդմանը կարծում է, որ գնելով նավթ՝ մենք անկախ մեր կամքից ֆինանսավորում ենք ահաբեկչությունը եւ ահաբեկչական կառույցները ողջ աշխարհում: «Ամերիկայի կախվածությունը նավթից նպաստում է այդ էներգակիրի համար սրվող պայքարին եւ բացահայտում մեր պետության վատագույն կողմերը», ասում է Ֆրիդմանը, «նավթ գնելով մենք (իմա ԱՄՆ) ֆինանսավորում ենք Սաուդյան Արաբիայում, Արաբական Միացյալ էմիրություններում, Քաթարում, Քուվեյթում եւ Ծոցի այլ պետություններում գործող կրոնական դպրոցները, հիմնադրամները, մզկիթները, սրանք էլ իրենց հերթին այդ միջոցներից ֆինանսավորում են հակաամերիկյան ահաբեկչական խմբավորումները»:

Ֆրիդմանը գրում է նաեւ, որ 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը հնարավոր եղավ միայն նավթի գների աճի պայմաններում Սաուդյան Արաբիայի եկամուտների շարունակական ավելացման շնորհիվ: Եթե 1998թ. ՕՊԵԿ-ի անդամ պետությունների ընդհանուր եկամուտը նավթի վաճառքից կազմել էր միայն 110 մլրդ դոլար, ապա 2006թ. այդ թիվը հասավ 500 մլրդ դոլարի: Հասկանալի է, որ նավթի գնի շարունակական աճի պայմաններում ավելանում էին նաեւ ՕՊԵԿ-ի անդամ պետությունների եկամուտները, իսկ քանի որ դրանց շատերը այսպես թե այնպես ներգրավված էին ահաբեկչական կառույցների ֆինանսավորման մեջ, ապա աճում էր այդ կառույցների ֆինանսավորումը եւս:

Հասկանալի է, որ այս շարքում առանձնահատուկ տեղ ունի Սաուդյան Արաբիան, որպես ահաբեկչության ֆինանսավորման հիմնական պետություն: Ըստ Ֆրիդմանի, վերջինիս առավելությունը մուսուլմանական մյուս պետությունների հանդեպ ոչ միայն նավթից ստացվող գերեկամուտներն են, այլ մահմեդականների համար կարեւորագույն Մեքքա եւ Մեդինա քաղաքների առկայությունը այդ պետության տարածքում: Այս կարգավիճակը, որպես իսլամի հիմնական արժեքների պահապանի, եւ նավթային եկամուտները, Սաուդյան Արաբիային հնարավորություն են տալիս ամբողջ աշխարհով մեկ տարածել արմատական իսլամի իր տեսլականը: «Դեռ երբեք համաշխարհային որեւիցէ կրոնի արմատական փոքրամասնությունը չի ունեցել այդքան ռեսուրսներ ու միջոցներ ծախսելու ու իր տեսակետը տարածելու համար, եւ դա երկարատեւ ու լրջագույն հետեւանքներ կունենա», գրում է Ֆրիդմանը:

Նկատենք, որ նմանատիպ երկարատեւ հետեւանքներից մեկն էլ այսպես կոչված «Իսլամական պետության» ստեղծումն էր, որը սկիզբ առավ ու հզորացավ նավթի գների բարձրացման պայմաններում, իսկ անկումն ու պարտությունները համընկնում են նավթի գների նվազման հետ, այսպիսով ցույց տալով ուղղակի կապը նավթի գների եւ ժամանակակից ահաբեկչության միտումների միջեւ: Ֆրիդմանը մեկ այլ դիտարկում էլ է կատարում. նավթի գների բարձրացմանը եւ այդ տիպի պետությունների եկամուտների աճին զուգահեռ սկսում են նվազել նաեւ ազատությունները այդ պետություններում՝ մարդու իրավունքի, կրոնական, խոսքի եւայլն:

Ինչեւէ, նավթի գների անկումը իսկապես լուրջ հարված է Ծոցի պետություններին, որոնք հսկայական եկամուտներ են կորցնում: Այսպես. Սաուդյան Արաբիան նավթի գնի 1 դոլար անկման դեպքում կորցնում է տարեկան մինչեւ 2 մլրդ դոլար գումար, իսկ եթե այդ անկումը կազմում է 10 կամ 50 դոլար, ապա համապատասխանաբար էլ նվազում են այդ պետության եկամուտները: Սա է պատճառներից մեկը, որ այդ պետությունը ստիպված է վերանայել իր քաղաքականությունը տարածաշրջանում ու հատկապես ահաբեկչական կառույցներին ֆինանսավորելու հարցում: Սա է նաեւ պատճառը Սաուդյան Արաբիա-Քաթար ճգնաժամի. ֆինանսական միջոցների նվազումը հանգեցրել է նրան, որ մինչեւ վերջերս հաջողակ թվացող, այսպես կոչված «Իսլամական պետությունը» սկսել է պարտություն կրել բոլոր ճակատներում, դուրս մղվելով Իրաքի Մոսուլ քաղաքից, իսկ այժմ էլ Սիրիական Ռաքքայից, որը համարվում էր նրա մայրաքաղաքը:

Նկատենք, որ նույն իրավիճակն է տիրում նաեւ Հարավային Կովկասում, որտեղ նավթից գերեկամուտներ ապահոված Ադրբեջանը իրեն տեռորիստական պետությանը «վայել» վարքագիծ էր դրսեւորում: Եվ նրա քաղաքականությունը էականորեն փոխվեց այդ եկամուտներից զրկվելուց հետո. Ադրբեջանի տնտեսական ու քաղաքական անկումը միջազգային նավթային շուկայում աննախադեպ էր, վերջինս կրեց ֆինանսական եւ տնտեսական հսկայական վնասներ, ինչն էլ ստիպեց նրան վերանայել իր քաղաքականությունը տարածաշրջանում:

Սակայն նավթի գների անկման փաստը չպետք է հանգստացնող հանգամանք լինի: Այդ պետությունները՝ թե՛ Սաուդյան Արաբիան եւ թե՛ Ադրբեջանը, միշտ էլ վարել են ահաբեկչական քաղաքականություն, ինչից չեն կարող հրաժարվել նույնիսկ նավթի ցածր գների պայմաններում: Հետեւաբար պետք է միշտ հաշվի առնել, որ նավթի գների բարձրացման դեպքում այդ պետությունները շարունակելու են զինվել եւ բացահայտ թե գաղտնի ֆինանսավորել տարբեր ահաբեկչական կառույցների՝ աշխարհի տարբեր ծայրերում:

# Առողջ բանտեր

⇨5

**Մի խոսքով, բանտերը կառավարության ուշադրության կենտրոնում են, ինչի շրջանակն այնքան մեծ է, որ այնտեղ տեղավորվում են նաեւ կարկուտից տուժած գյուղացիները, նրանց վերցրած վարկերը՝ տոկոսներով, նպաստառուների ցանկը, ՀՆԱ-ն մի քանի նիշով բարձրացնելու խնդիրը, ոչ թե արտաքին վարկով, այլ ներքին բիզնես միջավայրով տնտեսությունն ակտիվացնելու հրամայականը, եւ այլն:**

**Արդարադատության փոխնախարար Քրմոյանի ասածից, սակայն, հետեւում է, որ մինչեւ հիմա մեր բոլոր ՔԿՀ-ներում ատամնաբույժներ եւ հոգեբույժներ չկային: Չէ, կլինեն, անշուշտ, շուտով վարչապետը հանձնարարական կտա, ապա այն մեկ ամիս անց կկրկնի եւ կլինեն, բայց մինչեւ հիմա չկային: Այսինքն մինչեւ հիմա եւ այսօր էլ, երբ բանտերում որեւէ մեկի ատամը ցավում էր, կամ նա ձեռք էր բերում հոգեկան խնդիրներ, ինչը շատ հավանական է բանտերում, մանավանդ՝ մեր, ապա ոչ ոք մասնագիտորեն այս հարցերով չէր զբաղվում: Դե հիմա. ատամ է, թող ցավի էլի, կամ կալանավոր է, թող խելագարվի էլի: Ատամը՝ դեռ ոչինչ, կարելի է դիմանալ մի քանի տարի (նայած, թե տվյալ կալանավորին քանի տարով են ազատազրկել), եւ ազատություն ստանալուն պես բուժել հիվանդ ատամը, բացի այդ, եթե մարդը դիմանում է անազատությանը, ապա ատամի ցավն ի՞նչ է... Բայց այ, հոգեկան խնդիրները լուրջ են: Բանն այն է, որ բանտում ավելի հավանական է, որ մարդը ձեռք կբերի հոգեկան հիվանդություն, քան այն, որ ձեռք չի բերի: Սա նշանակում է, որ ազատություն ստացած նախկին կալանավորների զգալի մասն ունի հոգեկան խնդիրներ: Իսկ նրանք, հիշում ենք, ազատություն ստանալով պետք է նորից ներգրավվեն հասարակությանը, ինչը անել հոգեկան խնդիրներով՝ անազատության մեջ ապրելու պես բարդ է: Եւ ուրեմն մենք ոչ միայն պետք է մինչեւ տարեվերջ բոլոր բանտերին ապահովենք հոգեբույժներով, եւ դա ոչ թե մինչեւ տարեվերջ պետք է անենք, այլ հենց վաղը, եւ ամենալավ մասնագետներով: Մանավանդ որ հոգեբան-հոգեբույժ մասնագետների պակաս չունենք, հաշվի առնելով այդ մասնագիտությունների մեծ պահանջարկը հենց միայն դիմորդների շրջանում:**

**Բայց այստեղ մի նրբություն կա. մեր ակնկալիքը՝ բանտից: Մենք ուզում ենք, որ այնտեղ հանցագործները պատժվե՞ն, թե՞ այնտեղից մեզ միանան բոլոր առումներով առողջացած մարդիկ: Եթե առաջինը, ապա հոգեբան-հոգեբույժների կարիք մենք ունենք:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Լիբանանի բնապահպանության նախարարության խորհրդատու է նշանակվել Վազգեն Յարդըմյանը

**Այդ մասին է հաղորդել Ամերիկայի Հայ ինժեներների եւ գիտնականների (AESA) ընկերությունը: Վազգեն Յարդըմյանը այդ ընկերության նախկին նախագահն է եղել եւ երկարամյա գործող անդամը: Նշանակումը կատարել է ՄԱԿ-ի «Զարգացման ծրագիրը» (UNDP):**

**Յարդըմյանը մագիստրոսի գիտական աստիճան է ստացել Ֆուլերտոնի Կալիֆոռնիա պետական համալսարանից: Ունի ավելի քան 30 տարվա փորձառություն: Նախկինում աշխատել է UNDP-ում որպես Հայաստանի բնապահպանական խնդիրների խորհրդատու: Երկու անգամ (2001-ին եւ 2005-ին) ընտրվել է «Կրեսենտա հովտի ջրային պաշարների» տնօրենների վարչության անդամ: Եղել է նաեւ այդ կազմակերպության վարչության նախագահը:**

**Ամերիկայի Հայ ինժեներների եւ գիտնականների ընկերությունը հիմնվել է 1983-ին Գլենդեյլում: Ունի մասնաճյուղեր այլ քաղաքներում:**

**«Մասնագիտական առումով նշանակումս մեծ պատասխանատվություն է դնում ուսերիս, բայց հպարտ եմ, որ առիթ է ստեղծվելու վերադառնալու դեպի իմ ծննդավայրը՝ Լիբանան եւ այնտեղ աշխատելու բնապահպանության նախարարության կազմում», նշել է Յարդըմյանը այդ առթիվ:**

**Հիշեցնենք, որ այդ նույն պաշտոնում, բայց Լիբանանի վարչապետին որպես խորհրդական, տարիներ առաջ, աշխատել է հայազգի մեկ այլ մասնագետ՝ դոկտ. Հրաչ Գույումճյանը (Գումրույան), որն այժմ պատվավոր քարտուղարն է Ռամկավար Ազատական կուսակցության Գերագույն խորհրդի:**

Հ. Ծ.

AZG NEW SHABAT 1.QXD 19/07/2017 22:12 Page 7



# Մալոռոսիայի հռչակումը վրդովել է Եվրոպան



Ժամանակակից Եվրոպան ի վիճակի՞ է արդյոք հրաժարվել երկակի չափանիշների քաղաքականությունից: Որքան խորանում ենք այս հարցում, այնքան ակնհայտ է դառնում, որ պատասխանը բացասական է: Ի հեճուկս ամենքի համար հավասար իրավունքների եւ ազատությունների սկզբունքների, եվրոպացիները շարունակում են երկրներն ու ժողովուրդները բաժանել յուրայինների եւ օտարների՝ առաջիններին եւ երկրորդներին առաջարկելով միանգամայն տարբեր գնահատականներ ու մոտեցումներ: Արեւմուտքում մոդայիկ է դարձել ամեն ինչի համար Ռուսաստանին մեղադրել:

Երբ Դոնեցկի ղեկավար **Ա. Զախարչենկոն** օրերս հայտարարեց Մալոռոսիայի հռչակման մասին, դա հատկապես բացասաբար ընկալվեց Գերմանիայում: Գերմանացիները մի կողմից համերաշխորեն ընդդիմացան Մալոռոսիայի բուն գաղափարին, մյուս կողմից՝ ոչ պակաս համերաշխորեն մեղադրանքներ հասցեագրեցին Մոսկվային:

Օրինակ, «Դոյչե Վելլե» ռադիոկայանի ուկրաինական խմբագրության ղեկավար, արեւելաեվրոպական հարցերի փորձագետ **Բ. Յոհանը** որոշեց Զախարչենկոյին գամել անարգանքի սյունին՝ նրան մեղադրելով միանգամից երկու հանցագործության մեջ: Դրանք են՝ Եվրոպայի քարտեզի վերաձեւման փորձը եւ Պուտինի օգտին խաղ սկսելը:

«Դի Վելթում» հրապարակված հոդվածի հեղինակը առավել զուսպ է արտահայտվում, սակայն տալիս է ոչ պակաս կտրուկ գնահատական: Նրա կարծիքով, Ռուսաստանը որոշել է ապակայունացնել Ուկրաինան եւ խոչընդոտել դեպի Եվրոպա նրա շարժմանը: Թերթի գնահատմամբ, Մոսկվան Մալոռոսիայի գաղափարը կարող է օգտագործել Կիեւին եւ Արեւմուտքին ահաբեկելու նպատակով: Սա արեւմուտքում լայնորեն տարածված հնարք է, ըստ որի ուրիշին մեղադրում են այն բանում, ինչը իրենք են պատրաստվում անել:

Գերմանիայում նույն ոգով արտահայտվեցին նաեւ պաշտոնական անձինք՝ Մոսկվային հորդորելով հետեւել Մինսկի գործընթացին: Այս հարցում Բեռլինը միայնակ չմնաց: Պաշտոնական հայտարարություններ արեցին նաեւ Փարիզում եւ Բրյուսելում: Մեկուսի մնաց Վարշավան, որը կա՛մ չուներ սեփական տեսակետ, կա՛մ էլ ինչ-ինչ պատճառներով չկամեցավ այն հրապարակել:

Այստեղ սկսվում է ամենահետաքրքրականը: Եվրոպայում մինչեւ վերջերս նախընտրում են շրջանցել հակամարտության ձեւական կողմը: Սա հասկանալի է. տվյալ հարցում պարզություն մտցնելը բնավ ձեռնտու չէ Արեւմուտքին եւ պաշտոնական Կիեւին: Հակառակ դեպքում ի հայտ կգան Եվրոպայի համար տհաճ մի շարք մանրամասնություններ, սկսած «մայդանի» պայմանավորվածությունների հարգման վերաբերյալ Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Լեհաստանի արտգործնախարարների՝ Յանուկովիչին տված խոստումներից:

Ուկրաինայի եւ Դոնբասի նկատմամբ Եվրոպայի երկակի չափանիշները դրսեւորվեցին հերթական անգամ: Արեւմտյան մայրաքաղաքներում գրեթե միահամուռ կերպով դատապարտեցին Մալոռոսիայի հռչակումը, բայց մոռացության մատնեցին Դոնբասը իրեն վերադարձնելու վերաբերյալ Կիեւում մշակված եւ արդեն իսկ վերջնական փուլում գտնվող օրինագիծը: Շրջանառության մեջ են դրվում նոր հասկացություններ, որոնք թերեւս ոչ մի կապ չունեն միջազգային իրավունքի հետ:

Գերմանացի փորձագետ **Ռ. Մերկելը** Ուկրաինայի արեւելքի խնդիրը միջազգային իրավունքի տեսանկյունից քննության առնելով նշում է Կիեւի իշխանությունների այն պնդումը, թե այդ հակամարտությունը ոչ թե ռազմական բնույթ է կրում, այլ կապված է քրեական տարրերի եւ ահաբեկիչների հետ: Իրականում, Ուկրաինայի արեւելքում գործ ունենք զինված հակամարտության հետ: Ժնեւի 1949թ. միջազգագրի հիման վրա միջազգային իրավունքը դա բնութագրում է ոչ թե որպես պատերազմ, այլ որպես զինված հակամարտություն: Ռ. Մերկելը ընդգծում է, որ դրա նշանները ակնհայտ են. ծանր սպառազինության առկայություն, հրամանատարության ներքո գտնվող ստորաբաժանումների գոյություն: Նա ասում է, թե այդ կողոպտիչներն ու հրոսակները ենթակա չեն Կիեւի իշխանությունների իրավասությանը: Մալոռոսիայի հռչակման հայտարարությամբ՝ Դոնեցկի ղեկավար Զախարչենկոն հանդես եկավ հենց վերջերս, մինչդեռ պաշտոնական Կիեւը Դոնբասի դեմ ռազմական գործողություններ է իրականացնում ավելի քան երեք տարի, ըստ որում՝ մեծ ուժգնությամբ:

Այս կապակցությամբ «Ռեգնում» գործակալությունը հարց է տալիս, թե ինչու Եվրոպան այդքան տարբեր մոտեցումներ է դրսեւորում Կիեւի եւ Դոնեցկի գործողությունների նկատմամբ, ինչու Մալոռոսիան նկատելով՝ եվրոպացիները համառորեն չեն ուզում տեսնել Դոնբասը Ուկրաինային վերադարձնելու Կիեւի օրինագիծը կամ խորվաթական սցենարի վերաբերյալ կիեւցի քաղաքական գործիչների արած հայտարարությունները: **Պ. Ք.**

# Ամառային սրացումներ

⇨1

Իհարկե, բուն թեմայից սահուն անցումը ԵԱՏՄ-ից դուրս գալուն, կամ անգամ հակառակը՝ այդպիսի կտրուկ առաջարկներ հնչեցնելը աննպատակահարմար համարելը մեզ այնքան չզարմացրեց, որքան անհամաձայնությունն այն պահվածքի, որ դրսեւորեցին և՛ իրենց ընդդիմություն անվանողները, և՛ մեր երկրի դեմքը ներկայացնող պաշտոնյաները:Կարծես մի շարքային տնտեսական առաջարկ էր հնչեցրել Վոլոդինը: Եղբայր, քո սրբության սրբոցին են կպնում՝ վարորդական իրավունքի անվան տակ, անպատասխան թողնենք՝ մյուս անգամ արդեն Սահմանադրության մեջ ռուսերենը որպես երկրորդ պետական լեզու ամրագրելուց կխոսեն, ինչո՞ւ ձայն չենք հանում: Հո չե՞նք ուրանում մեր ռազմավարական դաշնակցին, ընդամենը մոտիկ դրացուն պիտի ասենք՝ եկեք լավ հարեւանություն անենք, ամեն պայման կստեղծենք դրա համար, բայց անկողին չենք թողնելու: Թե չէ՝ Բաբլոյանին մենակ թողեցինք, մինչդեռ խեղճ ԵՄ դեսպանին այնպես հակադարձեցինք, խեղճը համարյա հետ վերցրեց ասածը. ինչ էր ասել՝ ընդամենը խորհուրդ էր տվել ԿԸՀ-ին՝ բարելավել աշխատանքը, ողջ ուժով հակահարվածեցինք, թե ՝ «Մեր ներքին գործերին մի խառնվի»: Հիմա մեր լեզվին են կպել, բա ինչո՞ւ ենք լռել:

Հետաքրքրական կլիներ այս միջադեպին նախագահ Սարգսյանի անդրադարձը:

Նա, այնուամենայնիվ, ինչ- որ բաներ իր վերջին հարցազրույցում ասում էր, (դա եղել է մինչեւ Բաբլոյան-Վոլոդին հանդիպումը), թե՝ իհարկե կան բաներ, որոնց վերաբերյալ մենք ռուսական կողմի պես չենք մտածում, բայց ի՞նչն եք ուզում վերանայենք (հարաբերությունները նկատի ուներ), ո՞ւմ հետ եք ուզում վերանայենք, Թուրքիայի՞, ՆԱՏՕ-ում մե՞զ են սպասում: Նա ասում էր, որ միայն Ռուսաստանի հետ հարաբերությունների վրա չէ, որ մենք սեւեռված ենք, եւ հարաբերվում ենք ինչպես մերձավոր դաշնակիցների, այնպես էլ համագործակից գործընկերների հետ: Հաջորդեց Վոլոդինի առաջարկը, որը հազիվ թե ինքնաբուխ ծնված լինի, այդպիսի մտայնություն Ռուսաստանում, ուրեմն, կա:

Չգիտենք, բոլոր դեպքերում ճիշտ չէ մեր լեզվի հանդեպ արտաքին ոտնձգությանն ավելի որակյալ պատասխանի բացակայությունը, որքան էլ ռազմավարական գործընկերոջ հանդեպ սրդողած վեաբերմունքը լինի դրա պատճառը:

Բաբլոյանից ու Վոլոդինից սահուն անցում անենք Սերժ Սարգսյանի վերջին հարցազրույցի մի այլ դրվագի, որտեղ նա ասում է, թե ինչ կարեւոր է՝ ով է լինելու վարչապետը 2018-ին, չէ՞ որ Հայաստանում խորհրդարանական համակարգի անցումով այլեւս անձնակենտրոն իշխանություն չկա, իսկ վարչապետին կորոշի քաղաքական մեծամասնությունը: Բայց... քաղաքական մեծամասնությունն էլ հենց անձնակենտրոն է ախր, ու էդ անձնակենտրոն քաղաքական մեծամասնության խորհրդարանը որոշելու է վարչապետին: Սա բառախաղ չէ ընդամենը, ցավոք, այլ անհարմար իրականություն: Մինչ այդ էլ Սարգսյանն ասել էր, թե երբեք չի մտածել, թե որն է իր հաջորդ գործունեության ոլորտը, սա՞ էլ ընդամենը մի գլուխկոտրուկ է՝ նետված վերլուծաբաններին, մի երկու ամիս էլ տալու-առնելու ու 2018-ը վերլուծաբա՛ր զբաղեցնել-մոտեցնելու:

Ու հետո՝ ո՞ր մեծամասնության մասին է խոսքը՝ ա՞յն մեծամասնության, որը երբեք առանց իր ղեկավարի ցուցումի ծպտուն չի հանո՞ւմ, ա՞յն մեծամասնության, որը եթե մի բանի վերաբերյալ էլ առանց ցուցումի արտահայտվում է, նախագահ Սարգսյանի՝ հաջորդած խոսքը լրիվ անէացնում է ձախ գնացած-ֆոկուսից փախած որեւէ կարծիք: Դե, հա, իհարկե անձնավորված իշխանություն չենք ունենալու:

Ուրիշ բան, որ արժանին պետք է մատուցել այն մարդուն, ով ոչնչացրեց եւ ձեռնասուն դարձրեց ընդդիմությանը, ընդհանրապես որեւէ ընդդիմադիր եւ ինքնուրույն բան: Բայց դա նաեւ նշանակում է միայնա՛կ պատասխանատվություն՝ ամեն ինչի համար: Այդ թվում, այնպիսի բաների, որոնց հասցեատերը նորմալ սուբորդինացիայի դեպքում ամենեւին էլ այսօր նախագահը, կամ՝ վաղը վարչապետը չէ: Օրինակ՝ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի՝ ձայների մեծամասնությամբ օրերս ընդունած այն բանաձեւի պատասխանատվությունը, որի տակ շատ նվազ «դեմերի» մեջ Հայաստանի «դեմն» էլ կա, ռուսների խելքին ընկած. դա Ղրիմը Ռուսաստանին բռնակցելու որոշումը Ռուսաստանի կողմից չեղյալ հայտարարելու կոչ է՝ կից նաեւ Արցախյան հակամարտության վերաբերյալ աննպաստ ձեւակերպումներով: Եթե ամեն ինչի համար մեկ մարդ է պատասխանատու, այս քվեարկության հայկական մասի պատասխանատվությունն, ուրեմն, նույնպես նրանն է: Խորհրդարանական կառավարում լինի, թե նախագահական: Որովհետեւ ոչ ոք Հայաստանում ինքնուրույն լինելու շռայլությունը չի կարող թույլ տալ իրեն: Ոչ հիմա, ոչ հետո: Ոչ էլ Վոլոդինի հետ հանդիպմանը: Դրա համար էլ Բաբլոյանին չերկրորդեցին:

Բայց չէ՞ որ գալու են ավելի դժվարին ժամանակներ, երբ էլի կպնդեն ռուսերենը պետական լեզու դարձնելու սեւեռուն գաղափարը, կամ նույն կերպ կուզենան Արցախի հարցի լուծման քավորը դառնալ՝ փոխզիջումների իրենց հարմար տարբերակը դեմ տալով: Լեզվին ոտնձգող առաջարկին կոշտ չդիմակայեցինք, զիջումներին կարողանալո՞ւ ենք դիմակայել:

Իսկ որ 2018-ի վարչապետը Սերժ Սարգսյանն է լինելու, արդեն իսկ ուրվագծվում է. Արցախի անցումային նախագահը որ Բակո Սահակյանն է՝ 2020 թվականից հետո կրկին նախագահ լինելու ուղերձով, խորհրդարանական չանձնավորված մեծամասնության վարչապետը ինչո՞ւ պիտի Հայաստանի ներկա նախագահը չլինի որ, ինչը կամ ո՞վ է դրան խանգարելու:

Ի դեպ՝ եթե Սերժ Սարգսյանը վարչապետ լինի, կխաղաղվի նաեւ ծառուկյանական ընդդիմությունը, քանի որ վերջինիս կռիվը Կարեն Կարապետյանի դեմ է: Այսինքն՝ վարչապետ լինելու ուղերձը եթե իշխանության ներսում այնպիսի անցավ վերադասավորման մասին է, որ երկար ժամանակով եւ հարաբերականորեն ընդդիմությունը մեծ անհանգստություն չպատճառի իշխանությանը, դա հենց կարող է լինել Սարգսյանի վարչապետությամբ, համենայնդեպս՝ խորհրդարանի ներկա դասավորությա՛մբ:

Իսկ թե արդյոք ռուսական առաջարկը այն նյարդային շարժումների հետեւանք է, քանի որ Հայաստանը աշնան ստորագրելու ԵՄ համաձայնագիրը՝ գիտենք, ամեն ինչ կարող է պատահել, սակայն դա կարող է նշանակել մի բան. ՌԴ պաշտոնյաներն իրենց տեղում չեն եւ խորքային պատկերացում չունեն իրենց առաջարկների բարոյա-հոգեբանական անդրադարձների վերաբերյալ: Նրանք կա՛մ վատ են իրազեկված, կա՛մ պարզապես բանի տեղ չեն դնում ո՛չ Հայաստանի ներսում եղած տրամադրությունները, ոչ էլ մեր երկիրը: Սա նրանց սխալմունքն է, նրանք եւս պատմությունից դասեր չեն առնում: 1987 թվականին, Ղարաբաղյան շարժման սկսումից ընդամենը ութ ամիս առաջ Խորհրդային Միության կենտրոնական հեռուստատեսությունը հավաքել էր մյուս հանրապետությունների հեռուստատեսությունների գլխավոր խմբագիրներին եւ նրանց, մասնագիտական վերապատրաստման անվան տակ, սովորեցնում էր առավել սեղմել օղակները տեղերում՝ խորհրդային միախառնված, ազգային առանձնահատկությունները համահարթեցրած մշակույթը տարածելու եւ քարոզելու առումով: Այսինքն՝ այն աստիճան անհամարժեք էին իրական կյանքին, որ երկրի կենտրոնախույս ձգտումների ահագնությունը չէին ընկալում եւ ավելի էին սեղմում օղակը: Արդյունքը՝ ութ-ինն ամիս հետո սկսվեցին առաջին կենտրոնախույս ցույցերը Խորհրդային Միությունում, այսինքն՝ հիմք դրվեց միության փլուզմանը: Չարժե նույն կացնային վերաբերմունքը դրսեւորել երեք տասնամյակ անց, պատմությունը կրկնվելու սովորույթ ունի:

***Հ.Գ.-Հետաքրքրական է, որ Ռուսաստանի դաշնության նախագահին կից Ազգամիջյան հարաբերությունների խորհրդի նիստի ժամանակ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն երեկ ասել է. «Անթույլատրելի է մարդկանց ստիպել լեզու սովորել, որը նրանց մայրենի լեզուն չէ, նույնքան անթույլատրելի է, որքան ռուսերենի դասավանդման ժամանակ մակարդակն իջեցնելը», «ՌԻԱ Նովոստի»-ի փոխանցմամբ ասել է Ռուսաստանի նախագահը:***

# Ամուլսարի հանքավայրի շահագործումը հանցագործություն է ոչ միայն Ջերմուկի, այլեւ Սեւանա լճի էկոհամակարգերի հանդեպ

*Վայոց Ձորի Ջերմուկ առողջարանային քաղաքից մոտ 10 կմ հեռավորության վրա է գտնվում Ամուլսարը, որտեղ 2006 թվականից սկսած երկրաբանահետախուզական աշխատանքներ է իրականացնում բրիտանական «**Lydian International**» ընկերության «Լիդիան Արմենիա» ենթաընկերությունը: Վերջինս նշված սարի ընդերքում հայտնաբերել է ոսկի, որի հաշվեկշռային պաշարները նախնական տվյալներով հասնում են ավելի քան 70 տոննայի: Նշված տեղանքում հանքարդյունաբերական միջազգային ներդրումային խոշոր ծրագիր իրականացնելու, ոսկու, ինչպես նաեւ թանկարժեք այլ մետաղների պաշարները կորզելու նպատակով բրիտանական «Լիդիան Ինթերնեյշնլ» ընկերության «Լիդիան Արմենիան» ընկերությունը խոստանում է Հայաստանում (2016-2018 թթ.) ներդնել 370 միլիոն դոլար՝ զուգահեռաբար (տարը տարվա ընթացքում) ստեղծելով նաեւ 700 աշխատատեղ:*

**-Ամուլսարի հանքի շահագործումը ի՞նչ ազդեցություն կունենա Ջերմուկ առողջարանային քաղաքի, նրան հարակից տարածաշրջանի բնակչության առողջության եւ շրջակա միջավայրի վրա:**

**Այս եւ թեմային առնչվող մյուս հարցերի պատասխանները փորձեցինք պարզել ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտի եւ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության գիտնականներից եւ մասնագետներից: Վերջինները սկզբում սիրով հանձն առան աջակցել, իսկ հետագա օրերին ինչ-ինչ պատճառաբանություն-պատրվակներով հրաժարվեցին հանդիպել եւ պատասխանել «Ազգ»-ի ներկայացրած հարցերին:**

Իմանալով, որ Ամուլսարի հանքավայրը մինչեւ անցած տարեվերջ եղել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող, երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր երջանկահիշատակ **Հրաչյա Ավագյանի** ուսումնասիրությունների դիտակետում, որոշեցինք դիմել նրա այրուն՝ տիկին **Մարիա Գաբրիելյանին**: Տիկինը սիրով մեզ տրամադրեց Հ. Ավագյանի «Ամուլսարի ոսկու հանքավայրը», «Ամուլսարի ոսկու «հանքավայրի կորզաթափոնների» եւ դրանց էկոլոգիական հետեւանքների գնահատումը» գիտական աշխատությունները, ինչպես նաեւ նշված տեղանքի հանքավայրի աշխատանքների հետ կապված մյուս ձեռագիր ուսումնասիրությունները: Վերոնշյալ նյութերը լիովին օգնեցին գտնել մեզ հետաքրքրող հարցերի պատասխանները, որոնք ներկայացնում ենք ընթերցողին:


Հրաչյա Ավագյան

-Ըստ Հ. Ավագյանի, Ջերմուկը, որն իր հանքային աղբյուրների շնորհիվ համարվում է ֆիզիոթերապեւտիկ միջոցներով (արեւ, լույս, օդ, ջուր) բուժման բարձր վարկանիշ ունեցող կենտրոն, Ամուլսարի հանքավայրի շահագործումից հետո կկորցնի առողջարանային գոտի լինելու համարումը:

Ոսկու հանքի շահագործման, պայթեցում-ցնցումների հետեւանքով առաջին հերթին կանհետանան, կոչնչանան Ջերմուկի ջրի աղբյուրները, որոնք իրենց բաղադրությամբ եզակի համարում ունեն աշխարհում եւ համարժեք են Չեխիայի Կառլովի Վարիի ջրերին: Դրա հետեւանքով կտրուկ կնվազի բուժում ստացողների եւ զբոսաշրջիկների թիվը, իսկ սպասարկման ոլորտում աշխատող բնակչության մեծամասնությունը կմատնվի անգործության: Բացի դրանից, պարուստի միջոցներից կզրկվեն հանգստացողներին մի քանի ամսով իրենց տները վարձով տրամադրող տեղացիները:

-«Այնպես որ, եթե վերոնշյալ հանքավայրը շահագործվի, ապա պետք է խաչ քաշենք առողջարանային կենտրոն համարվող Ջերմուկի կենսագրության վրա, որը Հայաստանի յուրահատուկ գեղատեսիլ վայրերից մեկը լինելուց բացի նաեւ եվրոչափորոշիչներով կառուցված միակ առողջարանն է եւ համարվում է նաեւ ընտանեկան հանգստի գոտի», - իր աշխատությունում նշել է Հ. Ավագյանը:

Այսօր համայնքի բնակչությունը, որը դեռեւ ունի ընտրության երկու ուղի՝ դառնալ զբոսաշրջության կամ հանքարդյունաբերական կենտրոն: Ըստ Հ. Ավագյանի, բնակչությունն ընտրել է առաջին տարբերակը: Այդ նպատակով ջերմուկցիները բազմաթիվ անգամ հավաքվել եւ իրենց խոսքն են ասել այս ծրագրի կասեցման վերաբերյալ՝ իրականացնելով նաեւ ստորագրահավաք:

Կառավարությունը դեռեւ 2008 թվականին որոշում է ընդունել Ջերմուկը ճանաչել որպես զբոսաշրջության կենտրոն: Հիմա այդ որոշումն ու Ամուլսարի հանքավայրի շահագործումը հակասում են իրար՝ ի չիք դարձնելով այդ որոշումը:

«Այն, ինչ նախատեսվել է հանքի շահագործումով իրականացնել, հանցագործություն է ոչ միայն Ջերմուկի, այլեւ Սեւանա լճի էկոհամակարգերի նկատմամբ, որտեղ կուտակված են մեր քաղցրահամ ջրերի պաշարները»,- գրել է Հ. Ավագյանը:

**-Ամուլսարի հանքի շահագործումը ի՞նչ ազդեցություն կունենա տարածաշրջանի կենդանական եւ բուսական աշխարհի վրա:**

- Ըստ գիտնականի նյութերի, «Լիդիան Արմենիան» ընկերությունը պաշտոնապես հայտարարել է, որ հանքավայրի շահագործման համար օգտագործելու է ցիանիդի լուծույթ, որի ներգործությունը, ըստ փորձագետների, վտանգավոր է հատկապես վերին ընչուղիների համար: Բացի դրանից, ոսկու կորզումից առաջանալու են կապարի էլեմենտներ, որոնք կնպաստեն հատկապես քաղցկեղային, ուռուցքային հիվանդությունների ու հետծննդյան արատների ավելացմանը:

Ոսկու պաշարների հետ կան նաեւ թանկարժեք եւ ծանր մետաղներ՝ կոբալտ, պղինձ, երկաթ, նիկել, սնդիկ, ցինկ, վոլֆրամ, բիսմուտ, քրոմ, ինչպես նաեւ վնասակար թունավոր տարրեր՝ մկնդեղ, սելեն, տելուր, բերիլիում, կադմիում, որոնք հանքաշահագործման ընթացքում դուրս կբերվեն ընդերքից: Մնալով կորզաթափոնների մեջ, դրանք հետագայում կաղտոտեն- կվտանգեն ինչպես շրջակա միջավայրը, այնպես էլ կենսառեսուրսներն ու էկոհամակարգերը:

Ամուլսարի հանքի բաց եղանակով պայթեցումների ժամանակ, (քաղաքաշինությանը հասցվելիք հնարավոր վնասներից բացի), անխուսափելի է նաեւ ծանր եւ վտանգավոր մետաղներից առաջացող հանքային փոշին, որի էլեմենտները մթնոլորտային օդի հոսքերի եւ քամիների միջոցով կտեղափոխվեն մինչեւ Ջերմուկ եւ հարակից բնակելի տարածքներ՝ ճանապարհին «հանգրվանելով» նաեւ արոտավայրերի, խոտհարքերի, արտերի բուսականության վրա՝ դրանց միջոցով ներթափանցելով կենդանական աշխարհ:

Բացի դրանից, հանքարդյունաբերությունը բացասական ազդեցություն կունենա ինչպես համայնքներում արտադրվող սննդամթերքի շուկայական վարկանիշի, այնպես էլ բնակիչների տնտեսության վրա՝ նվազեցնելով նաեւ վերջիններիս կենսապահովման այլընտրանքային հնարավորությունը:

Նշեմ, որ անկախ փորձագետների հավաստմամբ՝ տարածաշրջանում կբարձրանա նաեւ ռադիոակտիվ ֆոնի մակարդակը՝ վնասելով «ՀՀ Կարմիր գրքում» գրանցված բուսական ու կենդանական աշխարհի տեսակներին, որոնց առկայության պարագայում, ըստ օրենքի, ոչ մի հանքարդյունաբերություն նշված տեղանքում չպետք է իրականացվի: Իսկ ինչ վերաբերում է ծրագիրն իրականացնողների այն խոստումներին, թե տարածքից կտեղափոխվեն անհետացող բույսերն ու կենդանիները եւ նոր պայմաններ կստեղծվեն դրանց հետագա զարգացման համար (միգուցե տեղափոխվեն), սակայն անհետացող բույսը կամ կենդանին կարող է գոյատեւել, զարգանալ միմիայն իրեն հարազատ միջավայրում:

**- Ծրագրով (տեւողությունը 10,4 տարի է) Ամուլսարի ընդերքից նախատեսվել է արդյունահանել տարեկան 10 մլն տոննա հանքաքար: Նման տեմպերով շահագործումից հետո ինչպիսի՞ պատկեր կստանա Վայոց ձորի տարածաշրջանում գտնվող այդ տեղամասը:**

- Ըստ Հ. Ավագյանի, նման կուտակային տարալուծման եղանակով ոսկու կորզումից հետո Ամուլսարի լանջերին մնալու են ծանր մետաղներով եւ թունավոր տարրերով ավելի քան 122 մլն տոննա փշրված ու մանրացված հանքաքարեր, ինչպես նաեւ նույն տարրերով ավելի թույլ հանքայնացված առնվազն 342,7 մլն տոննա մակաբացման (ժայռազերծման) հետեւանքով առաջացած ապարներ: Այնինչ, ըստ գիտնականի, նման հանքարդյունաբերությունը կա՛մ չպետք է թույլատրվեր, կամ էլ պետք է (անգամ անհրաժեշտության դեպքում) շահագործվեր առնվազն 120-150 տարում:

- «Հետազոտության նախնական տվյալները դեռեւ բնութագրական չեն Ամուլսարի ոսկու հանքատեղիի (կամ հանքային մարմնի) համար եւ մենք իրավունք ունենք մտածելու, որ մետաղատարրերի քանակը հաշվարկվածից առնվազն 10 անգամ կարող է ավելի լինել, որի դեպքում թունանյութերի եւ ծանր մետաղների ընդհանուր քանակը կհասնի մինչեւ 8 մլն տոննայի», - նշել է Հ. Ավագյանը: Նա միաժամանակ հավելել է, որ բնական այն ռեսուրսները, որոնց օգտագործումը կատարվում է ոչ ռացիոնալ եղանակով եւ չի ապահովում երկրի իրական տնտեսական աճը, այն պարզապես թալան է, որը աղքատացնում է ինչպես ներկա, այնպես էլ ապագա սերունդներին:

**- Հանքավայրի շահագործումն ու պայթեցումները (մասնավորապես) ի՞նչ ազդեցություն կգործեն Ամուլսարի կողքով անցնող Որոտանի թունելի վրա, որի շինարարության վրա ծախսվել են միլիոնավոր ռուբլիներ (դոլարներ), որով Արփայի եւ Որոտանի ջրերը տեղափոխվում են Սեւանա լիճ,-** հարցրինք աշխարհագրագետ, Հայկական բնապահպանական ճակատ (ՀԲՃ) քաղաքացիական նախաձեռնության անդամ **Լեւոն Գալստյանին**:

- Ամուլսարի ոսկու ծրագիրը, որը հավերժական թթվային ռումբ է, էկոլոգիական աղետի պատճառ կդառնա ոչ միայն Ջերմուկի հանքային աղբյուրների, «Որոտան-Արփա» ջրատար թունելի, Սպանդարյանի եւ Կեչուտի ջրամբարների, այլեւ Սեւանա լճի, Արփա եւ Որոտան գետերի ավազանների համար, - ասաց Լ.Գալստյանը: Հանքի շահագործման դեպքում հարյուրավոր տարիների ընթացքում ծանր, վտանգավոր եւ ռադիոակտիվ մետաղներով շարունակական աղտոտման կենթարկվեն ինչպես մեր հանրապետության, այնպես էլ տարածաշրջանի քաղցրահամ ու հանքային ջրերի կարեւորագույն պաշարները:


Լեւոն Գալստյան

Ամուլսարի հնարավոր շահագործման դեպքում, ինչպես քանակական, այնպես էլ որակական առումով շատ լուրջ փոփոխություններ կկրեն նաեւ ստորգետնյա ջրերը: Դրանց հետեւանքով կվտանգվեն ոչ միայն «Որոտան-Արփա» թունելի ինֆրաստրուկտուրային կառուցվածքները, այլեւ Կեչուտի ջրամբարը: Հագեցած լինելով ապարների թթվային դրենաժի արդյունքում առաջացած բազմաթիվ քիմիական միացություններով, բնականաբար այդ ջրերում առկա կլինեն նաեւ Ամուլսարի տարածքում եղած բոլոր ծանր եւ վտանգավոր մետաղները (կապար, մկնդեղ, կադմիում, բերիլիում, քրոմ, մոլիբդեն, ցինկ, սնդիկ, թորիում, ուրան եւ այլն): Այդ թունավոր մետաղների միացություններով հագեցած ջրերը, որոնք հետո հոսելով Սպանդարյանի, Կեչուտի ջրամբարներ՝ այնտեղից էլ «Արփա-Սեւան» թունել ջրատար՝ կտեղափոխվեն Սեւանա լիճ՝ հիմնովին փոխելով նրա ջրերի կազմն ու որակը:

Ըստ Լ. Գալստյանի, այդ փոփոխված ջրերի ազդեցությունը Սեւանա լճի եւ Արփա գետի ջրերի որակի վրա ոչ մի կերպ մոդելավորված եւ գնահատված չէ անկախ փորձագիտական խմբի կողմից: «Լիդիանը» բացառում է Ջերմուկի հայտնի հանքային բուժիչ ջրերի վրա որեւէ բացասական ազդեցություն՝ պնդելով, որ իզոտոպային հետազոտությունը հաստատել է, որ այդ ջրերը ոչ մի ֆիզիկական կապ չունեն Ամուլսարի ջրային համակարգի հետ: Սակայն դա ամենեւին էլ միանշանակ չէ:

Եվ վերջապես՝ նատրիումի ցիանիդի միջոցով կույտային տարալվացման եղանակի կիրառման մասին, որն ուղղակիորեն կապված է լուրջ առաջնային եւ երկրորդային ռիսկերի հետ, իսկ վերջիններս շատ դեպքերում անկառավարելի են եւ անվերահսկելի:

**- «Լիդիան Արմենիա» ընկերությունը երբվանի՞ց է նախատեսել Ամուլսարի հանքի շահագործումը եւ ներկայումս ինչպիսի՞ աշխատանքներ է իրականացնում նշված տեղանքում**,- հարցրինք էկոլոգ-իրավաբան, «Հայաստանի անտառներ» բնապահպանական հասարակական կազմակերպության տնօրեն **Նազելի Վարդանյանին**:


Նազելի Վարդանյան

- Չնայած «Լիդիան Արմենիա» ընկերությունը հայտարարել է, որ հանքի շահագործումը սկսելու է 2018 թվականի գարնանից, սակայն ներկայումս նշված տեղանքը փակ է եւ անմատչելի թե՛ լրագրողների, թե՛ տեղի բնակիչների համար, - ասաց Նազելի Վարդանյանը:

⇨9

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

Գահիրէ

# Ի՞նչ ըլլալս կարեւո՞ր է ԱԶԳին

Երբ դպրոցական բարձր կարգերու հետ կ՚աշխատիս, յստակօրէն կրնաս տեսնել թէ այսօր արեւմտահայերէնին եւ ընդհանրապէս հայ ըլլալուն «բանն ինչումն է», որովհետեւ ի վերջոյ այս պատանիները մեր նոր սերունդն են, որոնց հարցերը ոչ միայն բարդ են, այլ նաեւ՝ շատ խորունկ:

Դպրոց, դասատու, դասագիրք խնդիրներէն անդին - որոնք կարեւոր են եւ իրենց շատ կարեւոր դերը ունին - կան այնպիսի հարցեր, որոնց պէ՛տք էր անդրադառնայինք այն օրերէն, երբ Յարութիւն Քիւրքճեանը իր «Նշանաւոր» «Երկրորդ հաւասարում բազմաթիւ անյայտներով»ը կը գրէր, այսինքն՝ նախորդ դարու վաթսունականներէն:

Եթէ ժամանակին անդրադարձած ըլլայինք, թէ ի՛նչ կ՚ըսէր այն օրերու նոր սերունդը - որովհետեւ միակը չէր Քիւրքճեան, որ նման խնդիրներ կը դնէր, իր հետ կային նաեւ Պըլտեան, Սեթեան, Ժիրայր Դանիէլեան եւ մէկ-երկու ուրիշներ - այսօր թերեւս ա՛յս տարողութեամբ չըլլային մեր խնդիրները, զորս չենք իսկ սկսած դիմագրաւել:

Երբ երկրորդականի վերջին դասարանի աշակերտը պարզ եւ յստակ կ՚ըսէ՝ «բայց օրիո՛րդ, ինչո՞ւ հայերէն պիտի սորվիմ, գիտցած հայերէնս ինծի կը բաւէ, դպրոցէն դուրս ա՛լ բնաւ պէտք պիտի չունենամ այդ լեզուին», եւ երբ ես կը գիտակցիմ, թէ լեզուն որքա՜ն բան կը կրէ իր վրայ մեր սովորութիւններէն եւ բարքերէն, այն ատեն անդրադարձս տագնապի կը վերածուի՝ ուշացած չե՞նք:

Յետոյ յարգելի դասախօս մը կը յայտարարէ, նախապէս զգուշացնելով թէ իր յայտարարութիւնը միայն ի՛ր համոզումն է, «երբ երկարող ձեռքը չես կրնար կտրել, համբուրէ եւ ճակտիդ դիր. Globalization-ն ալ նոյնն է, չենք կրնար դիմադրել մեզմէ այնքա՜ն աւելի զօրաւոր բանի մը», բայց չ՚ըսեր թէ համաշխարհայնացումը ընդունելէ ետք ի՛նչ պէտք է ընենք:

Ճիշդ է որ փոխուած է կեանքը, փոխուած են խաղին օրէնքները, բայց խաղը ինք նոյնն է, որովհետեւ «արեւին տակ նորութիւն չկայ»ն ի զօրու է ոչ միայն արուեստին, այլ նաեւ կեանքին համար:

Հիմա դիմագիրքն (facebook) է կեդրոնը ամենայնի. եւ այդ դիմագիրքի էջերուն վրայ կը հանդիպիս երիտասարդներու, որոնք երբեմն իրենց տագնապները կ՚արտայայտեն, յուսալով որ մէկը պիտի կարենայ գոհացուցիչ պատասխաններ յայթայթել, բայց ... ձայն բարբառոյ յանապատի:

«Ի՞նչ ենք եւ ի՞նչ պէտք է ըլլանք»:

Հարցումը անպատասխան կը մնայ:

Այլ անգամ՝ «Ենթադրենք թէ բարեկամ մը ունինք՝ Թոմաս, որ Հայաստան ծնած-մեծցած չէ, այլ ուրիշ երկրի մը մէջ: Ըստ ձեզի, Թոմաս հետեւեալ պայմաններէն ո՞ր մէկը պէտք է լրացուցած ըլլայ, որ զինք «հայ» համարենք.

Կարելի է անշուշտ մէկէ աւելի պայմաններ ընտրել:

Ա. Թոմասին երկու ծնողներն ալ հայ են:

Բ. Թոմասին ծնողներէն գոնէ մէկը հայ է:

Գ. Թոմաս հայերէն կը խօսի:

Դ. Թոմասին մականունը -եան-ով կ՚աւարտի (կամ -յան-ով):

Ե. Հայաստանի քաղաքացիութիւն ունի:

Զ. Վերի բոլոր պայմանները:

Այս անպաշտօն հարցախոյզին մասնակցած են 19 անձեր, 11 տղամարդ (58 %) եւ 8 կին (42%):

Մասնակցեր է նաեւ մէկ ոչ-հայ:

Մասնակցողներուն տարիքը՝
45-էն վեր՝ 4 (5%),
45-էն վար՝ 15 (79%):

Պատասխանները հետեւեալ պատկերը կը պարզեն.

Ա. 0 Թոմասին երկու ծնողներն ալ հայ են:

Բ. 5 Թոմասին ծնողներէն գոնէ մէկը հայ է:

Գ. 3 Թոմաս հայերէն կը խօսի:

Դ. 0 Մականունը եան-ով կամ յան-ով կ՚աւարտի:

Ե. 2 Հայաստանի քաղաքացիութիւն ունի:

Զ. 3 Վերի բոլոր պայմանները կը լրացնէ:

Է. Եղած են նաեւ 3 անձեր, որոնք ընդհանրապէս պատասխան չեն տուած, բայց հաւներ են հարցախոյզը:

Ը. 4 անձեր պատասխաներ են հարցախոյզէն դուրս պատասխանով՝ «եթէ ինքզինք հայ կը զգայ, ուրեմն հայ է»:

Այս վերջինը ընդունելի չէ ԱՅՍ հարցախոյզին համար, որովհետեւ պատրաստողը կը գրէ՝ «կը խնդրուի զգացումները դուրս ձգել եւ միայն տրամաբանութեամբ պատասխանել, որովհետեւ ես աւելի հետաքրքրուած եմ, թէ մենք ինչպէ՛ս կը դիտենք զիրար եւ կը փորձեմ խթանել վերանայելու մենք մեզ եւ մեր նախկին մօտեցումները»:

Եւ կը շարունակէ.

«Այս գրութեան նպատակներէն մէկն ալ մարդահամարն է. կարելի չէ հանդիպիլ մարդոց եւ հարցնել, թէ ի՛նչ կը զգան իրենց հայութեան նկատմամբ: Վիճակագրական տուեալները մեր գաղութներուն առնչութեամբ կա՛մ շատ հին են, կամ՝ ոչ ճշգրիտ, կամ ալ՝ երկուքը միաժամանակ» (1):




Ամբողջ զրոյց մը կայ այս գրութեան տակ, բայց ոչ մէկ պատասխան, որուն շուրջ գոնէ մեծամասնութիւնը համաձայն ըլլար:

Այս բոլորը՝ ըսելու համար որ կա՛յ փոքր տոկոս մը երիտասարդներու, որոնք անկախ իրենց ապրած վայրէն՝ Հայաստան թէ Սփիւռք, կը մտածեն երեւոյթին մասին, որ այսօր հայ ըլլալն է: Ի՞նչ կը նշանակէ հայ ըլլալ:

Չենք մտածած: Կամ՝ նոր սկսեր ենք մտածել: Սկսեր ենք հարցադրումներ ձեւակերպել: Պատասխաններ պիտի փնտռե՞նք:

-Իմաստ չունի,- պիտի ըսեն շատեր,- ըլլալիքը պիտի ըլլայ. հայը պիտի մնայ, բայց իր կեցութեան վայրերը պիտի փոխուին:

Հետեւաբար՝ որո՞նք են այն բաղադրիչները, այսօ՛ր, որոնք մեր ինքնութիւնը կը կազմեն:

Ա. Հո՞ղը: Բայց բոլոր հայերը չեն, որ հայրենի հողին վրայ կ՚ապրին:

Բ. Լեզո՞ւն: Բայց բոլոր հայերը չեն, որ հայերէն կը խօսին եւ հաւատացած են, որ իրենք հայերէն խօսող հայերէն նուազ չեն իրենց հայութեամբ:

Գ. Պատմութիւն եւ մշակո՞յթ: Այսօր կրնա՞նք ըսել, որ ԲՈԼՈՐ հայերը գիտակ են իրենց պատմութեան եւ մշակոյթին: Տակաւին՝ շատեր պիտի ըսեն, որ պատմութեամբ եւ մշակոյթով չէ որ պայմանաւոր է մեր հայութիւնը:

Դ. Գիտակցութի՞ւնը այս բոլորին:

Անշուշտ պէտք է շեշտել, որ այս հարցադրումները աւելի մեզի՛, սփիւռքահայերուս համար են, որովհետեւ այս հարցերէն շատերը կը դադրին հարց ըլլալէ, երբ կ՚ապրիս հայրենիքիդ հողին վրայ:

Կայ կեցուածք մը, որ կ՚ըսէ, թէ անհատը ի՛նք պիտի որոշէ իր ինքնութիւնը:

Անհատական ազատութիւն, այո, բայց անհատը ինչպէ՞ս պիտի որոշէ բան մը ուզել թէ՞ ոչ, եթէ այդ բանին ինչ ըլլալուն, էութեան, բնոյթին ծանօթ չէ:

Եւ... ի՞նչ կրնայ պատահիլ, եթէ ինքնութեան հարցը մոռացութեան ենթարկուի:

Լաւ կ՚ըլլայ, որ այս բոլորին մասին մտածենք, նախքան մեր երիտասարդութիւնը յանցաւոր յայտարարելը:

*1 Ara Yeramian-ի դիմագիրքի էջէն առնուած: Վիճակագրական տախտակը եւս իրն է:*

# Ամուլսարի հանքավայրի շահագործումը հանցագործություն է ոչ միայն Ջերմուկի, այլեւ Սեւանա լճի էկոհամակարգերի հանդեպ

⇨8

Նա նշեց, որ Ամուլսարի ոսկու հանքի շահագործման ծրագիրը, որը բացասական գնահատականի է արժանացել միջազգային եւ տեղի կազմակերպությունների կողմից, իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի կոպիտ խախտումներով:

Այնինչ Ջերմուկը ազդակիր համայնք է ու եթե քննարկումներ չեն կատարվում եւ ժողովրդի կարծիքը հաշվի չի առնվում, ուրեմն այդ փորձաքննությունը չի կարող օրինական ճանաչվել:

Էկոլոգ-իրավաբանը նշեց մի շատ կարեւոր հանգամանք եւս: Նրա խոսքերով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ «Շրջակա միջավայրի վրա գնահատման մեթոդիկան» պետք է ընդունվի ՀՀ կառավարության կողմից, սակայն մինչեւ օրս այն հաստատված չէ: Եթե այն չկա, նշանակում է փորձաքննություն իրականացնող մարմինը ռեալ գնահատում չի կարող իրականացնել, որովհետեւ մեթոդիկա չունի, իսկ առանց ազդեցության գնահատման հնարավոր չէ փորձաքննություն կատարել, հետեւաբար բոլոր կայացրած փորձաքննական եզրակացությունները անօրինական են եւ պետք է անվավեր ճանաչվեն:

Բացի դրանից, Գնդեվազից մեկ կմ հեռավորության վրա սկսվել է ցիանային արտադրության ոսկու կորզման ֆաբրիկայի տեղակայումը, որը անխուսափելիորեն կհանգեցնի համայնքի վերաբնակեցման վտանգի: Տեղանքը, որով անցնելու է հանքաքարով բեռնված ծանր տեխնիկան, անխուսափելիորեն կենթարկվի կենսապայմանների վատթարացման, որի հետեւանքով համայնքում ոչ միայն գյուղատնտեսությամբ զբաղվելը, այլեւ ապրելն անհնար կդառնա:

«Հայաստանի անտառներ» հ/կ տնօրենը նշեց, որ հանքավայրի շահագործման աշխատանքներից արդեն տուժել են նաեւ հարակից բնակավայրերի շինությունները, դրանց տերերը բնապահպաններին ցույց են տվել պայթյունից վնասված պատեր:

Այնինչ նախկինում Ջերմուկում, նույնիսկ շինարարական աշխատանքների դեպքում, պայթեցումներ չէին կատարում, քանի որ յուրաքանչյուր ցնցում կարող էր հանգեցնել հանքային ջրերի աղբյուրների կորստի:

Ըստ Ն. Վարդանյանի, Ամուլսարում ոսկու բաց եղանակով արդյունահանման ծրագրի իրականացման եւ հանքանյութը վերամշակող ցիանային ֆաբրիկայի կառուցման դեմ բողոքի ցույցով արդեն հանդես են եկել տարածքին հարակից Վայոց ձորի Գնդեվազ գյուղի 210 բնակիչներ:

Հավաքելով նույնքան ստորագրություն՝ նրանք նամակով դիմել են գլխավոր բաժնետեր՝ Համաշխարհային բանկի մեջ մտնող Միջազգային ֆինանսական կորպորացիային (IFC), ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին, ինչպես նաեւ ընկերության մյուս ֆինանսավորող՝ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկին (EBRD)՝ պահանջելով չֆինանսավորել Ամուլսարի ծրագիրը:

«Մեր իրավունքների խախտումը տեղի է ունենում IFC եւ EBRD-ի հովանավորչությամբ եւ «Լիդիան Արմենիա» ընկերության ոչ իրավական ճանապարհով հարցերի լուծմամբ: Այն բնակիչները, ովքեր չեն պատրաստվում Գնդեվազը լքել եւ ստիպված են իրենց հողերը վաճառել, դառնում են այդ մանիպուլյացիայի զոհերը»,- բողոքում նշել են գյուղացիները:

Գնդեվազցիները միաժամանակ IFC-ից պահանջել են անհապաղ դադարեցնել համայնքի բնակչության համար մեծ վտանգներ պարունակող հանցավոր ծրագրի ֆինանսավորումը, հաշվի նստել համայնքի հետ՝ չխախտելով վերջինիս իրավունքները:

Դիմում-բողոքը ստորագրել են 210 գնդեվազցիներ: Բացի դրանից, Գնդեվազի բնակիչները դիմել են դատարան՝ հանքավայրի շահագործման թույլտվությունը անվավեր ճանաչելու հայցով:

**Նյութերին ծանոթացավ եւ գրուեց՝**
**ՀԱՍՄԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ**

***Հ.Գ.*** *Մեր կողմից հավելենք, որ «Լիդիան Արմենիա» ընկերությունը (հիմնադրվել է 2005 թվականին) հայկական երկրաբանահետախուզական կազմակերպություն է, որը Հայաստանում մասնագիտանում է նոր հանքավայրերի հայտնագործման ուղղությամբ: Ընկերությունն իր լայնամասշտաբ երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում հայտնաբերել է ներկայումս իր առաջնային ծրագիր հանդիսացող ոսկու հանքավայր Ամուլսարը, որը վերջին 22 տարում իր ընդերքում պարունակող հանքանյութով առաջինն է Հայաստանում:*

*«Լիդիան Արմենիայի» բաժնետոմսերի 95 տոկոսը պատկանում է օֆշորային «Lydian International» ընկերությանը: Վերջինիս առավել խոշոր բաժնետերերն են՝ Միջազգային ֆինանսական կորպորացիան (Համաշխարհային բանկի խումբ) եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը:*

AZG NEW SHABAT 1.QXD 19/07/2017 22:12 Page 10



# Հայաստանի պետական օրհներգի առկախ խնդիրը հարիւրամեակի սեմին

Հայաստանի պետական վերականգնումի հարիւրամեակը պատմա- կան հանգրուան մըն է, որ անհրաժեշտ է դիմաւորել յառաջիկայ տարի, ազգովին եւ միացեալ ուժերով: Բնականաբար արժանավայել կերպով պիտի նշուին Սարդարապատի եւ Բաշ-Ապարանի ժողովրդական պանծալի յաղթանակները, որոնք ճամբայ հարթեցին ազգային պետականութեան վերականգնումին: Մեր յաղթանակներու եւ սխրագործութեանց կարգին անհրաժեշտ է նաեւ անդրադառնալ քաղաքական ու հոգեբանական այն ազդակներուն, որոնք սահմանափակեցին արիւնով ձեռք ձգուած անկախութիւնը՝ խուսափելու համար ապագայ վտանգներէ եւ դաստիարակուելու համար անցեալի դասերէն: Ամբողջ դար մը պատմութիւն ապրելէ ետք կիրքերը հանդարտած պէտք է ըլլան առարկայական քննարկումներ կարենալ կատարելու համար:

Հայաստանի Հանրապետութեան Նախագահէն սկսեալ բազմաթիւ քաղաքագէտներ, պատմաբաններ ու հրապարակագիրներ Առաջին հանրապետութիւնը հիմը կը նկատեն Երկրորդ՝ Խորհրդային Հայաստանի, իսկ վերջինն ալ՝ ներկայ Անկախ Հայաստանի: Այդ կերպով պատմութեան շղթան ճիշդ բնորոշած կըլլայ - կառչիլ մէկուն կամ միւսին, եւ, առաւել եւս, հակադրել մէկը միւսին ոչ հայրենասիրութիւն է, ոչ ալ պատմագիտութիւն: Երրորդ հանրապետութիւնը առանց դժուարութեան ընդունեց եւ որդեգրեց եռագոյն դրօշը, բանավէճեր տեղի ունեցան մասնաւորաբար պետական զինանշանի շուրջ, մանաւանդ այնտեղ խճողուած կենդանիներու խորհրդանշաններուն մասին, սակայն այսօր հարցեր չկան այդ կապակցութեամբ:

Բայց տակաւին կը մնայ պետական օրհներգի հարցը, որ կը թուի թէ դեռ զոհ է հատուածական նախապաշարումներու կամ կամք պարտադրելու փորձերու:

«Մեր հայրենիք, թշուառ, անտէր» կարկտնուած երգը առաւելաբար պարգեւն է երաժիշտ Լորիս Ճգնաւորեանի, հաւանութեամբը անոր պաշտպան կանգնող հատուածին: Ճգնաւորեան հրաշալի գործ կատարեց անկախութեան առաջին օրերուն, մութ ու ցուրտ ժամանակամիջոցին անվերջ համերգներ կազմակերպելով. ժողովուրդը կը խուժէր դահլիճ՝ հոգեւոր ու մարմնական ջերմութիւն ստանալու: Դասական համերգներու կարգին կը տրուէին նաեւ հոգեւոր երաժշտութեան յայտագիրներ, որոնք նորութիւն էին եօթանասուն տարի անաստուած իշխանութեան ներքեւ ապրած ժողովուրդին, որ այդ կերպով կը վերագտնէր իր ինքնութիւնը եւ կիւրացնէր իր հոգեւոր ժառանգութիւնը. սակայն, այդ հոգեպարար եւ օգտաշատ աշխատանքին կողքին Պր. Ճգնաւորեան տեղի եւ անտեղի կը հնչեցնէր «Մեր հայրենիքը»՝ զայն ժողովրդականացնելու յամառ ճիգով մը: Նոյնիսկ անկախութեան հռչակման օրը իր խումբը կը բերէր խորհրդարան - բնականաբար ՀՀՇական աւագանիին մեղսակցութեամբ- հոգեկան ճնշում բանեցնելու պատգամաւորներուն վրայ: Հակառակ «թշուառ անտէր» եւ կարգ մը այլ բառերու փոփոխութեան՝ օրհներգը մնաց խնդրական: Յանձնախումբեր կազմուեցան, երգահաններու մրցանքներ յայտարարուեցան, սակայն խնդիրը մնաց օրակարգի վրայ:

Ոմանք հեգնանքով ըսին, թէ դատարկուող եւ անտէր Հայաստանի մը համար պատշաճ օրհներգ մըն է «Մեր հայրենիքը»: Սակայն, առաջարկներ ալ եղան պահպանելու Արամ Խաչատուրեանի յօրինած հզօր օրհներգը, անհրաժեշտ փոփոխութիւնները կատարելով անոր վրան:

Չէ՞ որ մեր ժողովուրդը շատ հակամէտ է հետեւելու Ռուսաստանին, որ իր խորհրդային շրջանի օրհներգը պահեց՝ բանաստեղծութեան մէջ փոփոխութիւններ մտցնելով: Այսուհանդերձ խնդիրը մնաց անլոյծ եւ օրակարգի վրայ: Ըսուեցաւ որ օրհներգի փոփոխութեան մասին որոշումը փոխանցուած է Մշակոյթի նախարարութեան: Իսկ Մշակոյթի նախարարներէն մէկն ալ խոստովանեցաւ ըսելով. «Այնքան ատեն որ Դաշնակցութիւնը գործօն է այս կառավարութեան մէջ, կարելի չէ օրհներգին խնդիրը արծարծել»: Կը նշանակէ, թէ հատուածական կալանքի տակ է մեր պետական օրհներգի խնդիրը:

«Մեր հայրենիքը», որ միայն դաշնակցական շրջանակներու մէջ ծանօթ էր, սկսած է պարտադրուիլ նաեւ սփիւռքի հայութեան, որ յաճախ դժկամութեամբ կը հարկադրուի զայն կատարել կամ լսել պաշտօնական առիթներով:

«Մեր հայրենիքը» եօթանասուն տարի հակադրուեցաւ Խորհրդային Հայաստանի իրականութեան եւ ատով իսկ խորթացաւ սփիւռքի զանգուածներուն:

Ի դէպ, հարիւրամեակի տօնախմբութիւնները պէտք է ընդգրկեն նաեւ Խորհրդային Հայաստանի իրագործումները: Հակառակ այդտեղ իշխող անմարդկային վարչակարգին, մեր ժողովուրդը գիտցաւ ու կրցաւ նոր ոսկեդար մը կերտել գրականութեան, երաժշտութեան, արուեստներու եւ գիտութեան մէջ: Հարուստ ժառանգութիւն մը՝ որ յումպէտս վատնուեցաւ Երրորդ հանրապետութեան օրով. հետեւաբար հարկ է ոգեկոչել այդ սխրագործութիւնները աննախապաշար կերպով: Գալով պետական օրհներգին՝ վերջերս կրկին արծարծուած է այդ հարցը՝ Շարլ Ազնաւուրին վերագրուած մէկ ցանկութեամբ, որով մեծ երգիչը կը փափաքի տեսնել որ իր յօրինած երգը՝ «Քեզ համար, Հայաստան» դառնայ Հայաստանի պետական օրհներգը, եւ իբր թէ նախագահ Սերժ Սարգսեան եւս համամիտ եղած ըլլայ: Անշուշտ ազգովին կը սիրենք Ազնաւուրը, բայց ճշմարտութիւնը՝ աւելի: Հայաստանին նուիրուած տխուր երգ մը, որքան ալ հոգեցունց, տուեալները չունի օրհներգ դառնալու, մանաւանդ որ «Մեր հայրենիքն» ալ զոհուելով կը վերջանայ եւ բոլորովին անյարիր է ապրելու եւ ապագայ կերտելու ձգտող ժողովուրդի մը համար: Կենթադրենք որ նախագահին ալ համամտութիւնը հաճոյախօսութեան սահմանէն անդին չ՛անցնիր:

Արամ Խաչատուրեանի յօրինած հզօր օրհներգը ցարդ կը մնայ անմրցելի, մանաւանդ երգահանին խոստովանութեամբ ինք օգտագործած է մեր հոգեւոր երաժշտութեան տարրերը: Արդարեւ, երկու տարբեր առիթներով Արամ Խաչատուրեան երգահան Համբարձում Պէրպէրեանին եւ գրող Կարպիս Սուրէնեանին յայտնած է, թէ ինք պետական հիմնին մէջ օգտագործած է տարրեր մեր հոգեւոր երաժշտութենէն:

Իսկ օրհներգի բառերը յօրինած է այդ շրջանի պալատական բանաստեղծ Սարմէն. թէեւ որքան ալ տաղանդաւոր ըլլար բանաստեղծը, անհնար էր որ տարբեր բանաստեղծութիւն որդեգրէին եթէ այդ բանաստեղծութեան մէջ բացակայէին «սովետական», «կոմունիզմ», «Լենին» բառերը: Հեռու մեզմէ յաւակնութիւնը այստեղ գրական ու երաժշտագիտական քննարկումներ կատարելու, թէեւ այդ մասին ալ իրենց կարծիքը յայտնած են մասնագէտները: Կարելի է ամբողջութեամբ նոր բանաստեղծութեամբ փոխարինել Սարմէնի բառերը, կամ՝ վիրաբուժական փոփոխութիւններ կատարել՝ ինչպէս եղած է «Մեր հայրենիքի» պարագային:

Երգահան Համբարձում Պէրպէրեան՝ տաղանդաւոր երաժիշտ մըն էր, որ խիստ բացասական բնորոշումներով արտայայտուած է «Մեր հայրենիքի» մասին - «Դուք կրնա՞ք երեւակայել, որ օտար երգ մը պատշաճեցուած է հայերէն բառերու ... ու ան ալ մենք այսօր պետութեան քայլերգ պիտի ընդունինք: Այդ տեսակի երգ մը իբր հիմն ընդունիլ՝ ասիկա հայ ժողովուրդի համար նուաստացուցիչ պարագայ է: Մենք բացառիկ մշակոյթ ունեցող ժողովուրդ եղած ենք անցեալին: Յետոյ Հայաստանի մէջ թէ արտասահմանի, երգահա՞ն կը պակսէր որ կարենար արժանաւոր կերպով գրել մեր հիմնը: Եւ այդ բոլոր ուժերը մոռնալ եւ երթալ «Մեր հայրենիք»ին: Յետոյ՝ ուրիշ բան մը եւս «Մեր հայրենիք»ին մէջ մեր դասական վանկերու շեշտաւորման սխալ կայ: Եւ կը զարմանամ, թէ ինչպէս ատիկա ընդունեցին հայրենի երգահանները:

Ես հակառակ եմ, ու պէտք է այդ հիմնը փոխել շուտով: Բնականաբար «Մեր հայրենիք»ը օտարամուտ երգ մըն է իր բառերով թէ երաժշտութեամբ: Բանաստեղծութիւնը Միքայէլ Նալպանտեանը շարադրած է հայերէնով՝ օգտագործելով իտալացի բանաստեղծ Լուիճի Մերքանթինիի հեղինակած նիւթը: Այս վերջինը հեղինակն է Կարիպալտիի ռազմերգին: Բանաստեղծութիւնը նուիրուած է իտալացի հնձուոր աղջկան մը, որ կը գովերգէ իտալացի հերոսները, որոնք կը կռուին Աւստրո-Հունգարիոյ դէմ: Կը տեսնուի թէ երգն ու բանաստեղծութիւնը որքան հեռու են հայութենէն եւ Հայաստանէն: Կըսուի թէ յետագային Բարսեղ Կանաչեան եւս մշակումներ կատարած է. այսուհանդերձ երգը կը մնայ անհարազատ:

«Մեր հայրենիք»ը իբրեւ ազգային օրհներգ ընդունուած է 1991ի Յուլիսին, զայն փոխ առնելով Առաջին հանրապետութենէն: Երգը առաջին անգամ հայկական շրջանակի մէջ հնչած է 1885ի Մարտ 15ին, Թիֆլիսի «Արծրունի» թատրոնին մէջ սարքուած համերգին: Իսկ Արամ Խաչատուրեանի յօրինածը որդեգրուած է 1944ին, իբրեւ Խորհրդային Հայաստանի պետական օրհներգ: Օրհներգը պէտք չէ վերածուի քաղաքական ոտնագնդակի: Պր. Կիրօ Մանոյեան, ՀՅԴ Հայ դատի հայաստանեան գրասենեակի պատասխանատու, անդրադառնալով օրհներգի մասին եղած քննարկումներուն՝ ըսած է. «Հայաստան ունի իր օրհներգը»:

Դժբախտաբար այդ օրհներգը չէ բխած հայութեան էութենէն, ոչ ալ կապ ունի Հայաստանի հետ: Առաւել եւս տարիներով սփիւռքի մէջ խորհրդանշած է հատուածական կիրքի դրսեւորումը: Եթէ Պր. Մանոյեան եւ իր գաղափարակիցները կուսակցութիւնը կը սիրեն աւելի քան հայրենիքը, ըսելիք չունինք: Սակայն պետականօրէն մտածող մարդիկ պէտք է հրաժարին հատուածական նախապաշարումներէ եւ ունկնդիր ըլլան համայն հայութեան սիրտի զարկին: Այդ զարկին մէջ գոյութիւն չունի իտալացի աղջկան երգը: Եթէ 100-ամեակին առիթով հայութիւնը լաւատեսութեամբ եւ կառուցողական միտքով պիտի դիմաւորէ հայրենիքի ապագան, ուրիշ պատուաւոր ուղի չկայ, բացի երգելէ Խաչատուրեանի փառապանծ օրհներգը:

**Ե.Ա.**

**Խմբագրական «Պայքար» շաբաթաթերթի**

## Դրամահավաք հօգուտ Գրենֆելի հրդեհից փրկված հայ դասախոսի



Մոտ ութ տասնյակ մարդու կյանք խլած լոնդոնյան «Գրենֆել թաուերի» ահավոր հրդեհից փրկված հայ դասախոս **Մեսրոպ Քասեմջյանի** բարեգութ ուսանողները 1,500 ֆունտ ստերլինգի դրամահավաք են ձեռնարկել կարողանալ մի փոքր մեղմացնելու համար իրենց սիրելի Ռոբբիի նյութական կորուստը: Մեսրոպը, որն ապրում էր 17-րդ հարկում, քրեական հանցագործության մասնագետ է Քրոյդոն քոլեջում:

«JustGiving» կայքում դրամահավաքի կազմակերպիչները կոչ են արել օժանդակել նրան դարձյալ ոտքի կանգնելու եւ շարունակելու ինչպես իր դասախոսական կյանքը, այնպես էլ դոկտորական գծով ուսումնասիրությունները:

Հրդեհի բռնկման ժամանակ նա ֆիլմ դիտելիս է եղել հեռուստատեսությամբ, երբ լսել է հրշեջ մեքենաների ահազանգը: Արթնացրել է մորաքրոջը եւ ընկերուհու հետ փորձել աստիճաններով ցած իջնել: «10-12 րոպեից, երբ դուրս եկանք շենքից, տեսանք, թե ինչպես է բարձրահարկը վառվում մոմի նման», ասել է նա ամերիկյան «Today» հեռուստածրագրի լրագրողի հետ խոսելիս: Հ. Ծ.

## Ջոն Խաչիկյանը հովանավորում է Գյումրիի ակնաբուժական կլինիկան



«Ինչքան շատ տաս, այնքան շատ կստանաս: Սա է իմ նշանաբանը», նշել է «Նյուպորտ Բիչում» (Կալիֆոռնիա) բնակվող 81-ամյա գործարար Լութեր Ջոն Խաչիկյանը, ով իմանալով «Հինգ միլիոնը հինգ ակնաբուժական կենտրոնների համար» ծրագրի մասին, անմիջապես պատրաստակամություն է հայտնել հովանավորելու Հայաստանում շրջանային ակնաբուժական կլինիկաներից մեկը՝ Գյումրիինը:

Ակնաբուժական այդ կլինիկաները խնայելու են Երեւան հասնելու մարդկանց ժամանակն ու ֆինանսները:

Գյումրիի Ջոն Խաչիկյանի անվան կլինիկան չորրորդն է, եւ կրում է իր հոր անունը: Վերջինս ցեղասպանությունը վերապրողներից է, որ իր մոր ու եղբոր հետ փախչելով Թուրքիայից հաստատվել է կենտրոնական Կալիֆոռնիայում եւ զբաղվել հողագործությամբ:

Գործող մյուս կլինիկաներից մեկը (Հայկ Բոյաջյանի անվան)՝ 2015-ին է բացվել Իջեւանում, իսկ մյուսը (Հասմիկ եւ Ջոն Մկրտչյանների անվան)՝ բացվել է 2016-ին Սպիտակում: Նախատեսվում է Կապանի կենտրոնը բացել այս ամսվա ընթացքում: Հինգերորդը գործելու է Եղեգնաձորում:

Բոլոր հինգ շրջանները բծախնդրորեն ընտրված են եղել ՀՀ առողջապահության նախարարության կողմից ակնաբուժական մատչելի ծառայություն մատուցանելու համար տեղի բնակիչներին:

Տեղեկությունը՝ «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթից: Հ. Ծ.

AZG NEW SHABAT 1.QXD 19/07/2017 22:12 Page 11



# «Քաոս» գործողությունը շարունակվում է

## *Թրամփի նոր ռազմավարությունը ծուղակ է ստեղծում Մերձավոր Արեւելքում*

Նախագահի Դոնալդ Թրամփը եւ Սաուդյան Արաբիայի թագավոր Սալման բեն Աբդել Ազիզ ալ-Սաուդը հեռախոսազրույցի ընթացքում քննարկել են Քաթարի խնդրի լուծման հետ կապված ջանքերը: Հեռախոսազրույցը տեղի է ունեցել տարածաշրջանում ԱՄՆ պետքարտուղար Ռեքս Թիլերսոնի՝ սաուդցիների համար անհաջող շրջագայությունից հետո: Սաուդցիների պատասխաններին հակառակ՝ ամերիկացիները Քաթարում ստորագրեցին երկու երկրների փոխըմբռնման հուշագիր: Այնտեղ շարադրվում են անհրաժեշտ ջանքերը, որոնք Դոհան պետք է ձեռնարկի հակաահաբեկչական պայքարն ուժեղացնելու եւ ահաբեկչության ֆինանսավորումը կասեցնելու նպատակով: Դրանից հետո ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան եւ Քուվեյթը անսպասելիորեն հակամարտ կողմերին երկխոսության կոչ արեցին:

Խնդիրն այն է, որ տվյալ փաստաթուղթը խարխլում է այսպես կոչված հակաքաթարյան կոալիցիայի գաղափարախոսական կարեւորագույն հիմքերից մեկը: Կոալիցիայի երկրներն են Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն եւ Բահրեյնը, որոնք շարունակում են Քաթարին մեղադրել ահաբեկչությունը հովանավորելու եւ Իրանի հետ համագործակցելու մեջ: Հիշյալ պետությունները Քաթարին ներկայացրել էին վերջնագիր՝ կոչ անելով տասնօրյա ժամկետում կատարել դրա պահանջները: Վերջնագրի 13 կետերի թվում են Իրանի հետ դիվանագիտական հարաբերությունների մակարդակի իջեցումը, թուրքական ռազմակայանի փակումը, ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորման դադարեցումը, արաբական երկրների ներքին գործերին միջամտելուց եւ ընդդիմադիր գործիչներին օգնելուց հրաժարումը, ինչպես նաեւ «Ալ-Ջազիրա» արբանյակային հեռուստացանցի հաղորդումների դադարեցումը: Դոհան մերժել էր արաբ հարեւանների մեղադրանքները՝ հայտարարելով, որ առաջ քաշված պահանջները ոտնահարում են իր ինքնիշխանությունը: Սակայն բանը միայն դա չէ: Քաթարին պաշտպանեցին Թուրքիան եւ Իրանը, իսկ բուն գործընթացը Պարսից ծոցում ստացավ բազմաքայլ կոմբինացիայի բնույթ:

Ռուս պատմաբան **Ստանիսլավ Տարասովը** «Ռեգնում» գործակալության կայքում նշում է դրա հիմնական ուրվագծերը:

1. Սկսեց գործել Քաթար-Թուրքիա-Իրան դաշինքը:

2. Սաուդյան Արաբիայում այն տպավորությունը ստեղծվեց, թե Դոհայի հետ հակաահաբեկչական հուշագիր ստորագրելով՝ Վաշինգտոնը դավաճանեց Էր-Ռիադին:

3. Ամերիկացի փորձագետները գտնում են, որ Քաթարի շրջափակումն ամրապնդում է Իրանի դիրքերը՝ Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհրդի հավանական փլուզման պատճառով: Բացի դրանից, Իրանը եւ Օմանը չմիացան սաուդցիների հակաքաթարյան դաշինքին եւ դժվար թե դա անեն ապագայում:

Հիմա խոսենք իրադարձությունների խորքային կողմի մասին: Մոսուլը հետ է վերցված: Պատմության մեջ առաջին անգամ Իրաքի շիա ուժերը ազատագրեցին սուննի բնակչությամբ քաղաք, ինչը նշանակում է երկրում միջդավանանքային պայքարի շարունակում, թերեւս՝ փոքր-ինչ այլ ձեւով: Կանխատեսվում է Եմենում հուսիների եւ Սաուդցիների բախումների շարունակում, սկսել են խոսել նույնիսկ Եմենի վրա սաուդցիների հնարավոր զինված ներխուժման մասին: Այս կապակցությամբ առանձնահատուկ ուշադրության է արժանի Թուրքիայի դիրքորոշումը, ուր Թիլլերսոնն այցելեց Սաուդյան Արաբիա մեկնելու նախօրեին: Ամերիկացի փորձագետների գնահատման համաձայն, Վաշինգտոնը «հանկարծ» որոշել է ինչ-ինչ փոփոխություններ կատարել իր մերձավորարեւելյան քաղաքականության մեջ՝ փլուզել Քաթար-Թուրքիա-Իրան նոր կոալիցիան, վերականգնելով երբեմնի Թուրքիա-Իսրայել-Սաուդյան Արաբիա դաշինքը, ճիշտ է, սկզբնական շրջանում Էր-Ռիադին զրկելով եռյակի հնարավոր անդամի կարգավիճակից: Այդ նպատակով հարկավոր է սկսել Անկարայի հետ մերձեցման գործընթաց՝ հասկանալով, որ Իսրայելը եւ Սաուդյան Արաբիան կարող են գործել միայն որպես անդրկուլիսյան դերակատարներ, բայց ոչ թե որպես նոր աշխարհաքաղաքական ճարտարապետության հիմքեր: Սա անհրաժեշտ է դարձնում Սիրիայի ճակատում Թուրքիա-Իրան դիմակայության վերականգնումը:

Սա հենց այն է, ինչը ամերիկյան The American Beast հրատարակությունը անվանում է «Սիրիայում Թրամփի նոր ռազմավարություն», որը Թիլլերսոնը քննարկեց Թուրքիայում: Անկարա-Վաշինգտոն հարաբերություններում փորձաքար է Սիրիայում քրդերի եւ այսպես կոչված ժողովրդավարական ընդդիմության վրա ԱՄՆ-ի հենվելը: Ստամբուլում ԱՄՆ պետքարտուղարը հայտարարեց. «Կարծում եմ՝ մենք սկսում ենք վերականգնել վստահությունը: Մենք որոշակի հաջողության ենք հասնում Սիրիայում եւ հույս ունենք, որ Թուրքիայի օգնությամբ կկարողանանք այն զարգացնել Սիրիայի հյուսիսային շրջաններում»: Սա ակնարկ է, որ Վաշինգտոնն ու Անկարան Սիրիայի քրդերի հարցում հասել են ինչ-որ համաձայնության կամ մոտ են դրան: Եթե դա ճիշտ է, ապա Վաշինգտոնը ձգտում է Անկարային ամեն դեպքում իր ազդեցության ոլորտում պահել որպես դաշնակցի եւ գործընկերոջ: Պատահական չէ, որ Թիլլերսոնի հետ հանդիպելուց հետո Թուրքիայի նախագահ Էրդողանը հայտարարեց Պարսից ծոցի երկրներ այցելելու մտադրության մասին: Սակայն տարածաշրջանի իրադարձությունների վերաբերյալ նրա ասած խոսքերը տագնապ են հարուցում: «Մենք չենք ուզում տեսնել, թե ինչ է կատարվում Եմենում: Մենք չենք ուզում տեսնել նաեւ այն, ինչ տեղի է ունենում Պաղեստինում: Պարզ է, թե ինչ է տեղի ունենում Սիրաիայում եւ Իրաքում: Թուրքիան բարձր գին է վճարում այդ հակամարտությունների համար, ուստի մենք չենք ուզում, որ դա տեղի ունենա Քաթարում», ասել է Էրդողանը:

Այստեղից կարելի է հետեւություններ անել:

ԱՄՆ-ը պահանջել է Քաթարից դուրս բերել թուրքական զորքը՝ նախազգուշացնելով Պարսից ծոցում ռազմական նոր հակամարտության ծագման եւ դրանում Թուրքիայի ներգրավման հնարավորության մասին: Նման նախազգուշացմամբ հանդես է եկել նաեւ The Times թերթը՝ նշելով, որ արաբական երկրների շրջափակմանը ենթարկված Քաթարին Թուրքիայի օգնությունը կարող է «տարածաշրջանային հիմար հակամարտություն» առաջացնել ՆԱՏՕ-ի ներգրավմամբ: Քաթարում է գտնում Մերձավոր Արեւելքի գծով ԱՄՆ-ի հրամանատարական կենտրոնը: Բահրեյնում տեղաբաշխված են ԱՄՆ տարածաշրջանային ռազմածովային ուժեր: Բոլոր այդ վայրերում ԱՄՆ ռազմական ներկայությունը զգալի է եւ բավարար է Պարսից ծոցի գոտում անվտանգության ապահովման համար: Մինչդեռ Անկարան այնտեղ անելիք չունի:

Ձեւավորվում է նոր հոռի շրջան: Քաթարից հեռանալու եւ Իրանի հետ դաշինքից հրաժարվելու դիմաց Թուրքիային թերեւս կարող են ձեռքերի ազատություն տալ Սիրիայի Աֆրին շրջանում, որպեսզի նա այնտեղ ամերիկացիների հետ ստեղծի լարվածության մեղմացման եւս մեկ գոտի: Իսկ Իդլիբի շրջանում անվտանգության ապահովում Թուրքիայի եւ Ռուսաստանի զինվորականների ուժերով: Փորձագետները կարծում են, որ թուրքերին թերեւս թույլ չտան ամբողջությամբ գրավել Աֆրինը:Հակառակ դեպքում Անկարային եւ Դոհային կարող են մեղադրել տարածաշրջանում իսլամիստներին օգնելու եւ Թեհրանի հետ կապեր ունենալու մեջ: Եթե Թուրքիան սկսի գործել նման սցենարով, ապա դա անխուսափելիորեն կանդրադառնա Սիրիայի հարցում Իրանի, գուցե նաեւ Ռուսաստանի հետ նրա հարաբերությունների վրա, ինչը կազդի Սիրիայում այդ երկրների փոխգործողության վրա:

Որպես տվյալ գործողության տեղեկատվական քողարկում օգտագործվում են Թուրքիայում էպիկենտրոն ունեցող տարածաշրջանային զանազան նավթամուղներ ու գազամուղներ, սակայն ակնհայտ է, որ տվյալ նախագծերի իրականացման համար նախ եւ առաջ անհրաժեշտ է տարածաշրջանի կայունություն: «Իսլամական պետությունը» դեռ պարտված չէ եւ շարունակում է իր ձեռքին պահել որոշակի տարածքներ, փորձում է թափանցել հարեւան երկրներ, առաջին հերթին՝ Հորդանան եւ Սաուդյան Արաբիա: Ավելին, հեղինակավոր փորձագետների գնահատման համաձայն, ԻՊ-ի թուլացմանը զուգընթաց, տարածաշրջանում միջէթնիկական եւ միջդավանանքային հակամարտությունները միայն խորանալու են: Ներկայումս Մերձավոր Արեւելքում ամենքը պայքարում են ոչ թե հանուն, այլ ընդդեմ ինչ-որ բանի: Դա խաթարում է տարածաշրջանում ուրվագծված էներգետիկ երթուղիների քարտեզները:

Մերձավոր Արեւելքում ռազմաքաղաքական իրադրության առանձնահատկությունն այն է, որ առաջին պլանում հայտնվում են նոր մարտահրավերներ ու սպառնալիքներ, այլ ոչ թե մնացածին էներգետիկ հաղորդակցությունները: Իրավիճակի առավել իրատեսական գնահատականը ենթադրում է տարածաշրջանի երկրների պահպանում սովորական վիճակով ու տեսքով եւ դրանց հագեցում սովորական քաղաքական գաղափարախոսությամբ: Շրջանում «Քաոս» գործողությունը շարունակվում է: Այն համալրվում է նոր, սուր սյուժեներով, իրեն հարգող որեւէ փորձագետ չի համարձակվում երկարաժամկետ կամ նույնիսկ կարճաժամկետ կանխատեսումներ անել, թե ինչ կլինի հետագայում:

Ի դեպ, Քաթարը բնական հեղուկ գազի խոշորագույն արտահանողն է աշխարհում, իսկ ԱՄՆ-ը ինքն է ուզում դառնալ խոշորագույն արտահանող, մասնավորապես՝ դեպի Եվրոպա, եւ արդեն իսկ իր բնական հեղուկ գազն առաքում է Իսպանիա, Պորտուգալիա, վերջերս՝ նաեւ Լեհաստան:

Պ. Ք.

# Վերսկսված շինարարություն՝ քսանամյա դադարից հետո

**Երկու ամիս առաջ, ուսումնասիրությունների նպատակով կազմակերպված հերթական շրջայցի ժամանակ, «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» թիմը Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր գյուղում բնակվող Բաղդասարյաններին հաճելի անակնկալ մատուցեց. ընտանիքը տեղեկացավ, որ ընդգրկվել է բնակարանաշինության ծրագրում: Տարիներ շարունակ, Հայկարամը՝ ընտանիքի հայրը, կնոջ եւ երեք որդիների հետ, ստիպված է եղել ապրել նախ՝ հայրական տանը, ապա՝ վարձով, համագյուղացու կիսավեր բնակարանում: Կիսակառույցի հասցված շինարարությունը, սոցիալական պայմանների պատճառով, քսան տարի շարունակ երազանքից այն կողմ չէր անցել:**



**Անավարտ շինությունը շուտով լիարժեք տուն կդառնա. շինարարական աշխատանքները մեծ եռանդով վերսկսվել են: Դրանց մասնակցել են նաեւ կամավորությունն արժեհամակարգ դարձրած գործընկեր կառույցների ներկայացուցիչները՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը եւ «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» թիմը: Այսօրինակ աջակցությունը ոչ միայն ֆիզիկական, այլ նախեւառաջ հոգեւոր խթան է՝ երկար տարիներ սեփական օջախի ջերմությունից զրկված ընտանիքների համար:**

**«Չեմ կարողանում հավատալ, որ այս ամենը երազ չէ: Տունն արդեն տան նման է. դուռ, պատուհան, տանիք ունի: Այսօրվա ձեր օգնությունն էլ այնքան անսպասելի ու տեղին, այնքան կարեւոր ու անգնահատելի... Անչափ շնորհակալ եմ, որ դժվար պահին օգնության ձեռք եք մեկնում ընտանիքիս»,-ասել է Հայկարամը:**

**Որեւէ ներդրման ամենակարեւոր արդյունքը ծանր պայմաններում ապրող ընտանիքներին հուսահատությունից հանելն է: Իր թողած ազդեցությամբ՝ բնակարանաշինության ծրագիրն այդ առաքելության իրականացնողն է դարձել: Համագործակցության վեց տարվա ընթացքում, գործընկեր կազմակերպությունները 149 ընտանիքի համար կարեւոր՝ բնակարանի խնդիրը լուծելով՝ նպաստել են նաեւ ընտանիքների ապագա բարեկեցությանն ու հիմքեր ստեղծել՝ առողջ միջավայրում երեխաներ մեծացնելու համար:**

**«Եթե ուզում ենք զարգացած գյուղեր ունենալ, ապա պիտի պատրաստ լինենք օգնել մեր հայրենակիցներին՝ շտկելու իրենց մեջքը: Կոտրված սրտով, առանց վաղվա հեռանկարի, հուսահատված մարդն անկախ իր տարիքից՝ անօգնական է: Այս ծրագրի կարեւոր առանձնահատկություններից մեկն այն է, որ այն մարզերում ապրողներին թույլ է տալիս արժանապատվորեն կարգավորել տարիների անլուծելի թվացող խնդիրը: Ուրախ եմ տեսնել, թե ինչպես է հերթական ընտանիքը, նոր լիցքեր ստացած, կառուցում իր երազած տունը: Մենք եւս սիրով միացել ենք շինարարական աշխատանքներին: Նաեւ այսպես ենք զորացնում լուսավոր ապագայի հանդեպ հավատը»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**«Այս ծրագրի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ ընտանիքը ինքն է իրականացնում շինարարական աշխատանքները: Դա ոչ միայն զգալիորեն կրճատում է շինարարական աշխատանքների ծախսը, այլեւ օգնում է երբեք չլքել սեփական ձեռքերով կառուցված տունը: Այս մասին վկայում է տարիների մեր փորձը»,- ասել է «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» նախագահ Աշոտ Եղիազարյանը:**

**2017 թվականին ՎիվաՍել-ՄՏՍ-ը բնակարանաշինության ծրագրի իրականացման համար 25 մլն ՀՀ դրամի ներդրում է կատարել:**

AZG NEW SHABAT 1.QXD 19/07/2017 22:12 Page 12



# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար համակարգիչներ եւ հարակից սարքավորումներ ձեռքբերելու նպատակով կազմակերպության ընտրության բաց մրցույթ կազմակերպելու մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց մրցույթ` ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար համակարգիչներ եւ հարակից սարքավորումներ ձեռքբերելու նպատակով:

Բաց մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց մրցույթին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին`

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող`

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2017թ. սեպտեմբերի 05-ի ժամը 16:00, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2017թ. սեպտեմբերի 05-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2017թ. սեպտեմբերի 12-ին ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ներքին ծառայությունների վարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին` 18-02, 18-05:

**ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար տրակտոր ձեռքբերելու նպատակով կազմակերպության ընտրության բաց մրցույթ կազմակերպելու մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց մրցույթ` ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար թվով 1 հատ տրակտոր ձեռքբերելու նպատակով:

Բաց մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց մրցույթին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին`

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող`

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2017թ. սեպտեմբերի 05-ի ժամը 16:00, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2017թ. սեպտեմբերի 05-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2017թ. սեպտեմբերի 12-ին ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ներքին ծառայությունների վարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին` 18-02, 18-05:

**ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար ավտոբուս ձեռքբերելու նպատակով կազմակերպության ընտրության բաց մրցույթ կազմակերպելու մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց մրցույթ` ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար թվով 1 հատ ավտոբուս ձեռքբերելու նպատակով:

Բաց մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց մրցույթին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին`

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող`

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2017թ. սեպտեմբերի 05-ի ժամը 16:00, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2017թ. սեպտեմբերի 05-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2017թ. սեպտեմբերի 12-ին ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ներքին ծառայությունների վարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին` 18-02, 18-05:

**ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն**

VIVACELL MTS

## ՎիվաՍել-ՄՏՍ-ի բաժանորդները կշարունակեն ավտոկայանատեղի համար վճարել SMS հաղորդագրությամբ

Հաշվի առնելով SMS հաղորդագրությամբ ավտոկայանատեղի համար իրականացվող` վճարման ծառայության հանրային կարեւորությունը, ՎիվաՍել-ՄՏՍ-ը շարունակելու է տեխնիկական աջակցության ծառայություն մատուցել` վերանայված ձեւաչափով:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ իրավասու մարմինների միջեւ ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա, ՎիվաՍել-ՄՏՍ-ն այսուհետ SMS ծառայության համար կգանձի 2 (երկու) ՀՀ դրամ: Հարկ ենք համարում տեղեկացնել, որ ծառայության դիմաց սահմանված խորհրդանշական այդ գումարն ընկերության համար չի կարող դիտարկվել որպես հավելյալ եկամտի աղբյուր. դա գործառնական անհրաժեշտություն է:

Նշված խնդրի` հանրության շահերից բխող հանգուցալուծումն ընտրվել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի, Երեւանի քաղաքապետարանի եւ գործընթացին մասնակցող բոլոր կողմերի միջեւ կառուցողական քննարկումների արդյունքում:

Կրկին հարկ ենք համարում հիշեցնել, որ SMS հաղորդագրությունների միջոցով ավտոկայանատեղի համար վճարելու մեխանիզմն ի սկզբանե նախատեսված էր որպես ժամանակավոր լուծում, սակայն, ընդառաջելով հարմարավետ ծառայություն մատուցելու հասարակության պահանջին` ՎիվաՍել-ՄՏՍ-ը համաձայնել է պահպանել վճարման այդ ձեւաչափը եւ մատուցել ծառայությունը:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 04 Ա N 047261, տրուած` 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 20.07.2017, գինը` 200 դրամ, տպագրուած է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUITT.QXD 19/07/2017 20:35 Page 1

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 28(340)
21 ՀՈՒԼԻՍ
2017

# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ

## Ստուգայց` Դսեղ

**Նաիր ՅԱՆ**

Լոռվա Դսեղ գյուղում գտնվող Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը միայն մայիս-հոկտեմբեր ամիսներին 10-11 հազար այցելու է ունենում: Շատ են Սփյուռքից եկած հայերը, ինչպես նաեւ օտարազգի զբոսաշրջիկները: Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան օրն այստեղ տոնի է վերածվում. հատկապես դպրոցականներն ու ուսանողները կարծես ուխտագնացության եկած լինեն: Զբոսաշրջիկները մեծ մասամբ այցելում են Հաղպատ, Սանահին, այնտեղից էլ գալիս Դսեղ: Թումանյանի գյուղական տունը, նրա օրորոցը, հողե հատակով այն սենյակը, որտեղ ծնվել է բանաստեղծն ու անց կացրել իր մանկությունը, կահ-կարասին, գործերն ու կարպետները, գեղջկական կենցաղային իրերն ու սարքերը, հագուստներն ու սպասքը պահպանվել են նույնությամբ ու նույնությամբ էլ հաղորդում են թումանյանական մթնոլորտը, անգամ բույրերն ու համերը:

Սակայն արդեն մեկ տարի Թումանյանի տան այցելուներն ու հյուրերը պակասել են: Պատճառը Լոռվա ճանապարհների շինարարությունն է. շատ հատվածներ ուղղակի անանցանելի են, հատկապես տեղանքին անծանոթ ճանապարհորդները մոլորվում են ու Դսեղի փոխարեն այլ տեղ գնում: Թանգարանի տնօրենը պատմեց, որ այցելուներից շատերը կես ճանապարհից հաճախ հետ են դարձել, որովհետեւ Դսեղ հասնելն ուղղակի անհնար է եղել: Իսկ այդ ընթացքում բանաստեղծի տունը եւս շինարարական գործընթացի մեջ է եղել, որը դեռ շարունակվում է: Ձմռանը մշակույթի նախարար **Արմեն Ամիրյանը** նկատեց, որ Թումանյանի տուն-թանգարանը զբոսաշրջիկների, այցելուների համար ավելի գրավիչ, հետաքրքրական դարձնելու անհրաժեշտություն կա: Հարկ է, որ բանաստեղծի օջախում մարդիկ հարմարավետություն զգան, հարազատ ու ջերմ միջավայրի զգացողությունները տանեն իրենց հետ ու ցանկանան էլի ու էլի վերադառնալ Դսեղ: Իսկ դրա համար նախ գաղափարներ, հետո նաեւ գումարներ են պետք:





«Դեռ անցյալ տարի` թումանյանական օրերին, թանգարանի ղեկավարության հետ խորհրդակցեցինք ու հասկացանք, որ լուրջ խնդիրներ ունենք: Ենթակառուցվածքների, այդ թվում` սանհանգույցի բացակայությունն այցելուներին հնարավորություն չի տալիս ավելի երկար ժամանակ անցկացնել Թումանյանի հարկի տակ: Դեկտեմբերին ջութակահար, բարերար Աշոտ Տիգրանյանի հետ օդանավով մեկնում էի Փարիզ, սկսեցինք զրուցել մշակութային խնդիրներից, այդ թվում` Թումանյանի տուն-թանգարանի անելիքներից: **Աշոտ Տիգրանյանը** հոժարակամ հանձն առավ օգնել ու իր անձնական միջոցներից գումար տրամադրել` Ամենայն հայոց բանաստեղծի տունը կարգի բերելու համար: Որոշվեց Թումանյանի հայրական տանը կից հանգստի ու հուշանվերների սրահներ, ինչպես նաեւ սանհանգույց կառուցել»,- Թումանյանի հարկի տակ հյուրընկալվելով` պատմեց Արմեն Ամիրյանը:

Թումանյանի տուն-թանգարանին կից նոր շենքի շինարարությունը սկսվել է. բարերար Աշոտ Տիգրանյանը ներդրել է 8 միլիոն դրամ: Աշխատանքները մինչեւ աշուն կավարտվեն, ու թումանյանական օրերը կանցկացվեն ավելի բարենպաստ ու քաղաքակիրթ պայմաններում: Իհարկե, թանգարանի հատկապես սանհանգույցը կխփի Թումանյանի դրկիցի բիզնեսին, որը փայտե մի փոքրիկ շինության վրա փակցրել է` «Զուգարան` 100 դրամ» ու այսքան ժամանակ գումարի դիմաց այցելուներին է տրամադրել իր գյուղական արտաքնոցը:

Թանգարանը ենթակառուցվածքներով համալրելու նախագծից բացի, մշակույթի նախարարության նախաձեռնությամբ բանաստեղծի ծննդյան 150 ամյակին ընդառաջ անց է կացվում քանդակների սիմպոզիում: Նախապես քանդակների մրցույթ է հայտարարվել, ընտրվել են երիտասարդ քանդակագործների լավագույն էսքիզները: Նախարարությունը Թումանյանի տուն-թանգարանի հարակից հրապարակում երկու խմ. տրամագծով տուֆի բեկորներ է տեղադրել, որոնք նախորդ ամսվանից սկսած` վերածվում են քանդակների: Քանդակագործները Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի ու Գեղարվեստի ակադեմիայի ուսանողներ են, որոնց մեծ մասի առաջին մեծածավալ աշխատանքները հենց թումանյանական քանդակներն են: Երիտասարդ արվեստագետներն ընտրել են թումանյանական թեմաներ` պոեմների, հեքիաթների, պատմվածքների հերոսների կերպարներ: Առավոտը Դսեղում բացվում է նրանց մուրճերի զրնգոցով: Ամենակրտսեր քանդակագործը 17-ամյա **Հովհաննես Բաղդասարյանն** է, որն ընտրել է «Շունն ու կատուն»: Ընդհանրապես ընտրվել են երիտասարդ քանդակագործներ Հայաստանի տարբեր մարզերից ու Արցախից: Արցախցի **Մուշեղ Մուսայելյանի** նախընտրած թեման Անուշի ու Սարոյի սիրո պատմությունն է: Քանդակվող կերպարների մեջ ակնհայտորեն Անուշն է գերիշխում: Խուլ ու համր քանդակագործ **Անդրանիկ Բալաբանյանը** քանդակում է ժայռից նետվող Անուշին: Իր քանդակի պատմությունն ու մոտիվները նա գրել է մի թղթի վրա, որպեսզի մինչեւ աշխատանքի պատրաստ լինելը, հետաքրքրվողներին բացատրի, թե ում է քանդակում ինքը: Քանդակների բացօթյա արվեստանոցում աշխատում է նաեւ **Մարիամ Խաչատրյանը**: Էլեկտրական սղոցով, մուրճ ու բրիչով աղջկա դեմքն ամբողջությամբ տուֆի փոշով է ծածկված: Նա քանդակում է սեւուկ ուլիկների մորը: Գիքոր, «Թմկաբերդի առումը» պոեմի աշուղ, Անուշ ու Սարո, շուն ու կատու. թումանյանական կերպարները ոգեշնչել են քանդակագործներին. նրանց կերտելու համար երիտասարդները մեկ ամսից ավելի ապրում ու աշխատում են Դսեղում: Պատրաստի քանդակները կզարդարեն այն ճանապարհը, որը տանում է դեպի Թումանյանի տուն-թանգարանը:

Թումանյանի հյուրերը կհիշեն, թե ինչ փարթամ ծառերով այգի ուներ տունը: 2015-ին ծառերից մեկը շուռ էր եկել ուղիղ թանգարանի վրա: Ու դա միակ դեպքը չէր. քամիները հաճախ են շրջում ու ջարդում այգու ծերացած ու փտած ծառերը. համենայն դեպս, մասնագիտական հետազոտությունն է այդպես ցույց տվել, որ Թումանյանի տան առջեւի եղեւնիներն ու մյուս ծառերը վտանգավոր են: Դրանք այնքան էին մեծացել, որ արմատներով բարձրացրել էին նույնիսկ բանաստեղծի տունը, շրջապատի հսկա քարերը: Ծառերի թանձր ստվերից տունը զրկվելիս է եղել արեւի լույսից ու սկսել է բորբոսնել: Մի խոսքով` այլ ելք չթողնելով` ծառերը հատվել են, սակայն որոշվել է դրանց կոճղերը ծառայեցնել արվեստին: Երիտասարդ քանդակագործները կոճղերը վերածել են թումանյանական հեքիաթների սիրված եւ հայտնի կերպարների: Կտրված ծառերի փոխարեն աշնանը նոր շիվեր կտնկվեն:



Ամենայն հայոց բանաստեղծի Դսեղի տունը տանտիրոջ 150 ամյակը կտոնի ավելի ակնահաճո ու նոր միջավայրում:

**Գեղամ ՄԿՐՏՉՅԱՆ**

# Գյումրիում էր պոլսահայ

## Վերջիհան Ջիֆլիօղլուն

«Արեւմտահայերէնը` իմ մայրենին, որ մանկութենէս ի վեր աղօթքի մը նման կը թափի իմ լեզուէն, այսօր տեղ կը գրաւէ ԻՒՆԵՍՔՕ-ի վտանգուած լեզուներու ցանկին մէջ: Ես կը պայքարիմ որպէսզի ապրի Պոլսոյ հայ գրականութիւնը, ես կը պայքարիմ ձեր` յաջորդ սերունդներուն համար»: Պոլսահայ ճանաչված լրագրողուհի եւ հեղինակ **Վերջիհան Ջիֆլիօղլուի** (Ջիֆլյան) «Աչք» բանաստեղծությունների գրքի ետնաշապիկին գրված այս տողերը ամենից լավ ներկայացնում են հեղինակի հիմնական մտահոգությունն ու թերեւս նաեւ տեղի երիտասարդ իր սերնդի հայ գրագետի առջեւ ծառացած այսօրվա հրամայականը:




Ջիֆլիօղլուի հայերեն այս եւ մեկուկես տարի առաջ թուրքերեն չորս անգամ հրատարակված «Քավարանի հայերի պատմությունը» խոսուն վերնագրով գրքերի շնորհանդեսը ապրիլ ամսին տեղի էր ունեցել Երեւանում, իսկ օրերս կրկին Հայաստանում գտնվող մեր հայրենակցուհին «Շիրակ կենտրոնի» սրահում «Աչք» ժողովածուով ներկայացավ նաեւ Գյումրու լրագրողներին ու գրական հասարակության ներկայացուցիչներին: Խոսելով Ստամբուլում հայերեն գրքի տպագրության հանդիպած դժվարությունների մասին, երբ հենց հայ հրատարակիչները լեզվի պատճառով հրաժարվում էին այն տպագրելուց (հավանաբար վաճառքի դժվարությունը նկատի ունենալով), նա նշեց, թե Երեւանում կարող էր գիրքը տպել, բայց իր համար կարեւոր է, որ արեւմտահայ գրականությունը «Պոլսո մեջ իր շունչը ունենա»:

Վերջիհան Ջիֆլիօղլուն վաղ հասակից է ստեղծագործել ու նաեւ մտել լրագրության ասպարեզ: Աշխատակցել է «Մարմարա», «Ժամանակ» եւ այլ թերթերի, եղել «Ակօսի» հիմնադիր կազմում, 16 տարի աշխատել թուրքական ամենամեծ պարբերականներից «Հուրիեթ»-ում, արժանացել է տեղական ու միջազգային մի շարք լրագրողական մրցանակների: Ունի հայերեն բանաստեղծությունների եւս երկու գիրք:

# Պոլսի մասին՝ Նյու Յորքում

## Լեւոն Լաճիկյանի 15-րդ անհատական ցուցահանդեսը

Ս.Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Նյու Յորք

Կարծեմ շատ չեն այն արվեստագետները, ովքեր հավասարապես իրենց դրսեւորում են արվեստի մի քանի բնագավառներում: Նրանցից մեկն է գեղագետ, արվեստաբան, լրագրող եւ գծանկարիչ, 90-ականների «**Ազգ**» թերթի մշակութային մեկնաբան Լեւոն Լաճիկյանը: Արվեստաբանությունից սահուն անցում կատարելով դեպի նկարչություն՝ վերջին տարիներին նա ստեղծում է քաղաքային բնապատկերների շարքեր, որոնք աչքի են ընկնում գծի տպավորիչ նրբությամբ եւ պատկերվող տեսարանների հանդեպ հեղինակային ուրույն մոտեցումներով:

Հիշարժան էր Նյու Յորքում 2011-ի դեկտեմբերին կազմակերպված նրա անհատական ցուցահանդեսը, որի հովանավորն էր տեղի Պոլսահայ օգնության միությունը (CARS): Այն կոչվում էր «Հայկական աշխարհ» եւ ներկայացնում էր տեսարաններ ոչ միայն Հայաստանի, այլեւ աշխարհի հայաշունչ ու հայադրոշմ քաղաքներից՝ Վենետիկ, Ամստերդամ, Փարիզ եւ այլն: «Այնժամ ես նկատեցի, որ բացակայում է Պոլիսը, առանց որի անպատկերացնելի է հայկական աշխարհը»,- պատմում է Լեւոն Լաճիկյանը եւ բացատրում, որ վերջին 5 տարիներին ինքը մի քանի անգամ այցելել է Ստամբուլ, տեղում ծանոթացել հայկական հիշատակներին եւ իր գրություններում ու գծանկարներում վերստեղծել պատմական Պոլսի կերպարը:





«Թուֆայան» սրահ

Այն առաջին անգամ ցուցադրվեց Պոլսին մերձակա Գնալը հայահոծ կղզում՝ արձանագրելով մեծ հաջողություն հայ եւ ոչ միայն հայ արվեստասերների շրջանում: Այնուհետեւ պոլսյան շարքը Լեւոն Լաճիկյանը ներկայացրել է Երեւանում՝ նվիրելով Հայոց ցեղասպանության 100-ամյակին: Վերջին ցուցադրությունը, որ կոչվում էր «Պոլիս եւ անդին», կայացավ Մեծն Նյու Յորքի տարածաշրջանում՝ Լիվինգսթոնի Սբ. Աստվածածին հայաստանեայց եկեղեցու «Թուֆայան» սրահում՝ նախաձեռնությամբ ու կազմակերպությամբ Արազ եւ Գասպարյան ընտանիքների:



Պոլսո Հայոց պատրիարքարան

Ներկայացված շուրջ 40 գծանկարները ցոլացնում էին Պոլսի հայտնի ու անհայտ անկյունները՝ պատկերացում տալով Բոսֆորի ափերին փռված այդ գեղատեսիլ քաղաքի պատմական դիմագծի մասին: Ուշագրավն այն էր, որ ցուցահանդեսին զուգահեռ Լեւոն Լաճիկյանը հանդես եկավ դասախոսությամբ՝ «Պոլսո դերը հայոց մշակույթի պատմության մեջ» թեմայով: Այդտեղ ամփոփ ներկայացվեց պոլսահայության բազմադարյա պատմությունը՝ ընդգծելով, որ դասական առումով պոլսահայերը սփյուռքահայեր չեն: Ավելին՝ հայ Պոլիսն այսօր ինքն ունի իր սփյուռքն աշխարհի շատուշատ երկրներում: Այդ քաղաքում հայերս բնականաբար ավելի հին ներկայություն ունենք, քան իրենք՝ թուրքերը: Ընդ որում, մեր ներկայությունն արդյունավորվել է մշակութային նշանակալի ձեռքբերումներով՝ արվեստի տարբեր մարզերում՝ ճարտարապետություն, տպագրություն, երաժշտություն, կերպարվեստ, գրականություն եւ այլն: «*18-րդ դարից սկսյալ Պոլիսը դարձավ հայոց մշակութային մայրաքաղաք՝ իր երկնակամարի տակ հյուրընկալելով Մխիթար Սեբաստացուն եւ Պաղտասար Դպիրին, ապա ծնունդ տալով Պետրոս Դուրյանին եւ Հակոբ Պարոնյանին, արեւմտահայ նշանավոր գրողներին ու բանաստեղծներին: Պալյան գերդաստանի 5 սերունդներ երկու դար շարունակ Պոլիսը վերածեցին արեւմտյան տիպի քաղաքի՝ եվրոպականացնելով տեղի ճարտարապետությունը*»: Բանախոսը զուգահեռներ անցկացրեց անցյալի ու ներկա Պոլիսների միջեւ: Ըստ նրա, բարեբախտաբար մերօրյա սփյուռքի հայ գրամշակութային կյանքի վերադարձ ու վերահաստատում է նկատվում այս հինավուրց քաղաքում՝ շնորհիվ Զահրատի, Զարեհ Խրախունու, Ռոպեր Հատտեճյանի եւ մյուս երեւելի հայ արվեստագետների:

Լեւոն Լաճիկյանը ներկաներին ծանոթացրեց նաեւ պոլսահայության առջեւ կանգնած խնդիրներին ու մարտահրավերներին: Գերագույնը թերեւս անցյալի ազգային-պատմական վիթխարի ժառանգությանը տեր կանգնելն է, շարունակականություն ապահովելը: Բանն այն է, որ եթե մեկ դար առաջ Պոլսում ապրել է 600 հազար բնակիչ, որի զգալի մասը եղել են հայեր, ապա ներկա մեգապոլիսի բնակչության թիվն արդեն հասել է 18մլն-ի, որից ընդամենը 50 հազարն են մեր հայրենակիցները: Ըստ բանախոսի, «*Երբեք պետք չէ մոռանալ, որ 100 եւ ավելի տարիներ պոլսահայությունն ապրել եւ ապրում է 1915-ի դառը հիշողությամբ եւ դրան հաջորդած, պարբերաբար կրկնվող քաղաքական ու տնտեսական ահաբեկումների ու ճնշումների մթնոլորտում: Այստեղից էլ՝ վախ, զգուշավորություն եւ այլն*»: Այնուամենայնիվ, հայ համայնքի կենսունակության մասին է խոսում թեկուզ հայ մամուլը՝ իր «Ժամանակ», «Մարմարա», «Ակօս», «Լոյս» թերթերով եւ «Փարոս» մշակութային ամսագրով:



Ստամբուլ. Ղալաթիո աշտարակը

Դասախոսություն-ցուցահանդեսին ներկա արվեստասերները մինչեւ ուշ գիշեր վայելեցին հայրենի արվեստագետի ներկայությունը եւ նրա անմիջական մասնակցությամբ ստեղծված պոլսական մթնոլորտը: Ավելացնենք, որ նկարների վաճառքից գոյացած հասույթի մի մասը փոխանցվեց Գյումրու կարիքավոր ընտանիքներին:

# «Ազգային նվիրատվությունների հիմնադրամի» պարգեւ՝ Նորիկ Աստվածատուրովին



**Ամբողջ Մ. Նահանգների տարածքում գործում են արվեստի ավանդական տեսակներ, որոնք ձեւավորում են ինքնուրույն մշակույթներ եւ տարբերակում էթնիկական համայնքները: Վերջին 35 տարիների ընթացքում «Ազգային նվիրատվությունների հիմնադրամը» արվեստի բնագավառում ավանդույթները պահպանելու համար խրախուսական պարգեւներ է տրամադրել շնորհալի արվեստագետների: Հունիսի 20-ին հայտնի են դարձել այս տարվա 9 մրցանակակիրների անունները, որոնք Վաշինգտոնում 25 հազարական դոլար են ստանալու հառաջիկա սեպտեմբերին կայանալիք պաշտոնական արարողության ժամանակ:**

**Մրցանակակիրների թվում է 1992 թվից Ուապետոնում (Հյուսիսային Դակոտա) ապաստան գտած հայազգի դրոշմատպիչ-մետաղագործ Նորիկ Աստվածատուրովը:**



**Նորիկի հայրը՝ Եղիշեն, Զանգեզուրում է ապրել մինչեւ 1917-ի ռուսական հեղափոխությունը, երբ տեղափոխվել է Բաքու, որտեղ էլ Աստվածատուրյանը դարձել է Աստվածատուրով: Նորիկը ծնվել է 1947-ին եւ դրոշմահաստոցային (Repoussé metal) մետաղագործություն սովորել Գագո անունով մի հայի մոտ աշակերտելով: 1970-90 թվերին կարողացել է իր ընտանիքը պահել հայկական մշակույթի եզակի նմուշներ պատրաստելով: Բայց նրա պատրաստած ավետարանների նախշուն կազմերն ու խաչերը եւ ոսկեղենի տուփերը պետք է հեռու մնային հետապնդող աչքերից:**

**Խորհրդային Միության փլուզման հետեւանքով, երբ սաստկացան էթնիկական զտումների ցեղասպանական արարքները, Աստվածատուրովին հաջողվում է իր ընտանիքի հետ ապաստան գտնել Մ. Նահանգներում: Իր ետին թողնելով ամբողջ ունեցվածքը, նա այնուամենայնիվ, կարողացել է իր հետ տանել իր արվեստին անհրաժեշտ դրոշմիչ մեխերն ու մուրճերը:**

**«Լավ արվեստագետը պետք է կարողանա իր գրպանում պահել պետքական բոլոր գործիքները», նշել է նա մի հարցազրույցի ժամանակ:**

**Մ. Նահանգներում նա շարունակել եւ կատարելագործել է իր արվեստը: Նրա ստեղծած նմուշները ոչ միայն առանձնանում են իրենց եզակի տեխնիկայով, այլեւ իմաստային եւ զգացմունքային հագեցվածությամբ: «Տեխնիկան առանց իմաստավորման, առանց հուզականության կենդանություն չի կարող արտահայտել», հավաստացած է նա:**

**Նորիկը մասնակցել է ժողովրդական ստեղծագործությունների ցուցահանդեսների, ֆորումների, ազգային եւ նահանգային փառատոների եւ իր արվեստի գաղտնիքներն է փոխանցել երիտասարդ արվեստագետների:**

**Արժանացել է Հյուսիսային Դակոտայի արվեստագիտական խորհրդի, ժողովրդական մշակույթի հիմնադրամի եւ Բուշ հիմնարկության մրցանակների ու պատվոգրերի:**

Հ. Ծ.

AZG NEW MSHAKUITT.QXD 19/07/2017 20:35 Page 3



Մարինե ԿԱՐՈՅԱՆ

# Համերգ գնալու արվեստը.
## Համերգասրահ - ձայնի թագավորություն



ՆյուՅորքում երիտասարդ երաժիշտը շնչակտուր կանգնեցնում է փողոցի անցորդներից մեկին ու հարցնում «Ներողություն, չէի՞ք ասի, թե ինչպես կարող եմ մտնել Կարնեգի-Հոլ»: «Աշխատանքով, երիտասարդ, միա՛յն համառ աշխատանքով», - լինում է պատասխանը:

Երաժիշտները գերազանց գիտեն, որ սա որեւէ երաժիշտ-կատարողին ուղղված ամենադիպուկ կատակներից մեկն է: Այն, անշուշտ վերաբերում է այն նշանային համակարգին (կատարողի որակ, մասնագիտական կարիերայի աստիճան, եւ այլն), որ այս դահլիճը կամ այլ հայտնի դահլիճներ կրում են իրենց մեջ:

Սակայն, բացի այս նշանային համակարգից, որեւէ համերգասրահ բերում է նաեւ հենց իրեն բնորոշ չափանիշները, որը այս կամ այն կերպ է ազդում կատարվող եւ ունկնդրվող երաժշտության զգայական ընկալման վրա՝ դարձնելով այն ցանկալի կամ ոչ այնքան:

Բայց սկզբում, մի քանի խոսք՝ համերգային դահլիճների ստեղծման պատմությունից:

Տասնիններորդ դարը սոցիալական մեծ փոփոխություններ բերեց արեւմտյան հասարակությանը: Դեմոկրատական իդեալներն ու արդյունաբերական հեղափոխությունը բոլոր մակարդակներում եւ ամբողջապես փոխեցին եվրոպացու ամենօրյա կյանքը: Հասարակության միջին խավի երեւան գալու հետ մեկտեղ փոխվեց նաեւ քաղաքացիների ապրելակերպը: Ռոմանտիզմի ժամանակաշրջանում ավելի ու ավելի շատ մարդ դարձավ ունեւոր, ազատվեց ամենօրյա ծանր աշխատանքից, սկսեց ուշադրություն դարձնել երաժշտական կրթության վրա, ներկա գտնվել համերգների: Եվ սա, հասարակության մեջ ինքզինքը ցույց տալու, նրա նորաստեղծ համակարգի մեջ մտնելու մի նոր ձեւ էր նաեւ:

Սոցիումի մեջ այս նորությունները փոխեցին նաեւ երաժշտի կյանքը: Մինչ այդ կոմպոզիտոր/կատարող միեւնույն անձը երկփեղկվեց: Այժմ պարտադիր չէր, որ երաժշտություն գրողը նաեւ այն կատարի: Ստեղծվեց երաժշտի մի նոր տեսակ՝ կատարող: Բեթհովենից սկսած՝ սիմֆոնիկ նվագախմբի կազմը նույնպես մեծացավ հասարակական զարգացման մեծ իդեալները նվագախմբի համեստ կազմով այլեւս հնարավոր չէր արտահայտել:

Նորաստեղծ բուրժուական համակարգում չլինելով որեւէ ազնվականի կամ կրոնավորի երաժշտական կցորդը, երաժիշտն այլեւս ազատ արվեստագետ էր, ժամանակակից լեզվով ասած՝ ֆրիլանսեր (freelancer), որ պիտի նոր ձեւերով հոգար իր ապրուստը: Դրանցից մեկն էլ համերգներով հանդես գալն էր: Այն երաժիշտները, որոնք կարող էին իրենց վիրտուոզ ստեղծագործություններով եւ կատարումներով արբեցնել ունկնդրին՝ հափշտակելով նրա ուշադրությունը, դարձան ժամանակի մեգաաստղերը: Նիկոլո Պագանինին (1782-1840) ու Ֆրանց Լիստը (1811-1886) հասարակական աստիճանակարգում հիմնովին փոխեցին երաժշտի կարգավիճակը՝ նրան ծառայից դարձնելով կիսաաստված:

Բնական է, որ այս կիսաաստվածները չէին կարող ելույթ ունենալ միայն հասարակության բարձր խավի հյուրասենյակներում: Առավել եւս, որ նորաստեղծ միջին խավը տնօրինում էր դրամական միջոցներ եւ պատրաստ էր դրանք ծախսել՝ ըստ իր հայեցողության: Մենակատարների եւ նորաստեղծ պրոֆեսիոնալ նվագախմբերի վիրտուոզ, հագեցած կատարումներն ապահովելու համար կառուցվեցին առաջին ընդարձակ համերգային դահլիճները, որոնք Ռոմանտիզմի իսկական զավակները դարձան:

Այդ ժամանակից ի վեր համերգասրահը դարձել է կենդանի երաժշտության կրողն ու օրրանը, որտեղ երաժշտությունը լիովին վայելում ու գնահատում է ինչպես ունկնդիրն, այնպես էլ ինքը՝ կատարողը: Եվ այս գործընթացում կարեւորվում են ոչ միայն կատարող(ներ)ի մասնագիտական որակը կամ ունկնդրի գրագիտությունը, այլեւ հենց դահլիճի ֆիզիկական չափանիշները:

Եվ քանի որ երաժշտությունն ինքնին ձայնային արվեստ է, հետեւաբար բացի շենքի արտաքին գրավչությունից, համապատասխան լուսավորությունից, ժամանակակից օդափոխիչ համակարգիցհամերգասրահի համար առավելագույնս կարեւորվում է նրա ակուստիկան -ֆիզիկական այն հատկությունները կամ որակները, որոնք որոշում են, թե ինչպես է ձայնը փոխանցվում սրահի մեջ, ինչպես է լսում կատարողը իր նվագը եւ ինչ որակներով է այն հասնում ունկնդրի ականջին (հավաստիացնում եմ, որ որոշ դեպքերում դրանք բավական տարբերվում են իրարից):

Այսպիսով, ձայնի արտաբերումը, դրա վերահսկումը, փոխանցումը, ընդունումն ու վերջնական արդյունքը այն շղթան է, որի ականատեսն ու ունկնդիրն ենք մենք՝ անկախ նրանից բեմի վրա ենք, թե՞ հարմարավետ նստած դահլիճում: Սրանից արդեն պարզ է, որ մեր հուզական արձագանքի որակն ու ուժգնությունը՝ ունկնդրվող երաժշտությանը ուղիղ համեմատական կապի մեջ են համերգասրահի ակուստիկ հնարավորությունների հետ:

Մենք այստեղ խնդիր չենք դրել ուսումնասիրել ակուստիկայի հիմնական գործոնները՝ ծավալը, կայունացումն ու արտացոլումը, սակայն նշենք, որ միայն դրանց օպտիմալ համամասնության շնորհիվ է, որ աշխարհի որոշ համերգասրահներ (այդ թվում ՝ Վիեննայի «Մուզիքֆերայն»-ը, Բեռլինի «Ֆիլհարմոնիա»-ն, Ամստերդամի «Գեվանդհաուզ»-ը, եւ այլն) մոլորակի առավել ցանկալի համերգասրահներն են թե՛ կատարողների եւ թե՛ ունկնդրի համար: Այստեղ է, որ առավելագույս ապահովվում է ձայնային դաշտի առանձնահատկությունների եւ ունկնդրի հուզական արձագանքի կապը: Այստեղ է, որ ունկնդիրը «դիտորդի» կարգավիճակից տեղափոխվում է «մասնակցի» կարգավիճակի: Այստեղ է, որ համերգասրահը առավելագույնս նպաստում է կատարման զգացմունքային ազդեցությանը: Այս դեպքում է, որ կենդանի երաժշտության ունկնդրումը վեր է ածվում կոլեկտիվ զգայական փորձառության:

Մելանյա ԲԱԴԱԼՅԱՆ

# ՌԱԲԻՍԸ
## Երբ այն սպառնում է դառնալ համատարած

**Մայթերին մեքենաների քանակը անցորդների համար դժվարացնում է հանգիստ քայլելը, փողոցի՝ իրենց բաժին հասնող մասը չի բավարարում, ստիպված մի կերպ անցնում ես դրանց արանքներով: Շոգը քաղաքի անհանգիստ ու փնթի առօրյան ավելի է ընդգծում: Մի կողմից ջուր է մայթերով հոսում՝ ոչ մեկին չի հետաքրքրում, օրեր շարունակ ջուրը գնում է,- ցեխաջրերը պիտի զգույշ շրջանցես, մյուս կողմից՝ ճանապարհին դես ու դեն շաղ տված աղբակույտերին ուշադրություն պիտի չդարձնես. աչքդ, սովոր է. բայց այ շնչել այն՝ այս ամռվա տապին, անհնար է, սրան ընտելանալ չի լինում: Հետո մոտենում ես վատագույնին՝ կանգառին, երկար սպասում ես: Վերջապես հայտնվում է երթուղային տաքսին, փորձում ես նստել, խցկվելու տեղ չկա, բայց հաջորդ 40 րոպեները եւս արեւի տակ անցկացնելու հեռանկարը ավելի վախեցնող է թվում: Երթուղայինը մի կերպ քաշ է տալիս կիսամաշ մարմինը, ուղեւորներին էլ՝ հետը: Չնայած բեռը ծանր է, բայց յուրաքանչյուր անգամ բարեխիղճ կանգառում է, ուղեւոր վերցնում. զարմանալի մոգականառաձգական է նրա այդ փոքրիկ տարածքը: Մարդիկ կուչ եկած սեղմվել են իրար, շոգը մոռացել են, այնպես են փարվել իրար՝ ասես վերահաս վտանգի առաջ միմյանցից փրկություն ակնկալելիս լինեն: Լուռ են: Հանկարծ մի երկուսը ընդվզում են՝ կանայք, իհարկե: Նրանք երջանիկ նստածներից են, բայց ինչի՞ վրա են՝ ուղղակիորեն անբարձիկ նստատեղի երկաթաձողերի վրա են տեղ զբաղեցրել: «Բա վարորդը չի՞ տեսնում մեքենայի այս վիճակը, վաղուց արդեն այս մեքենան դեն նետելու բան է», -բողոքում են: Այդ էր պակաս, որ ուղեւորը ձայն հանի. վարորդի ջղերը տեղի են տալիս, պոռթկում է՝ «Ի՞նչ եք ձեններդ գլուխներդ գցել՝ էդ իմ գործը չի, գնացեք տերերին բողոքեք, չեք ուզում, մի՛ նստեք»: Սովորական վիճակ. շատ երթուղայիններ են այսպես դուրս գալիս երթուղի, մի անգամ նույնիսկ դրանցից մեկի դուռը չէր բացվում՝ վարորդը, որ «բարեբախտորեն» կողքին երկաթե հաստ ձող էր պահում, դուրս եկավ եւ ուղղակիորեն հարվածելով դռանը՝ բացեց, այլապես մեջն էինք մնալու:**

**Դեռ լավ է, որ վերջին շրջանում ծխող վարորդի գրեթե չես հանդիպի: Բայց հանրային տրանսպորտի մեկ այլ «բաղկացուցիչ» մաս, արդեն նորմ դարձած, շարունակվում է : Սա անգամ քննարկման նյութ դարձավ քաղաքապետի ընտրությունների ժամանակ՝ արդյոք հանրային տրանսպորտում երաժշտություն հնչեցնելը նորմա՞լ է. եթե՝ այո, ապա՝ ի՞նչ երաժշտություն, ըստ վարորդի նախասիրությա՞ն: Իսկ ուղեւորների իրավու՞նքը. որքանով են տեղին կամ հաճելի, օրինակ՝ վաղ առավոտյան երթուղայիններում կամ ավտոբուսներում բարձր հնչող քեֆ-ուրախության մեղեդիների՝ հարսանիք հիշեցնող մթնոլորտը, կամ էլ հակառակը, օրինակ՝ ինչ-որ մեկի՝ կյանքի անցողիկության ու մոտալուտ վախճանի ու այս ֆոնի վրա ծնողին անարդարորեն մոռանալու մեղանչողի դառնաղի մրմունջները:**

**Եթե անկեղծ, ես ոչ թե վատ եմ զգում սրանից, թող ներվի՝ արտխառնոց եմ ունենում: Ու այս կլկլոցները՝ տխուր, թե ուրախ նոտաներով, ամենուր է, խանութ ես մտնում՝ տնտեսական, մթերային, նույնն է, հացի կրպակ՝ նույնն է, սրճարան՝ նույնն է, տաքսի՝ նույնն է, ճարահատ ասում ես՝ թե սրա պատճառով այլեւս այստեղից գնումներ չես անելու, դուք մտածեք՝ մշտական հաճախորդ կկորցնեք: Աղջիկը ժպտում է՝ թե ռադիո է, նրանք են հաղորդում այսպիսի երգերը:**

**Եկանք հասանք, կարեւորին: Այս երաժշտությունը, որ ռաբիս ենք կոչում, մեզ պարտադրվում է վերեւից, ռադիո- հեռուստատեսության մակարդակով: Բանն այնտեղ է հասել, որ ԱԺ վերջին ընտրություններին՝ պատգամավորական մի թեկնածուի Հանրային հեռուստատեսության լրագրողը հարց է տալիս, կարծես խոստովանանք՝ թե ռաբիս թաքուն լսում ե՞ք: Ուրեմն որքան անպատվաբեր ու ամոթալի բան, որ իրեն քիչ թե շատ զարգացած համարող մարդը թաքուն պիտի դա անի, եթե ունի դրա պահանջը...**

**Պլեբեյական մշակույթը ներքեւի սանդղակներից բարձրացել, հասել է վեր՝ ոչ միայն երաժշտության մեջ, ամենուրեք այդպես է: Ասում են՝ հայերի մեծ մասի երաժշտական նախասիրություն - ճաշակը դա է՝ կիսաթուրքական, կիսաարաբական մեղեդիների անհասկանալի այդ կույտը, որ այսօր հնչեցվում է ամենուր: Սա այն եզակի դեպքերից է, երբ ափսոսանքով ես հիշում խորհրդային այն տարիները, երբ դպրոցներում աշակերտներին, ցածր դասարաններից սկսած, տրամադրում էին դասական երաժշտության, օպերային ներկայացումների աբոնեմենտներ՝ տարվա կտրվածքով: Այն ժամանակներում այդպիսին էր մշակութային պրոպագանդը, կրթությունը, այդպիսի ճաշակ էր սերմանվում՝ այդպիսի կրթություն էր տրվում՝ անհատի հոգեւոր- մշակութային աճին ուղղված: Արվեստի գնահատման չափանիշներն էին տարբեր, արժեքներն էին այլ, ներքեւից փորձում էին վերեւ բարձրացնել, եւ ոչ՝ հակառակը:**

**Ցավալին այն է նաեւ, որ սա տարածվում է օտար շրջանակներում նույնպես, մեր արտագաղթած որոշ հայրենակիցներ օտարին փորձում են հայ մշակույթը ճանաչելի դարձնել այսպիսի օրինակներով: Վերջերս Շվեյցարիայում բնակվող մի հայաստանցի, որից կիրթ անձնավորության տպավորություն եմ ստացել, խոսք բացեց հայ երգչի մասին, որի կատարումներից մեկը դարձել է շատ եվրոպացիների համար սիրելի: Երգի անգլերեն հատվածը ռեյփ ոճի մեջ է, հայերեն մասը՝ կլկլացնող ռաբիս է: Ասում էր, թե հպարտության զգացում է ունենում, երբ Բազելի կամ մեկ այլ եվրոպական քաղաքի փողոցներում, մեքենաներից Սպիտակցի Հայկոյի այս երգն է լսվում, որ Հայաստանը, հայ երգն ու երաժշտությունը նրա միջոցով ճանաչելի է դառնում: Երբ փորձում ես հակադարձել՝ ասելու, թե մենք հպարտանալու իսկապես արժանի արվեստագետներ ունենք դրսում,- անուններ՝ ինչու՝ ոչ. երիտասարդ կատարողներ՝ սոպրանո Անուշ Հովհաննիսյան՝ Լոնդոնի արքայական օպերային թատրոն, Սերգեյ Խաչատրյան, Տիգրան Համասյան եւ ուրիշներ, արագ ընդմիջվում է խոսքդ, թե նրանց լսում են քչերը, բայց, ա՛յ, այս մյուսին՝ հազարավորներ, նույնիսկ միլիոնավորներ... Եվ այս երաժշտության, այս երգերի միջոցով օտարների մոտ այն կարծիքն է ձեւավորվում, թե հայկականը հենց սա է: Սրանցից ու էլ չգիտես ինչերից ենթադրություն է արվում, որ մեր կենցաղը, վարք ու բարքը նման է մուսուլմաններին, նաեւ, որովհետեւ հայերը միշտ ապրել են պարսկա- թուրքա- արաբական մշակույթի, կյանքի հետ խառնված, նրանց հարեւանությամբ, եւ ահա այսպիսի երգերն էլ դրա վկայություններն են: Մի փոքր ավելի մեր պատմությունն իմացողին (վստահաբար՝ Հայոց եղեռնի շրջանակներում միայն, մանավանդ եթե այստեղից գնացած հայերի հետ մտերմության մեջ է) դժվար է լինում համոզել, թե որն է հայկական իսկական, մաքուր երաժշտությունը՝ ի՞նչ Կոմիտաս, ի՞նչ Եկմալյան, ի՞նչ Խաչատրյան...**

**Ռաբիսը տարերքի մեջ է այսօր, ռաբիսը իշխում է, ռաբիսը ամենուրեք է, ռաբիսը մտածողություն, կենսակերպ, աշխարհայացք է ձեւավորում: Էլ չգիտեմ՝ ե՞րբ ենք նորից մաքրվելու, վերակրթվելու, վերագտնելու ինքներս մեզ, գիտակցելու, ճանաչելու մեր մաքուր, զտարյուն մշակույթը, երաժշտությունը, գնալու դրա՛ հետքերով...**

AZG NEW MSHAKUITT.QXD 19/07/2017 20:35 Page 4



Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Անահիտ Աբադ. «Հայաստանում ֆիլմ նկարահանելը թե՛ դժվար է, թե՛ հաճելի»

**-Սիրելի Անահիտ, կինոյին մոտ կանգնած մարդիկ արդեն որոշ ժամանակ է՝ խոսում են Հայաստանում քո նկարահանած ֆիլմի մասին, որը դեռեւս էկրան չի բարձրացել: Ես դիտել եմ մի քանի կարճ հատված եւ պիտի ասեմ, որ սպասելիքները մեծ են: Ոչ միայն այն պատճառով, որ այն Արցախում է նկարահանվել եւ քաղաքական նշանակություն ունի, ոչ միայն այն բանի համար, որ մեր այսօրվա ցավերի մասին է, այլեւ քանի որ նկատեցի որակներ, որ մեր կինոյում հազվադեպ են: Խնդրում եմ պատմես՝ ինչպես սկսվեց նախագիծը եւ հիմա ո՛ր փուլում է:**

-Շատ պարտավորեցնող, կասեի՝ վախեցնող է ասածդ. հուսով եմ՝ կարդարանան հանդիսատեսի սպասելիքները: Ինձ համար լավ կինո ստեղծելը նպատակ է, ցանկություն է, կյանք է եւ իմաստ է: Փորձել եմ, որ այն լինի անկեղծ, ինչպես որ զգացել եմ եւ ինչպես որ դրսեւորվել է իմ տրամաբանական կամ զգացական աշխարհում: Ֆիլմը ստեղծելիս ո՛չ սկզբում, ո՛չ հետո քաղաքական նպատակ կամ ենթատեքստ չի եղել: Գաղափարը ծնվել է դեռ 1999 թվականին, երբ առաջին անգամ ճամփորդում էի Արցախում: Նկարահանման ընթացքում, իհարկե, շատ բան փոխվեց, բայց էությունը մնաց նույնը: Սկզբնական անունը «Քարվաճառ» էր, բայց հետո դարձրի «Եվա»: Այն դրամա է: Հերոսուհին ստիպված է լինում Երեւանից տեղափոխվել Արցախ՝ սահմանամերձ գյուղ: Մնացածը՝ ֆիլմում:





**-Ո՞րը եղավ ֆիլմի գլխավոր մարտահրավերը:**

-Ես ամեն բան արեցի, որ ֆիլմը բառի բուն իմաստով համահայկական լինի: Ֆիլմն ամբողջությամբ հայկական պատմություն է, լեզուն հայերեն է, Արցախի բարբառով, դերասանական կազմն ամբողջովին հայեր են, իսկ կինոխցիկի թիկունքը, այսինքն՝ տեխնիկական կողմը, Իրանից է: Երեք տարի առաջ, Իրանում ֆիլմի նկարահանման արտոնությունը ստանալուց հետո դիմեցինք Հայաստանի մշակույթի նախարարությանը եւ Ազգային կինոկենտրոնին: Կինոկենտրոնը, գնահատելով հանդերձ սցենարը, պատասխանեց, որ բյուջե չունի: Դիմեցի անգամ անհատ ձեռներեցների, սակայն ապարդյուն: Բախտի բերմամբ թե պատահմամբ, բարի կամեցողների միջնորդությամբ հանդիպեցի տիկին Ռիտա Սարգսյանին, առանց որի վերաբերմունքի այս նախագիծը չէր իրականանա: Այդպիսով, ապահովվեց հայկական կողմի մասնակցությունը ընդհանուր բյուջեի մեկ հինգերորդ չափով: Կինոնկարն ամբողջությամբ նկարահանեցինք Արցախում՝ վայելելով ոլորտի պատասխանատուների ու տեղի ժողովրդի աջակցությունը եւ ջերմ, պատասխանատու վերաբերմունքը: Սակայն հաճախ նաեւ տուժել ենք անտարբերությունից, անպատասխանատվությունից, հայկական կողմի ղեկավարության անհարկի ձգձգումներից, երբեմն էլ դժվարություններ էին լինում եռակողմ գործնական հարաբերություններում: Բայց ինչեւէ, որոշ տառապանքներից հետո ֆիլմն արդեն ամբողջապես պատրաստ է, Կաննի շուկայում արդեն կազմակերպվել է պրոֆեսիոնալ ցուցադրությունը, որի ընթացքում եղան առաջարկներ տարբեր փառատոներից, սակայն համաշխարհային առաջնախաղը դեռ չի եղել: Ցանկանում եմ, որ այն տեղի ունենա Երեւանում, արդեն այդ նպատակով եմ եկել, բայց, ցավոք, առայժմ այս գործը գլուխ չի գալիս, անգամ՝ փակ ցուցադրությունն է անհնար կազմակերպել՝ ինձ համար անհասկանալի պատճառներով: Բայց հուսով եմ, որ աշնանը կցուցադրենք Հայաստանում եւ Իրանում, որից հետո միայն՝ ուրիշ երկրներում:

**-Իրանական կողմի համար խնդիր չէ՞ր, որ ֆիլմը նկարահանվում է միջազգայնորեն չճանաչված պետությունում:**

-Ո՛չ, քանի որ ո՛չ ֆիլմի թեման էր անմիջականորեն առնչվում քաղաքական խնդրին, ո՛չ էլ կինոն ընդհանրապես նման սահմանափակումներ ունի: Այսօր աշխարհում շատ վայրերում քաղաքական կամ ռազմական ճգնաժամ գոյություն ունի (ցավոք), որտեղ, սակայն, ֆիլմեր են նկարահանվում: Մեր կինոնկարի թեման համամարդկային է, որ աշխարհի որեւիցե տեղ կարող էր կատարվել. դրա հետ մեկտեղ անխուսափելիորեն ունի հայկական նկարագիր, էություն եւ մշակույթ:

**-Իմ դիտած դրվագներում հատկապես տպավորիչ է դերասանուհի Նարինե Գրիգորյանը...**

-Այո, նա գլխավոր դերակատարուհին է: Ընդհանրապես, ունեցանք դերասանների լավ կազմ, հանձինս Մարջան Ավետիսյանի, Ռոզի Ավետիսովայի, Շանթ Հովհաննիսյանի, Տիգրան Դավթյանի, Սերգեյ Թովմասյանի, Մարատ Դավթյանի, անգամ՝ ոչ պրոֆեսիոնալների:

**-Արտասահմանցու համար դժվար չէ՞ ֆիլմ նկարահանել կինոյի մասին օրենք չունեցող Հայաստանում:**

-Ինձ համար՝ որպես հայի եւ կինոգործչի, Հայաստանում ֆիլմ նկարահանելը թե՛ դժվար է, թե՛ հաճելի: 1992-ից պարբերաբար կինոնկարահանումների եմ մասնակցում Հայաստանում ու միշտ սիրել եմ այստեղ աշխատելը: Նույնիսկ հիմա, երբ այնքան տառապեցի «Եվայի» վրա, հաջորդ նախագիծս կրկին մտածում եմ Հայաստանում իրականացնել: Չգիտեմ, սա խենթություն է, թե ինչ է, բայց մի բան կա՝ այստեղի ժողովրդի էության մեջ, ընդերքում մի տեսակ հարգանք, գուրգուրանք կա արվեստի հանդեպ: Դա մղում ու քաջալերում է միշտ գալ այստեղ, միասին ճամփա կտրել ու մի բան կերտել:

**-Դու կանգնած ես կինոյի ասպարեզում հայ-իրանական համագործակցության ակունքներում, եթե չեմ սխալվում՝ սկսած Հայաստանում նկարահանված «Տավարիշ» ֆիլմից...**

-«Տավարիշի» նկարահանումներին ներկա չեմ եղել, միայն մասնակցել եմ կազմակերպչական գործին, իսկ ավելի ուշ իմ գործուն մասնակցությամբ Հայաստանում նկարվեց իրանական երկրորդ ֆիլմը՝ Դավուդ Նեժադի «Զինաթափումը»: Դրան հետեւել են մի քանի լիամետրաժ գեղարվեստական ֆիլմեր, սերիալներ, վավերագրական նախագծեր, որոնց վերնագրերը նույնիսկ չեմ հիշում: Դրանցում աշխատել եմ որպես երկրորդ ռեժիսոր, տնօրեն եւ արտադրիչ, իսկ ինքնուրույն 1999-ին նկարահանել եմ «Արցախի պատմական հուշարձանները»՝ լուսահոգի ճարտարապետ Արմեն Հախնազարյանի համագործակցությամբ: Առաջին անգամ էր, երբ վավերագրական կինոյում արձանագրվում էին Արցախի ամբողջական պատմական հուշարձանները: Դա թե՛ արխիվային նյութ էր, թե՛ փաստագրություն: Հետագայում իմ նկարահանած կադրերը տեսնում եմ հայկական տարբեր հեռուստաալիքների հաղորդումներում:

**-Իսկ Իրանում արդեն իսկ բավական փորձ ունեիր կինոյում...**

-Բացի տարբեր մեծ ու փոքր նախագծերից՝ նկարահանել էի մի շարք վավերագրական ու կարճամետրաժ ֆիլմեր, հիմնականում՝ հայկական թեմայով՝ «Իմ մանկապարտեզը», «Իմ մանկությունը», «Իրանահայերի դերն իրանական կինոյի պատմության մեջ», «Հին Ջուղան եւ ջուղայեցիները», «Իրանահայությունը» 26 րոպեանոց իրանա-բրիտանական արտադրությունը: Երբ մի խումբ իրանահայ երիտասարդներ բարձրացան Արարատի գագաթն ու այնտեղից նկարահանված նյութ բերեցին, հաճույքն ունեցա մոնտաժել, եւ արդյունքը եղավ «Արարատի գագաթի նվաճումը» ֆիլմը:

**-Վերադառնալով «Եվային»՝ գուցե ոմանց կհետաքրքրի, թե Իրանն ի՞նչ մասնավոր հետաքրքրություն ունի՝ նկարահանելով ամբողջովին հայերեն եւ հայկական թեմայով մի կինոնկար:**

-Ինչպես Ամերիկան է ֆիլմեր ստեղծում Չինաստանում կամ Ֆրանսիան՝ Հնդկաստանում, այնպես էլ Իրանը կարող է որեւիցե երկրում կինո նկարահանել: Իրանի կինոն հզոր է, աշխարհում իր յուրահատուկ տեղն ունի եւ թեւակոխել է մի հանգրվան, որ ուզում է զարկ տալ համատեղ արտադրությունների: Եվ ո՞ւմ հետ դա կարող է ավելի լավ անել, քան իր հարեւան երկրի, մանավանդ որ ինձ նման համառ մեկը գործի մեջ մտավ: Իրանն այնքան կարեւորում է համագործակցությունը Հայաստանի հետ, որ նրա բարձրագույն կինողեկավարությունը պատրաստ է գալ, մասնակցել այստեղի փակ դիտմանը, եւ տրամադրություն կա Իրան-Հայաստան կինոյի դաշտում համագործակցության պայմանագիր ստորագրելուն: Հուսանք, որ մեր մշակութային ղեկավարները կօգտվեն այդ տրամադրությունից եւ մի նոր կարեւոր գործընթացի սկիզբը կդրվի:

# 4000 դոլար Արցախի երաժշտական դպրոցների համար

**Նյու Յորքի «Յամահա դաշնամուրային սալոնում» հունիսի 14-ին «Ի՞նչ ես արել Արցախի համար» ընդհանուր խորագրի ներքո կայացած բարեգործական համերգի ընթացքում մոտ 4,000 դոլար է հավաքվել Արցախի երաժշտական դպրոցների համար երաժշտական գործիքներ գնելու նպատակով, տեղեկացնում է ՀԲԸՄ-ի լրատվական գրասենյակը:**

**ՀԲԸՄ-ի կատարողական արվեստի բաժանմունքի կազմակերպած համերգին իրենց մասնակցությունն են բերել մեցոսոպրանո Սոլանժ Մերտինյանը, ջութակահար Սեմի Մերտինյանը եւ կատարողական արվեստի բաժանմունքի տնօրեն, դաշնակահար Հայկ Արսենյանը: Ծրագրում բացի հայկական ստեղծագործություններից հնչել են նաեւ արգենտինյան եւ աֆրո-կուբայական մեղեդիներ ու պարեղանակներ:**



*Ձախից աջ՝ ջութակահար Սեմի Մերտինյան, դաշնակահար Հայկ Արսենյան եւ մեցոսոպրանո Սոլանժ Մերտինյան*

**Համերգը մաս է կազմել ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնած բարեգործական միջոցառումների շարքին, որը մայիսին մեկնարկել է Բուենոս Այրեսում տեղի ՀԲԸՄ-ի փոխնախագահ Անտոնիո Սարաֆյանի եւ գեղարվեստական ղեկավար, դուդուկահար Գագիկ Գասպարյանի ջանքերով: Համերգներ տեղի են ունեցել արդեն Արգենտինայի 3 քաղաքներում, որոնցից ստացված հասույթով դաշնամուրներ են գնվել երաժշտական 3 դպրոցների համար:**

**Նախատեսված են համերգներ Սան Պաուլուում հուլիսի 27-ին եւ Երեւանում հառաջիկա սեպտեմբերի 22-ին, ընկերակցությամբ ազգային ժողգործիքների եւ պարի պետական համույթների: Երեւանում համերգային շաբաթի (սեպտ. 18-23) ընթացքում տեղի է ունենալու նաեւ արվեստի գործերի ցուցահանդես Երեւանի քաղաքապետարանում:**

**Համերգաշարքի նպատակն է Արցախի երաժշտական դպրոցների համար գնել ավելի քան 250 երաժշտական գործիքներ:**

**«Այս ծրագրին մասնակցելը անձամբ ինձ համար մեծ նշանակություն ունի: Նման համերգները հիշեցնում են մեզ, թե ինչքան բախտավոր պետք է զգանք, որ կարողանում ենք մեր երաժշտությունն ու ջանքերը օգտագործել ավելի լավ դարձնելու համար մեր հասարակությունը, մեր աշխարհը: Համերգները նաեւ որոշակի երախտագիտական արտահայտություններ են ուղղված բոլոր նրանց, ովքեր այսքան ժամանակ վառ են պահել մեր մշակույթը, մեր ինքնությունը», նշել է այս առթիվ Սեմի Մերտինյանը:**

Հ. Ծ.

Ներդիրը հրատարակված է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: